ՀԱՅԱՍՏԱՆ

#8(73)
2021

ереван / yerevan

ԿՐԹՈՒԹՅՈՒՆԸ ՈՐՊԵՍ ՈՒՂԻՂ ՃԱՆԱՊԱՐՀ

«Անտարեսը»

► Ստեղծում է
ԿՐԹԱԿԱՆ ՈՒ ԳԻՏԱԿԱՆ

- գրքեր
- ձեռնարկներ
- դասագրքեր

► Ձգտում է ձևավորել
ԻՆՏԵԼԵԿՏՈՒԱԼ

- մթնոլորտ
- մրցակցություն
- հասարակություն

ԻՆՏԵԼԵԿՏՈՒԱԼ մթնոլորտը ձևավորվում է այն մարդկանց միջոցով, որոնք կարևորում ու ձեռք են բերում ԿՐԹԱԿԱՆ ՈՒ ԳԻՏԱԿԱՆ գրքեր:
Ձևավորի՛ր մթնոլորտ:

Երևան 0009, Մաշտոցի 50ա/1
Հեռ.՝ +(374 10) 58 10 59, 56 15 26
antares@antares.am / www.antares.am

Վահան Սարգսյան

«Դոմժուռ», սովորական օր, 2003 թվական

Ժամանակին, ինչպես հայտնի է, խոտն ավելի կանաչ էր, կինքը՝ ավելի կապույտ, ջուրը՝ զգալիորեն ավելի թաց, մենք՝ անհամեմատ ավելի ջահել ու ջիվան, իսկ ռոքը՝ իսկական: Հազարամյակ էր փոխվում, թվում էր՝ հեսա-հեսա ու աշխարհը կփոխվի և ամեն ինչ լավ կլինի: Իհարկե, աշխարհը չէր փոխվելու օրացույցի հետ, երրորդ հազարամյակն էլ առանձնապես չէր տարբերվում նախորդի վերջին տարիներից: Բայց կարևորը ոչ թե իրականությունն էր, այլ սպասումը:

Ու ժամանակները երանելի էին, քանի որ Երիտասարդականի զապիսնոցներից ընդամենը մի 500 դրամանոց կասետ առնելով կարելի էր քեզ աշխարհի երջանիկը զգալ: Որովհետև ավելի լավ անգլերեն իմացող ընկերդ կարող էր լսելով դուրս գրել սիրված երգի բառերը և տար քեզ արտագրելու, դու էլ քեզ աշխարհի պոլիգլոտը զգայիր: Որովհետև ռեպի ու պապսայի փոխարեն դասական (ու ոչ դասական) ռոքնռոլ լսելով քեզ կարող էիր «ուրիշ» զգալ: Որովհետև քո համար հրաշք էր ուղղակի քո նման ռոքով տարված մեկին հանդիպելը: Այո՛, երանելի ժամանակներ էին, քանի որ չնայած ինտերնետի մասին ծանոթի ծանոթից էինք լսել, մեկ է՝ գիտեինք, թե որտեղ ինչ էր կատարվում. Ժիրոն լռվում էր Համալսարանի աստիճաններին, իմանում էր Չոռտից, ես էլ՝ իրենից: Պոլիտեխնիկի Զելյոնիում ջահել Բամբիռենք են լինելու, օրինակ, կամ Դոմժուռում խառը ֆեստ ա, կամ Տիկնիկայինում Լենոնի ծնունդն են նշելու, կամ Ստոպում Ոստանն ա նվագելու, ու էս անգամ քավոներ չեն, այլ իրանց երգերը («Քաշվա՛նք, մեզ տանում ա, տղերք...»):

Երանելի ժամանակներ, երբ Վերնիսաժից առած Լենոնի նկարով շապիկն էնքան խնամքով էիր հագնում, որ տարիներով գոյատևում էր: Երկար մազերով տղերքը խիզախության մարմնավորում էին թվում, իսկ ականջ ծակածները՝ այլմոլորակայիններ: Այդ ժամանակներում էր հնարավոր հինգ հարյուր դրամը գրպանում մտնել Ջինսնոց, մի հատ զարեջուր խմել, մի հատ սիգարետ մուֆթել, զարմացած նայել աղջիկներին, որոնց չես տեսնի քո դպրոցում ու քո համալսարանում:

Էդ ժամանակ, իհարկե, մի քիչ էլ դժբախտ էինք: Մտածում էինք՝ սաղ կյանքը պայքար ա ու մենք աշխարհի սկզբունքայինն ու ազատատենչն ենք: Հետո պարզվեց՝ ուղղակի ջահել էինք, ինչ-որ հենակետեր էին պետք. արտաքինով մոտ մարդիկ, աղմկոտ երաժշտություն, տեղեր, որտեղ ոչ բոլորն էին գալիս, կուռքեր: Երանելի ժամանակները անցան, համարյա համակերպվեցիր, որ ամեն ինչ չէր էդքան սիրուն, մեկ-մեկ էլ քո ջահելական մաքսիմալիզմը պարզապես զավեշտ էր՝ քո էսօրվա հայացքով:

Բայց եթե հիմա՝ քսան տարի անց, հանկարծ լսում ես Ոստան, կամ Ռոլանդենց էն հները, կամ պահարաններից հանում ես փոշոտ, վաղուց չօգտագործվող կասետները, կամ տեսնում ես փողոցում հանգիստ քայլող դեռահասներին՝ փողոցն անցնող բիթլներով շապիկը հագին, մտածում ես՝ չէ, էն ժամանակ իրոք ջուրն ավելի թաց էր, իսկ ռոքը՝ ավելի իսկական: Դե մենք էլ ավելի մենք էինք երևի, եսիմ:

Գլխավոր խմբագիր
Արտավազդ Եղիազարյան

ՔԱՂԱՔԱՄԵՋ

04 Խառը
Ամսվա ամփոփում
Նոր գրքեր, նոր նստավայրեր ու Երևանցի կաֆեսիսկների բարոյական մշտրումներ:

06 Նախատոնական
Ամանորյա հրաշքի այլընտրանք
EasyPay-ն առաջարկում է որպես կոնական հրաշք օգնել ծառեր տնկել:

08 Հայրենական
«Արտադրված է Հայաստանում»
Ինչո՞ւ է պետք ազակցել հայրենական արտադրողին և ի՞նչ է իրենից ներկայացնում «Արտադրված է Հայաստանում» ծրագիրը:

10 Ֆեշն
Երևանի սիրուն Udivila
Եվենայի ու Մարիամի համատեղ ֆեշն ցեռնարկությունը՝ հարմար ու սիրուն հագուստ:

12 Կինո
«Բալդր». հայ-ուկրաինական ֆենթըզի
Ինչո՞ւ է ուկրաինայի ռեժիսորն ուզում Հայաստանում նկարահանումներ անել:

14 Արվեստ
Առատության երկիր
Երևանը՝ շվեյցարացի նկարիչ Մարսել Մայերի լինոփորագրություններում:

ՀԱՅՈՑ ՌՈՔ

20 Սեփական փորձ
«Մեզ թվում էր, թե ազատություն էինք ստեղծում»
Երևանի ականավոր ռոքեր Վարդան «Չոուրի» վերադարձն իր բուռն ու ռոքաշատ զահերությունն:

24 Ֆեստ
ՆՓԱԿ-ի ռոք ալիքը
Սևադա Պետրոսյանը պատմում է, թե ինչից սկսվեց և դեպի ուր վարգայան ՆՓԱԿ-ի լեգենդար ռոք միզոյատումները:

28 Առաջամարտիկ
Շիշավորված է Հայաստանում
Ինչպե՞ս 1994 թվականին Երևանյան ՆԱՍՈ-ն արդասահմանյան լեյբլի հետ ֆայնագրեց իր միակ վինիլ ալբոմը:

30 Ռոքնֆոտո
...Ու ռոք
21-րդ դարի երևանյան ռոքը Վահան Սրբեփանյանի արխիվային կադրերում:

34 Ակումբ
STOP տալ չկա՛
Ինչպես STOP ակումբը դարձավ հայկական ռոքի կարևորագույն շարժիչներից մեկը (ու դեռ շարունակում է):

38 Իմ Երևան
Մհեր Մանուկյան
Վանաֆորյան «Լավ էլի» խմբի առաջատարը Երևանը երաժշտությամբ գրավելու մասին:

40 Հարվածային
«Կայֆ էր, որովհետև սիրում էի նվագել՝ կապ չուներ, թե ում հետ»
Ինչպես թմբկահար Նորյուն Բոբիկյանը 15 տարում նվագեց հայկական 10 ռոք խմբերում:

42 Բեքսթեյջ
Կաթիլային համակարգ
Մի օր հայկական ինդի բենդի փորձատեղում:

46 Մեր օրեր
Armenia in Rock
Ինչով էր կարևոր 2019-ին Ապարանի հրապարակում կայացած երկօրյա ռոք ֆեստը. բացատրում է կազմակերպիչը:

48 Մետալ
Ժեշտանչի
Ինչպես Արսեն «Փինհեդ» Հակոբյանը հիմնեց Zhesht Events-ը ու Երևանում կազմակերպեց դարակազմիկ մետալ իվենթներ:

52 Այնտեղ
Ժամանակները փոխվում են, իսկ մենք ժպտում ենք
Ռոքն իբրև բողոք ու պայքար՝ աշխարհում ու Հայաստանում:

58 Սփյուռք
SOADիստները. «Մեկ էլ դուրս եկավ Սերժը...»
Երևանցիներ, ովքեր բոլորից շուտ բայահայրենին ու սիրահարվեցին հեռավոր Լոսում աղմկող System of a Down-ենց:

62 Լայվ
Սա ռոք համերգ չէ, սա վրեժ է
Ինչպես հնարավոր եղավ Սիսթեմի 2015-ի լեգենդար համերգը Հանրապետության հրապարակում:

68 Կադրերի բաժին
Gaudeamus փառատոն, 1994-96թթ.
Մի ռոքոտ դրվագ Երևանի պատմությունից:

Շապիկ՝
Դավիթ Խոջամիրյան

ԵՐԵՎԱՆ #8 (73) | 2021

Գլխավոր խմբագիր՝
ԱՐՏԱՎԱԶԴ ԵՂԻԱԶԱՐՅԱՆ

Արտ-տնօրեն՝
ՆՈՆԱ ԻՍԱՋԱՆՅԱՆ

Թողարկող խմբագիր՝
ԱՐՏԱԿ ՍԱՐԳՍՅԱՆ

Գրական խմբագիր՝
ԱՐՔՄԵՆԻԿ ՆԻԿՈՂՈՍՅԱՆ

Սրբագրիչ՝
ՀԱՍՄԻԿ ՊԱՊԻԿՅԱՆ

Ֆոտոմշակում՝
ԱՐՄԵՆ ՀԱՅՐԱՊԵՏՅԱՆ

Էջադրում՝
ԱՐՏԱԿ ՍԱՐԳՍՅԱՆ

Հեղինակներ՝
Մարգարիտ Միրզոյան, Հասմիկ Բարխուդարյան, Արտաշես Արշակյան, Լենա Գևորգյան, Շուշանիկ Փափազյան, Միքայել Զոլյան, Արեգ Դավթյան

Լուսանկարներ և պատկերազարդումներ՝
Հարություն Մալխասյան, Վահան Արծրունու արխիվ, Zhesht Events, Vibrographus, ՆՓԱԿ արխիվ / Վռամ Հակոբյան, PAN Photo / Վահան Ստեփանյան, Տիգրան Մեհրաբյան, Հրանտ Խաչատրյան, Կարո Սահակյան

Տառատեսակ
Arek Armenian by Rosetta

Թողարկման խորհրդատուներ՝
Արեգ Առաքելյան, Էդգար Բարսեղյան

Հատուկ շնորհակալություն՝
Զոն Լենոնին

«Քաղաքի ամսագիր» ՍՊԸ

Տնօրեն՝
Արտավազդ Եղիազարյան

Հայաստանի Հանրապետություն, 0014, Երևան, Պարույր Սևակ 8
Էլ. փոստ՝ evnmag@gmail.com
Առցանց՝ evnmag.com

facebook.com/YerevanCityMagazine

instagram.com/evnmag

© 2011-2021 **«ԵՐԵՎԱՆ»**

Գովազդային նյութերի բովանդակության համար խմբագրությունը պատասխանատվություն չի կրում:

«ԵՐԵՎԱՆ» ապրանքային նշանի իրավատեր է հանդիսանում Արտավազդ Եղիազարյանը:

Համարը տպագրության է հանձնվել՝ 03.12.2021

Տպագրված է Անտարես տպագրատանը, 0009, Երևան, Մաշտոցի 50ա/1

Տպաքանակ՝ 5000 օրինակ

Ամսագիրը ղեկավարվում է «Զանգվածային լրատվության մասին» և «Գովազդի մասին» ՀՀ գործող օրենսդրությամբ:

Ամսագրի նյութերը վերատպվում են միայն իրավատիրոջ գրավոր համաձայնությամբ: «ԵՐԵՎԱՆ» ամսագրին հղում կատարելը պարտադիր է:

«ԵՐԵՎԱՆ» ամսագրի ստեղծման գաղափարը պատկանում է «Երևան Փրոդաքշն» ՓԲԸ-ին:

EUROPEAN ENDOWMENT FOR DEMOCRACY

Ստեղծվում է ժողովրդավարության եվրոպական հիմնադրամի աջակցությամբ

Ստեղծվում է ՀՀ ԱԳՄՍ նախարարության աջակցությամբ

ՎԻՇԱՊՈՒԲԼՈՒ ԳԱՂՏՆԻՔԸ



Նոր հայկական ֆենթըզի վեպ՝ մեր կողքին ապրող վաղնջական առասպելական էակների մասին

Երևանի բոլոր գրախանութներում

գինը՝ 4990 դրամ

Զրից

Երևանցի տաքսիստների բարձրաձայն մտորումները տարբեր բաների մասին:

***

Տղես 30 տարեկան ա ու եթե սենց գնաց, տունն ա մնալու: Ես ու կնիկս կարգին աղջիկ ենք ման գալիս, որ պսակենք պրծնենք:

***

Տաքսի-բաքսի, լավ ասի, չէ՞: Հա, էս Բաքսին տան Բաքսիից լավ ա, լուրջ եմ ասում: Արա էլի ստեղ պոռբկա ա՞: Չէ, քուր ջան, դու էսօր տուն չհասար, սպասի էս բաքսին բարձրացնեմ չմրսես: Հահահահահ, Բաքսի, ասա, որ լավ ասի:

***

22 տարեկան եք, հա՞... Ամուսնացած ե՞ք բա... Լավ չի, ես քո տարիքում երկու երեխա ունեի արդեն: Հլը ջահել եք, հեսա 3 տարուց, որ 25 դարձաք, կզգաք, որ կամաց-կամաց ոչ մեկի չեք հավանում: Ձեր լավի համար եմ ասում, ինձ ինչ կա: Որ հասնենք, ինձ աստղիկ կդնեք հա, նոր եմ էս գործի մեջ:

***

Գժվանք էս պրոբկեքից, հերիք չի՞ ճամփեքը փակեք, այ մարդ: Էս ժողովուրդը լրիվ արժանի ա էս վիճակին: Մարդու գժվելն ա գալիս:

***

Որ նստեցիր, հոտ չկա՞ր: Մի քիչ առաջ մի հատ ճարտարապետ էր նստել, էդ իրա էլեկտրոնային սիգարետը միացրեց՝ շան հոտ եկավ: Դե ես էլ եմ ճարտարապետ, դրա համար բան չասեցի, բայց հետո սաղ ճանապարհը դուռը բաց եմ քշել:

Ինչ անել

Big Christmas Market
Դեկտեմբերի 22-26 | Մարտահամերգային համալիր
Սուրբծննդյան տոնավաճառներն արդեն սովորական երևույթ են դարձել Երևանում: Այս տարի մի քանի բացօթյա միջոցառումներից բացի նախատեսվում է աննախադեպ խոշոր հավաք Մարզահամերգային համալիրում: 5 օրում իրենց ամանորյա առաջարկները կներկայացնի 200-ից ավելի կազմակերպություն: Լավ առիթ է վերջնականացնելու տոնական գնումները, մասնակցելու զանազան խաղարկությունների և պարզապես լավ ժամանակ անցկացնել:

Ամանորյա տոնավաճառ
Դեկտեմբերի 25, 26 | Jellyfish Yerevan
Նոր տարվա նվերներ գնելու ևս մի լավ հնարավորություն նրանց համար, ովքեր դեռ չեն կողմնորոշվել: Jellyfish-ում անցկացվելիք տոնավաճառին կներկայանան տարբերվող ապրանքներով հայտնի մի շարք բրենդեր՝ Garage Vinyl Store, Kupikazu, Tumo Studios, ImeQone և այլն:

Նոր նստավայր

Ոչ լույս ոչ մութ, Սարյան 16, 7-րդ ավտոտնակ
«Վայրապար» տարածքի և «Օրոր» դիզայներական խանութի հեղինակները շարունակում են վերաիմաստավորել Երևանի ավտոտնակները: Հերթականը՝ Սարյան 16-ի բակի 7-րդը, վերածվել է «Ո՛չ լույս, ո՛չ մութ» սրճարանի: Այստեղ կարելի է խմել ֆիրմային սուրճեր (ամեն երկուշաբթի բացվելու է մեկ կամ երկու տուփի միկրոլոտ՝ բարձրորակ սուրճ, որը վաճառվելու է բաժակով շաբաթվա ընթացքում), ինչպես նաև գնել ու տանել տուն: Ընդ որում, վաճառքը կլինի նաև քլինսքին ձևաչափով, երբ փաթեթի պարունակությունը չի նշվում (բայց երաշխավորում են 100 տոկոսանոց արաբիկա): Ավտոտնակ-սրճարանն աշխատում է առավոտվա 9-ից մինչև երեկոյան 8-ը, 12:00-13:30՝ տեխնիկական ընդմիջում:

Gua Bao, Պուշկին 40
Ասիական խոհանոցի ողջ բազմազանությունը՝ մի տեղում: Gua Bao-ի մենյուն ներառում է կորեական, ճապոնական, վիետնամական և այլ ծագման ուտեստներ՝ վոկ, գյոզա, բա, տակոյակի և էլի շատ բան: Նստավայրի այցեքարտը համանուն ուտեստ գուա բաոն է՝ «ասիական համբուրգերը», որը պատրաստում են շոգեխաշած հացից, որի ներսում մսային միջուկ է:

DIY Fodoorist, Արովյան 26
Նստավայրն արդեն որոշ ժամանակ գործում էր Դիլիջանում (ինչպես նաև մատուցում իր պիցցաները մի քանի երաժշտական փառատոների այցելուներին), բայց այժմ տեղափոխվել է Երևան: DIY Foodoorist-ը մասնագիտացած է հյուսիսիտալական պիցցաների վրա՝ մարգարիտա, ռեջինա, պեպերոնի և այլն, թեպետ վերաբացումից հետո կարող են լինել փոփոխություններ:

Նոր հանրային վայր

Սքեյթ-պարկ և շների այգի Օղակաձև զբոսայգում

Նոյեմբերի 15-ին Օղակաձև զբոսայգու վեցերորդ հատվածում բացվեց սքեյթ-պարկը: Այս տարածքի բարեկարգումը սկսվել էր դեռ երկու տարի առաջ: Նախ, ավելի քան 12 հեկտար մակերեսը ազատվեց ապօրինի շինություններից ու կանաչապատվեց, թարմացվեցին ծառերը, տնկվեց 8600 ծաղիկ, հիմնվեց ավելի քան 4400 քմ սիզամարգ, անցկացվեց նոր լուսավորության ցանց, ներդրվեց ոռոգման նոր համակարգ՝ 5450 գծամետր խողովակներով, սալիկապատվեց այգին նոր մոտեցմամբ և առանձնացվեցին հեծանվուղիներ:

Հայաստանում առաջին սքեյթ-պարկը կառուցվել է Ուկրաինայի հայերի միության ֆինանսական աջակցությամբ: Դրա տարածքում կա ամֆիթատրոն՝ հանդիսատեսի համար, բուժկետ և սանհանգույց: Տարածքում տեղադրված են ոճային հովհարներ՝ արևային պանելներով, որոնք ապահովում են պարկի գիշերային լուսավորությունը: Շների պարկը Երևանի բոլոր 12 վարչական շրջաններում կառուցվելիք նմանատիպ զբոսայգիներից առաջինն է, որտեղ կենդանասերները կարող են գալ և ժամանակ անցկացնել: Զբոսայգում կան կենդանիների համար վարժասարքեր, առանձնացված են հատվածներ մեծ և փոքր շների համար:

Նոր գիրք

Այզեք Ասիմով, «Ակադեմիա», Անդրարես

20-րդ դարի խոշորագույն ֆանտաստ ամենահայտնի գործերից մեկը վերջապես լույս է տեսնում հայերեն՝ Apple TV-ի սերիալային էկրանավորման հետ զուգահեռ: «Ակադեմիա» (օրիգինալ անվանումը՝ Foundation) եռապատումի առաջին մասի դեպքերը ծավալվում են հեռավոր ապագայում: Մաթեմատիկոս, հոգեպատմիչ Հարի Սելդոնը կանխատեսում է Գալակտիկական Կայսրության մոտալուտ վախճանն ու այդ արհավիրքի հետևանքները մեղմելու համար առաջարկում է ստեղծել Ակադեմիան, որը պիտի դառնա նոր կայսրության ձևավորման հիմքը: Սակայն դրան հասնելու համար պետք է հաղթահարել բազմաթիվ ճգնաժամեր՝ կայսրությունները հեշտ չեն վերականգնվում:



Վարդան Պետրոսյան, «Սկիզբ», Զանգակ

Հայաստանի ամենահայտնի թատերական գործիչը ներկայանում է նոր դերով. «Զանգակ» հրատարակչությունում լույս է տեսել Վարդան Պետրոսյանի առաջին գիրքը: «Սկիզբը» հիմնված է Պետրոսյանի սեփական փորձի վրա (համավարակի պատճառով ինքնամեկուսացմանը վերաբերող հատվածները վերցված են հեղինակի օրագրից), բայց կարդացվում է իբրև լիարժեք ինքնակենսագրական վեպ, որտեղ խոսվում է կալանքի, բանտարկության, դատավարության, հետո էլ ինքնամեկուսացման մասին: Այս ամենը, իհարկե, Պետրոսյանի դառը,բայց լավատես ոճով՝ համեմված հեղինակային նկարազարդումներով:

Հովիկ Չարխչյան, «Չարենց և Արմենուհի. Սիրախաղ կրակի հետ», Անդրարես

Հայ նոն ֆիքշնի փաստացի միակ հավատարիմ ներկայացուցիչը շարունակում է փորփրել Եղիշե Չարենցի անցյալը: Մի քանի տարի առաջ Չարխչյանն ուսումնասիրել էր չարաբաստիկ կրակոցի պատմությունը (որից հետո բանաստեղծը կալանավորվեց), իսկ հիմա ներկայացնում է Չարենցի և բանաստեղծուհի Արմենուհի Տիգրանյանի սիրո պատմությունը՝ հիմնվելով նորահայտ վավերագրերի ու մինչ օրս անհայտ փաստերի վրա:

Վանո Սիրադեղյան, Դուռը

Վանո Սիրադեղյանի գրականությունը դժվար է առանձնացնել իր հասարակական ու քաղաքական գործունեությունից, այդտեղից էլ նրա անձի շուրջ ծավալվող բուռն քննարկումները նույնիսկ մահից հետո: Այդուհանդերձ, թերևս փաստ է այն, որ Վանոն նախորդ դարավերջի ամենատաղանդավոր և ընթերցված-սիրված արձակագիրներից մեկն էր: Արձակագրի 75-ամյակին ընդառաջ պատրաստված, բայց մահվան հետ համընկած «Դուռը» ժողովածուն ամփոփում է հեղինակի տարբեր գրքերում («Կիրակի», «Ճանը լույս», «Շատ չհամարվի», «Ձեռքդ ետ տար ցավի վրայից», «Երկիր: Ցպահանջ») տեղ գտած պատմվածքները՝ դառնալով նրա գեղարվեստական արձակի համավահավաք ժողովածու: Սա կարևոր հրատարակություն է, անկախ ընթերցողի՝ նրա անձի նկատմամբ ունեցած վերաբերմունքի:

Ամանորյա հրաշքի այլընտրանք

EasyPay-ն առաջարկում է միավորվել ու համատեղ ուժերով իրականություն դարձնել ամանորյա այլընտրանքային հրաշքը: ԵՐԵՎԱՆը պարզել է ընկերության մարքեթինգի բաժնի ղեկավար Տիգրան Պարսեղյանից, թե ինչպես:

1 QR վճարում, 1 նոր ծառ

«Իզի Փեյ» ՍՊԸ-ն վերահսկվում է ՀՀ ԿԲ կողմից:
(011) 261261 | easypay.am

Ամեն ինչ պարզ է

«Ամանորյա հրաշքը ծառ կտրելու մեջ չէ»,– պնդում է EasyPay-ը՝ հակադրվելով Հայաստանում տարիներ շարունակ ձևավորված ոչ այնքան բարի ավանդույթին: Ընկերությունն առաջարկում է անել հակառակը. Նոր տարուն ընդառաջ եղևնին կտրելու և օրեր անց դեն նետելու փոխարեն տնկել մեկը՝ պարզապես կատարելով գնումներ:

Այս ամանորյա արշավի շրջանակում, դեկտեմբեր ամսվա ընթացքում EasyPay-ի առցանց դրամապանակի՝ easywallet-ի միջոցով QR-ով կատարած ցանկացած գնման դիմաց Հայաստանի որևէ անկյունում կտնկվի մեկ ծառ: Ստացվում է, որ եթե հազար մարդ կատարի գնում, կարող ենք մի նոր անտառի անուն մտածել: Այս քայլով ընկերությունն իր սպառողին առաջարկում է իրագործել ամանորյա մի քիչ ուրիշ, բայց ոչ պակաս կարևոր հրաշք:

EasyPay

EasyPay ընկերությունը վճարային համակարգերի դաշտ մուտք գործեց դեռ 2014 թվականին մեկ նպատակով՝ հեշտացնել և պարզեցնել ֆինանսական գործընթացները մարդկանց համար: Սկզբում ընկերությունն ուներ 8 վճարային տերմինալ, իսկ այսօր սարքավորումների թիվը գերազանցել է 3000-ը: Ընկերությունը համագործակցում է պետական կառույցների, սննդի և ժամանցի կետերի, ինտերնետ և բջջային կապ ապահովող մի շարք կազմակերպությունների հետ՝ առաջարկելով նրանց վճարման որակյալ, միևնույն ժամանակ պարզ ծառայություն՝ կարևորելով ոչ միայն մայրաքաղաքը, այլև մարզերը: Արդեն 2017-ին, ուղղորդվելով հենց այդ գրամաբանությամբ, ընկերությունը ներկայացրեց easyeallet առցանց դրամապանակը, որը վերջին տարիների ընթացքում թողարկել է 470+ ծառայություն և դեռ շարունակում է ընդլայնել իր առաջարկը:

ներբեռնիր
easywallet

Որովհետև հրաշքը կարող է բխել ամենապարզ քայլից: Ընկերությունում վստահ են, որ ծառ տնկելն արդեն իսկ հրաշք է, քանի որ այդպիսով լավություն ենք անում բնությանը, համապատասխանաբար՝ նաև ինքներս մեզ: Առհասարակ EasyPay բրենդի հիմքում ընկած է պարզության գաղափարախոսությունը: Ֆինանսական գործունեությունը բավականին բարդ ոլորտներից է, բայց ընկերությունը փորձում է այդ բոլոր գործընթացներին ավելի հեշտ և պարզեցված տարբերակներ տրամադրել: «Մենք ցանկանում ենք ցույց տալ, որ այդ թվաբանության մեջ անիմաստ խորանալու փոխարեն կարող ես ծախսել քո ժամանակը շատ ավելի կարևոր բաների վրա. շփվես ընկերներիդ և ընտանիքիդ հետ, հոգաս քո առողջության մասին, կամ, օրինակ, ծառ տնկես,– ասում է ընկերության մարքեթինգի բաժնի ղեկավար Տիգրան Պարսեղյանը և ամփոփում.– պարզություն ամեն ինչում»:

Հարատև հրաշք

Ամեն տարվա վերջին ամսում մենք բոլորս սկսում ենք պլանավորել, ինչ-որ բարդ սխեմաներ գծել և տանջել ինքներս մեզ, որպեսզի մեր և մեր երեխաների համար ստեղծենք ամանորյա հրաշքի զգացողությունը, իսկ Easy Pay-ն ասում է՝ դու այդ ամենի փոխարեն կարող ես, օրինակ, ուղղակի ծառ չկտրել, բարություն անել և այդ դեպքում ևս կունենաս քո երազած հրաշքը, որը չի տևի մի օր կամ մի ամիս: Ձեր տնկած ծառը կապրի տասնամյակներ և կդառնա ամանորյա հրաշք ոչ միայն ձեր, այլ շատ ու շատ այլ մարդկանց համար:

Բնությանը խնայողաբար վերաբերվելու գաղափարն արդիական է թե՛ Հայաստանում, թե՛ ամբողջ աշխարհում: Պատահական չէ, որ անցյալ տարի Հայաստանի կառավարությունը ձեռնարկեց «10մ» նախաձեռնությունը, որով նախատեսվում էր մեկ տարվա ընթացքում շուրջ 10 միլիոն ծառ տնկել երկրի տարածքում: Կարևորելով այս խնդիրը՝ EasyPay-ը ևս որոշեց միանալ այս գործընթացին:

Արշավի մեկնարկը տրվել է սոցիալական տեսահոլովակով՝ նկարահանված ամանորյա ժանրի լավագույն ավանդույթներով՝ պահպանելով հրաշքի սպասումը, ինտրիգը և ընտանեկան ջերմությունը: Տիգրանի խոսքով՝ այս նախաձեռնությունը նախ և առաջ ընկերության կորպորատիվ սոցիալական պատասխանատվության կարևոր մաս է, հետո նոր՝ easywallet հավելվածի առաջխաղացման արշավ (սրանից բացի, դեկտեմբեր ամսվա ընթացքում մի շարք խանութներ առաջարկելու են նաև քեշբեքեր easywallet-ով վճարելու դեպքում):

Իսկ արշավի ավարտից հետո ընկերությունը հաշվետվություն կներկայացնի, թե որտեղ և որքան ծառ է տնկվել քո իսկ գնումների արդյունքում:

Մարգարիտ Միրզոյան

«ԱՐՏԱԴՐՎԱԾ Է ՀԱՅԱՍՏԱՆՈՒՄ».

#ՀայկականըՄերնէ

Այս տարվա սկզբից էկոնոմիկայի նախարարության աջակցությամբ իրականացվում է «Արտադրված է Հայաստանում» տեղեկատվական արշավը: Ծրագրի ղեկավար Գայանե Անտոնյանի օգնությամբ բացատրում ենք, թե ինչից է այն բաղկացած և ինչ նպատակներ է հետապնդում:

Ո՞ՐՆ Է ԾՐԱԳՐԻ ՆՊԱՏԱԿԸ

Եկեք խոստովանենք. հաճախ առօրյա գնումների մեջ խճճված՝ մենք նույնիսկ ուշադրություն չենք դարձնում, թե որ երկրի ապրանքներ ենք ձեռք բերում, իսկ ավելի սրված դեպքերում նույնիսկ հատուկ շրջանցում ենք հայկականը: Բայց ինչպե՞ս պահանջել բարձր որակ հայկականից, եթե չենք աջակցում դրան: Ահա թե ինչու է անհրաժեշտ «Արտադրված է Հայաստանում» ծրագիրը: Այն բարձրացնում է հայկական արտադրության վարկանիշը, հանրության իրազեկման մակարդակը և ներկայացնում է հայ արտադրողի նորարարական գաղափարներն ու որակյալ արտադրանքը՝ ոգեշնչելով մարդկանց ստեղծել հայկականը:

ԻՆՉՈ՞Ւ ԾԱԳԵՑ ԾՐԱԳՐԻ ԱՆՀՐԱԺԵՇՏՈՒԹՅՈՒՆԸ

44-օրյա պատերազմը շատերիս է ստիպել վերանայել մեր վերաբերմունքը հայրենիքի հետ կապված ամենատարբեր հարցերին: Դրանցից մեկը սեփական տնտեսությանն աջակցելն է, որի լավագույն միջոցը հայրենական արտադրությանն ավելի մեծ ուշադրություն դարձնելն է: Այս տեսանկյունից կարևոր էր ճանաչել, թե ինչ են առաջարկում հայ արտադրողները, որպեսզի հայ սպառողը քաջատեղյակ լինի շուկայից: «Իր մեկնարկի պահից սկսած ծրագիրը, ճանաչելի դարձնելով հայ արտադրողին և արտադրանքը, հորդորում է աջակցել տեղականը երկրի տնտեսական զարգացման համար»,- բացատրում է Գայանե Անտոնյանը:

ԻՆՉՊԵ՞Ս Է ԱՇԽԱՏՈՒՄ ԾՐԱԳԻՐԸ

«Արտադրված է Հայաստանում» տեղեկատվական արշավը ներկայացնում է հայկական ապրանքներն ու ծառայությունները՝ պատմելով հայ արտադրողի պատմությունը: Ծրագրի գլխավոր նպատակներից է ներկայացնել, թե ինչպիսի արտադրական փուլերով է անցնում ապրանքանիշը՝ նախքան սպառողին հասնելը: Օրինակ՝ ո՞վ է ստեղծում Երևանի բույրով օծանելիք, ինչո՞ւ են այդքան մոդայիկ դարձել պատկերազարդ գուլպաները, ինչո՞վ է հայաստանյան ռոբոտն արժանացել Time ամսագրի բարձր գնահատականին, ո՞ր քաղցրավենիքի արտադրանք են սկսել հայրենադարձ գործարարները և այլն, և այլն: Հերոսներն ու թեմաներն անսպառ են, նրանց պատմությունները՝ ոգևորիչ ու ուսանելի: Հայաստանում արտադրված յուրաքանչյուր ապրանքանիշի հետևում մի հետաքրքիր պատմություն կա, որը, սովորաբար, լի է մարտահրավերների, բարդությունների հաղթահարման և մեծ կամքի դրսևորման դրվագներով: Ծրագրի շրջանակներում արվում է հնարավոր ամեն բան՝ պատմելու այս մարդկային պատմությունները:

Այսպես, ծրագիրը սպառողին առաջարկում է հայկական այլընտրանք՝ որակյալ և հարմար գնային սահմաններում: Մյուս կողմից՝ ծրագիրը ստեղծում է հարթակ հայ արտադրողների համար՝ կայանալու և դառնալու ավելի մրցակցային տեղական շուկայում:

Որտե՞ղ ծանոթանալ այդ պատմություններին

Արշավն իրականացվում է սոցիալական հարթակներում՝ միավորելով Հայաստանի արտադրական և սպառողական ներուժը՝ ի նպաստ հայկական արտադրության խթանման և երկրի տնտեսության զարգացման: Նախագծի շրջանակներում ստեղծվել է madeinarmenia.online տեղեկատվական հարթակը, որը կամուրջ է հայ սպառողների և արտադրողների միջև՝ մեկ աղբյուրից հասանելի դարձնելով հայկական արտադրության և հայ արտադրողի մասին ամենահետաքրքիր և օգտակար տեղեկատվությունը:

Անընդհատ թարմացվող լրահոսում տեղ են գտնում ամենատարբեր նորությունները՝ ժամանակակից հայտնագործություններից մինչև Հայաստանի արդյունաբերությանն ու տնտեսությանն առնչվող թարմացումներ: Առաջիկայում հարթակում ավելանալու են հետաքրքիր տեղեկատվական բաժիններ:

Ինչ գաղափարներ են իրագործվել նախագծի շրջանակներում

Հավանաբար Երևանի փողոցներում նկատած կլինեք հայրենական արտադրանքը գովազդող պաստառները՝ «հայկականը խելացի է», «հայկականը ոճային է» և նմանօրինակ այլ կարգախոսներով. սա նախագծի շրջանակներում իրականացրած գաղափարներից մեկն էր՝ երևանյան ճանաչելի պատշգամբների պատկերների գործածմամբ: Ստեղծման պահից ի վեր «Արտադրված է Հայաստանում» տեղեկատվական արշավն օգտագործել է բոլոր հնարավոր եղանակները հասանելի լինելու հայ սպառողներին: Այս նպատակով էլ արշավի շրջանակներում կյանքի է կոչվել հաջորդ գաղափարը՝ «կախարդական արկղը»:

Ինչ է «կախարդական արկղը»

Ի սկզբանե միտքն այն էր, որ պետք է մի տեղում ցույց տալ հայկական ապրանքների բազմազանությունն ու որակը: Պատկերացրեք՝ մի գեղեցիկ ձևավորված արկղ, մեջը՝ խնամքի միջոցներ, թեյեր, շարֆեր և այլն, և բոլորը հայկական: Եվ որպեսզի այդ ամենի մասին հնարավորինս

շատ մարդ իմանա, գործի անցան հայոց ինֆլուենսերները: Ավելի ճիշտ, նրանք ստացան նվեր արկղեր, իսկ իրենց հիացմունքը վերածվեց իրենց հազարավոր հետևորդներին՝ հայկականը գնելու հորդորներով:

Ինչպես նշվում է արկղին կցված նամակում (գրված արկղի անունից). «Հիմա իմ ու քո խնդիրն է պատմել քեզ նվեր հասած հայկական արտադրանքի մասին, որ միասին օգնենք հայ արտադրողին ու խրախուսենք իր աշխատանքը: Պատմի՛ր բոլորին այս նվերի մասին. չէ՞ որ նրանց մեջ պատմություն, մեծ աշխատասիրություն և իրականացված երազանք կա»:

Ինչպե՞ս են արձագանքում արտադրողները

Այն ապրանքանիշները, որոնք ներկայացված են կախարդական արկղերի հավաքածուներում, տրամադրվում են անմիջականորեն արտադրողների կողմից: Սա ևս մի ցայտուն ապացույց է, որ նրանք բաց են, հետաքրքիր ու արդյունավետ համագործակցության համար: Ծրագրի ղեկավար Գայանե Անտոնյանը նշում է, որ հայ արտադրողներից շատերն էլ նախաձեռնությունն իրենց ձեռքն են վերցնում՝ միանալու այս տեղեկատվական արշավի աշխատանքներին. «Հայ արտադրողներից շատերը սիրով համաձայնում են կիսվել իրենց արտադրանքով ու պատմություններով՝ հավատալով, որ կարող են այդպես ոգեշնչել մյուսներին ևս ստեղծել հայկականը»:

Ինչ արդյունքներ են ակնկալվում ծրագրից

Թեև ծրագիրն ունի կարճ պատմություն, արդեն հասցրել է սիրվել հայ սպառողների կողմից և հավաքել լսարան, որը հետևում և աջակցում է նախաձեռնության առաջարկած յուրաքանչյուր գաղափարին: «Արտադրված է Հայաստանում» տեղեկատվական արշավը նախատեսում է շարունակել իր գործունեությունն այնքան, որքան կպահանջվի՝ հանրության շրջանում հայ արտադրանքի և արտադրության մասին իրազեկվածության մակարդակի առավել բարձրացման համար:

Ծրագիրն իրականացնող թիմում նշում են. «Առավել քան երբևէ, այսօր անհրաժեշտ է սատարել հայ արտադրողին և սպառել հայկական արտադրությունը՝ զարգացնելով մեր երկրի տնտեսությունը և արդյունաբերությունը»: Դժվար է չհամաձայնել այս պնդման հետ:

Ի վերջո, ինչո՞ւ գնել հայկականը

Հայկականը ոճային է, խելացի է և մերն է: Այն գնելը պետք է լինի արդի ու սովորական, որովհետև այն նախևառաջ մեր մասին է:

Շուշանիկ Փափազյան
ՀՀ էկոնոմիկայի նախարարություն

Երևանի սիրուն Udivila

Այն մասին, թե ինչպես մեդիա ոլորտի մասնագետներ Մարիամ Լորեցյանն ու Ելենա Գևորգյանը վերզապես իրականացրեցին վաղեմի երազանքը՝ ստեղծել սեփական ֆեշն բրենդը, ինչպես այդ գործին օգնեց համավարակը, ինչով է ոգեշնչում Երևանը և ինչու պետք է հագուստը լինի նախևառաջ հարմար, պատմում են UDIVILA-ի հիմնադիրները։

← Ջրակայան թրենչ՝ «Մայր Հայաստան» կոլաժով

Անկրկնելի ու սահմանափակ

Ելենա. Անունը գտնելուց հետո սկսեցինք աշխատել հեղինակային փաթերներ ու կոլաժներ ստեղծելու ուղղությամբ՝ դրանք դարձնելով մեր հիմնական ու սկզբունքային գաղափարը։ Փաթերները հիմնականում ստեղծում է Մարիամը։ Մեզ համար սկզբունքային է, որ յուրաքանչյուր արտադրանք լինի որակյալ և ոճային։ Յուրաքանչյուր փաթերնի համար արտադրության սահմանափակ քանակ ունենք։ Այս կերպ մենք հաճախորդին հնարավորություն ենք տալիս լինել տարբերվող։

Մարիամ. Ոգեշնչման եզակի աղբյուր գոյություն չունի՝ շատ են։ Երաժշտություն, ճարտարապետություն, գրականություն, նկարչություն՝ տարիների ընթացքում հավաքած հետաքրքրությունն ու սերն այս ոլորտների հանդեպ արտահայտվում է փաթերների տեսքով։

Համավարակի ազդեցությունը

Մարիամ. Մեր գործում ամենակարևորը ոգեշնչումն է, բժշկական դիմակներն էդքան էլ ոգեշնչող չեն, էնպես որ չնայած աքսեսուարները մեր գործում կարևորագույն տեղ են զբաղեցնում, դիմակներ չունենք։

Ելենա. Մի կողմից կորոնավիրուսն իրոք բնավ ոգեշնչող չի, բայց անցյալ տարվա մեկուսացման շրջանը մեծ ազդակ էր, որպեսզի մենք անցնենք գործի։ Վերջապես ժամանակ գտանք, որպեսզի վաղուց պլանավորված գործը սկսենք։

Մեծ, գունեղ, հարմար

Ելենա. Գաղափարը շատ վաղուց կար, բայց բրենդի վիզուալ ինքնարտահայտումը, որը հենց մեզ հոգեհարազատ կլինի, ավելի հստակ տեսք ստացավ անվան ընտրությունից հետո։ Առաջնային գաղափարն այն էր, որ ստեղծելու ենք հագուստ, որը նախևառաջ կկրեինք մենք։ Մենք հագնում ենք այն ամենը, ինչ հարմարավետ է և ոճային։ Օրինակ՝ oversized հագուստ։

Անուն

Մարիամ. Անվան ընտրությունը շատ բարդ էր, քանի որ տարբերակները շատ էին։ Ուզում էինք, որ հեշտ հիշվեր ու դրական էմոցիա արտահայտեր։ Ի վերջո, փորձեցի մանկությունից մնացած մի խաղի միջոցով, երբ թղթի վրա երկար բառ գրելուց հետո նոր բառեր պետք է կազմեիր։ Հենց այդպես էլ «ԻՆԴԻՎԻԴՈՒԱԼ» բառից ծնվեց «ՈՒԴԻՎԻԼԱ»-ն։

Ելենա. Այս տարբերակի մեջ կա նաև «դիվա» բառը՝ կին, որը պահանջկոտ է և գիտի, թե ինչ է ուզում։ Այդ կինը մեզնից յուրաքանչյուրն էր։ Մի խոսքով, դիպուկ էր։

→ Բոմբեր՝ «AiKi» փաթթերնով

← UDIVILA-ի հիմնադիրներ Եվենա Գևորգյանն ու Մարիամ Լորեցյանը

↓ Բոմբեր՝ «Ararat» փաթթերնով

Հագուստն ու աքսեսուարները ստեղծելուց հաշվի ենք առնում մեզ անհարմարություն պատճառող մանրուքները, օրինակ՝ թոթբեզերը, որոնց մեծ սիրահարն ենք, հիմնականում գրպան չեն ունենում: Դրա պատճառով էլ հեռախոսը, դրամապանակը, բանալին դժվարությամբ ես գտնում: Մեր թոթբեզերում լրացրել ենք այդ բացը:
Ընդ որում, հարմար ասելով նկատի չունենք միայն հագնելու տեսանկյունից. որպես շատ ճամփորդող մարդիկ, մենք հասկանում ենք, որ որքան թեթև է հագուստը, այնքան շատ բան կարող ես տանել քեզ հետ:
Մարիամ. Այսինքն UDIVILA-ի գաղափարը ոճային որակյալ հագուստն է, որը շատ տեղ չի զբաղեցնում, ուշադրություն է գրավում և դրա հետ մեկտեղ հեշտ կրելի ու համադրելի է: Մի հետաքրքիր փաստ էլ. առօրյայում, հիմնականում, հագուստի մեջ նախընտրում ենք սև գույնը, բայց երբ սկսեցինք աշխատել UDIVILA-ի վրա, իրեն սկսեցինք տեսնել գունավոր: Մտածեցինք, որ կարող ենք ստեղծել այնպիսի գունավոր փաթթերներ, որոնք համադրելի են սևի հետ ու գրավում են հագուստի մեջ սևը գերադասող մարդկանց:

Ոգեշնչող Երևան
Մարիամ. Ինձ համար Մայր Հայաստանը մանկուց եղել է Երևանի գլխավոր խորհրդանիշներից մեկը: Երբ արդեն ստեղծեցինք UDIVILA-ն, որոշեցինք մեր աշխատանքի տեսքով մեր քաղաքին շնորհակալություն հայտնել: Այդպես ծնվեց «Երևանի սիրուն աղջիկը»: Դա մեր և շատ ուրիշների համար քաղաքային հիշողությունների արտացոլանքն է: Ի դեպ, Երևանի սիրուն աղջիկ ասելով՝ հենց Մայր Հայաստանին նկատի ունենք:

Եվենա. Մենք ուզում էինք ներկայացնել ոչ թե կնոջ, ով զայրացած է, այլ մեկին, ով ամեն օր ուժեղանում է: Կոլաժի տեսքով մենք ցույց տվեցինք այս կնոջ ներքին բովանդակությունը՝ փորձելով նկարագրել, որ չնայած արտաքինից նա չի ժպտում, ներքուստ նուրբ գծեր ունի: Մյուս կողմից՝ սա մեր զրույցն էր քաղաքի հետ, որտեղ ապրում ենք: Մենք ուզում էինք շնորհակալություն հայտնել այն քաղաքին, որի հետ հաճախ ենք վիճում ու երբեմն գուցե չենք հասկանում միմյանց, բայց միևնույն է՝ միշտ միասին ենք:

↑ Շապիկ՝ «Երևանի սիրուն աղջիկ» կոլաժով

↓ Բոմբեր՝ «Հիանալի» փաթթերնով

Ոճային ու ինքնատիպ հաճախորդներ
Եվենա. Առաջին արձագանքը ստացել ենք մեր հարազատներից ու հարազատ ընկերներից: Եթե փորձեմ մի քանի բառով նկարագրել, թե ովքեր են UDIVILA-ի հիմնական հաճախորդները, ապա կստացվի այսպես. մարդիկ, որոնք ձգտում են լինել ոճային և ինքնատիպ, գնահատում են հարմարավետությունը և չեն վախենում ընդգծել իրենց անհատականությունը:
Մարիամ. Մենք այնքան ենք սիրում յուրաքանչյուր հագուստ ու աքսեսուար, որ ստեղծում ենք ու շատ մանրակրկիտ ուշադրություն ենք դարձնում յուրաքանչյուր դետալին: Հիմնականում, բնականաբար, չգիտենք, ովքեր են մեր գնորդները, բայց հենց իրենք են ոգեշնչում մեզ շարունակել ստեղծագործել:

Արեգ Դավթյան
Մարիամ Լորեցյան

«ԲԱԼԴՐ». ՀԱՅ-ՈՒԿՐԱԻՆԱԿԱՆ ՖԵՆԹԸԶԻ

Աշնանը Երևանում էր ուկրաինացի ռեժիսոր Ալեքսանդր Շվեցովը: Այս այցն ուներ շատ հստակ գործնական նպատակ. գտնել գեղատեսիլ վայրեր արդեն նկարահանվող «Բալդր» էպիկական ֆենթըզի ֆիլմի համար:

→ Ռեժիսոր Ալեքսանդր Շվեցովն ու կոմպոզիտոր Լեոնիկ Ռաչայրյանը

Քսան տարի առաջ խիզախ հոբբիթ Ֆրոդո Բեգգինսն ու իր մտերիմները՝ կախարդ Գենդալֆը, էլֆ Լեգոլասը և Մատանու եղբայրության մյուս անդամները, սկսեցին իրենց կինոճամփորդությունը դեպի ահասարսուռ Մորդոր: Երեք տարի, երեք ֆիլմ և շուրջ տասը ժամ տևողությամբ էպիկական պատումը բացառիկ դարձավ իր տեսակի մեջ: Ոչ առաջ, ոչ էլ հետո ոչ մեկին չի հաջողվել նույնչափ համոզիչ հեքիաթային կինոաշխարհներ ստեղծել:

Այդ ժամանակ էր, որ երիտասարդ ռեժիսոր Ալեքսանդր Շվեցովը հասկացավ, որ մի օր իր ուժերը պիտի փորձի հենց այս ժանրում: Ճիշտ է՝ Ուկրաինան Հոլիվուդից հեռու է, այստեղ կինոարտադրությունը չունի նույն հնարավորությունները, բայց հանձվել չկար: Պետք էր պարզապես սպասել ճիշտ պահին: Իսկ մինչ այդ դեռ շատ բան կար անելու: Ալեքսանդրը նկարահանեց իր առաջին երկու ֆիլմերը, մեկը՝ հորոր, մյուսը՝ միստիկ դրամա ժանրերում: Դա կարևոր փորձ էր վաղեմի երազանքին անցնելուց առաջ: Իսկ հետո ռեժիսորը ծանոթացավ սցենարիստ Ելենա Մաասի հետ և լսեց վերջինիս կերտած պատմությունը՝ սկանդինավյան հերոս, Օդին աստծո որդի Բալդրի մասին: «Ես միանգամից զգացի, թե ինչքան մոտ է ինձ այդ պատմությունը և որքան հետաքրքիր բան կարելի է դրանից ստանալ»,– պատմում է Ալեքսանդրը:

← Ֆիլմի տեսարաններից մեկի նկարահանումը

«Բալդր. Ճակատագրի թելերը» կինոնկարը հին առասպելների ժամանակակից մեկնաբանությունն է: Ամեն ինչ սկսվում է Նրանից, որ երեք երիտասարդ անտառում գտնում են անհայտ զինվորի գերեզմանը և փորձում կենդանացնել վերջինիս: Չկարողանալով արկածախնդիր եռյակը գնում է Ջորեղ Կախարդուհուց օգնություն ստանալու: Եվ այստեղ պարզվում է, որ երեք երիտասարդներից մեկը ոչ այլ ոք է, քան հենց այդ անհայտ զինվորի վերակենդանացումը...

Ֆիլմի նկարահանումներն արդեն ընթացքում են: Իհարկե, հեշտ չէ Ուկրաինայում նկարահանել անկախ ֆենթըզի, բայց միանգամայն հնարավոր, եթե կա նվիրվածություն և կան գործընկերներ: Ալեքսանդր Շվեցովը հատուկ նշում է ձեռագործ միջնադարյան զենքի ու հագուստի արտադրող Armstreetcom, բարձրորակ մանկական հագուստի արտադրող Flavien, տեխնիկական գործընկեր Mam Rental, արդյունաբերական սառեցնող տեխնիկայի արտադրող MC Холод ընկերությունները, ինչպես նաև բոլոր այն անհատներին, որոնք միացել են նախագծին տարբեր փուլերում: Ընդհանուր առմամբ, այս պահին «Բալդրի» թիմը բաղկացած է ավելի քան հարյուր հոգուց:

Դրանց թվում են նաև հայազգի մասնագետներ: Նախ և առաջ՝ Ալեքսանդրի կինը և մուսան՝ ֆիլմի ադմինիստրատոր Ջուլիետա Շվեցովան, բեմադրող օպերատոր Վարուժ Գուլյանը, կոմպոզիտոր Լեոնիկ Խաչատրյանը... Իսկ էկրանին հայկական մոտիվներ հնարավոր կլինի նկատել խորհրդավոր Կախարդուհու տանը՝ քամանչա, հայկական զենքեր, զարդանախշեր և այլն (այդ տեսարանի համար Լեոնիկ Խաչատրյանն օգտագործել է նաև դուդուկի ձայնը):

Այսքանով, սակայն, ֆիլմի «հայկականությունը» չի սահմանափակվում: Շատ հնարավոր է, որ գարնանն այստեղ նկարահանվեն Բալդրի մի քանի տեսարաններ: Ալեքսանդրն ու նկարահանող խումբը ցնցված էին Քասախի ջրվեժի, Սևանի, Խոր Վիրապի տեսարաններով: Բայց ամենից շատ ռեժիսորին տպավորել է Գառնիի կիրճի Քարերի սիմֆոնիան: Ահա այնտեղ տեղի կունենա ապագա ֆիլմի կարևոր իրադարձություններից մեկը: «Բալդրի» նկարահանումները կավարտվեն հաջորդ տարի, և արդեն 2022-ի աշնանը, հավանաբար, հնարավոր կլինի այն տեսնել մեծ էկրաններին, այդ թվում և Հայաստանում: Իսկ հետագայում, ինչ իմանաս, գուցե ռեժիսոր Շվեցովն անդրադառնա հայկական առասպելներին: «Դրանք շատ հետաքրքիր են և զարմանալի է, որ մինչև հիմա չեն ներկայացվել համաշխարհային կինոյում,– ասում է ռեժիսորը:– Կարծում եմ՝ կարելի է շատ տպավորիչ ֆիլմեր ստանալ Հայկ Նահապետի մասին, կամ օրինակ՝ Ախթամարի լեգենդի մոտիվներով»:

Արեգ Դաւիթյան

spell

creative marketing agency

let us spell it out for you

SOCIAL MEDIA MARKETING

SEO & PPC

WEB DEVELOPMENT & MOBILE APPS

UI/UX

BRANDING

DESIGN SERVICES

PRINT & DIGITAL MEDIA

CONTENT WRITING

PODCAST PRODUCTION

CONSULTING

PUBLIC RELATIONS

E-COMMERCE

SPELL.AM +374 55 387887



Առատության երկիր

2017 թվականին շվեյցարացի նկարիչ Մարսել Մայերը վեց ամսով ժամանեց Երևան, որի արդյունքում իր բազմաշերտ տպավորություններն արտահայտեց լինոփորագրությունների շարքի մեջ: Ներկայացնում ենք դրանց մի մասը և հեղինակի ուղեկցող մեկնաբանությունները Land of Plenty ալբոմից:

Մայերը «Աշակույթների երկխոսություն» կամավորության, շվեյցարական Բասել քաղաքի Atelier Mondial Արվեստագետների փոխանակման Միջազգային ծրագրի և գերմանական Ֆրայբուրգ քաղաքի քաղաքապետարանի միջև 2016-ից գործող Արվեստագետների փոխանակման միջազգային վեցամսյա ծրագրի չորրորդ մասնակիցն էր:

ԿԱՍԿԱԴ

Ժամանելուցս անմիջապես հետո իմ ընկեր Արմանն ինձ ուղեկցում է քաղաքի կենտրոն։ Զբոսանքի վերջում չափչփում ենք Կասկադը՝ աստիճանաշարը, որը կապում է քաղաքի կենտրոնը բլուրներից մեկի հետ։ Անհամար մարդկանց քայլերից մաշված աստիճաններով հասնում ենք գագաթին։ Արևի շողերի ներքո տեսարանն ինձ հիշեցնում է դե Կիրիկոյի կտավները։

ՄԱՐՇՐՈՒՏԿԱ

Տեղաշարժման լավագույն միջոցը մեքենան է։ Այստեղ են նաև տխրահռչակ «մարշրուտկաները»։ Այս խախուտ միկրոավտոբուսները հաճախ գերբեռնված են, բայց դրանց սպասող ուղևորները, միևնույն է, մի կերպ խցկվում են։ Նորմալ տաքսիներն ավելի թանկ են, բայց նաև ավելի հարմարավետ։

ՍԵՎԱՆԻ ԳՐՈՂՆԵՐԻ ՏՈՒՆ

Լուսանկարը, որի հիման վրա կատարել եմ լինոփորագրությունը, արվել է 1973 թվականին։ Այդ ժամանակ Գրողների տունը տեղական էլիտայի ու միջազգային գրական աստղերի հանդիպման վայր էր։ Սիմոնա դե Բովուարը, Ժան-Պոլ Սարտրը և շատ ուրիշներ հյուրընկալվել են այստեղ։

Փայլուն ժամանակներն անցել են։ Մնացել է միայն այս շենքը։ Այժմ սա ժամանակի կողմից քրքրված հյուրանոց է, որը դեռ պատկանում է Գրողների միությանը։

ՉԱՅԿԱ

Այս նոստալգիկ մեքենան կոչվում է «Չայկա» (ռուսերեն՝ ճայ), այն արտադրվել է Ռուսաստանում 1959-ից մինչև 1981 թվականը՝ շուրջ 3000 օրինակով: 2017 թվականին այն կարելի էր վարձել քաղաքային տուրի համար՝ նախկին Լենինի հրապարակում, որը 1991 թվականի անկախացումից հետո վերանվանվել է Հանրապետության: Մեքենան սազում է քաղաքային պատկերի հետ, որտեղ քաղաքի սիրտ հրապարակը շրջապատված է 1928 թվականի նեոկլասիկ կառույցներով, մինչդեռ ավելի հին քաղաքից հատուկենտ շենքեր են մնացել:

«ԵՐԻՏԱՍԱՐԴԱԿԱՆ»

Երբ առաջին անգամ իջնում եմ «Երիտասարդական» կոչվող կայարանում, նկատում եմ պատուհանը, որը, քանի դեռ բարձրանում եմ շարժասանդուղքով, զարմանալի աստղի պես գնալով ավելի է մեծանում: Նրբագեղ կայարանը գտնվում է Երևանի կենտրոնը շրջապատող Օղակաձև այգում: Հսկա աստղադիտակի պես պատուհանը ցցված է կտուրից:

ԽԱՉՔԱՐ
Հսկա նորակառույցների ստվերում քարագործը կերտում է ավանդական խաչքարեր։ Հայ քրիստոնեական վարպետորեն զարդարված այս կոթողները կարելի է հանդիպել ամբողջ երկրով մեկ։



ԼԵՆԻՆԻ ԳԼՈՒԽԸ
Լենինի արձանն այժմ թաքնված է Ազգային պատկերասրահի բակում՝ իր նախնական տեղակայման վայրի դեմ դիմաց։ Որպեսզի կասկած չմնա, որ այն տապալված է, գլուխը պահվում է առանձին՝ պատկերասրահի նկուղում։

ՀԱՂԹԱՆԱԿԻ ԱՅԳԻ
Ջանազան քանդակներով լի քաղաքում երբեմն կարելի է հանդիպել տարբեր ֆիգուրների ամենաանսպասելի փոխազդեցություն։ Այս պլաստիկ կապիկը, օրինակ, զուգորդվում է Մայր Հայաստան մոնումենտալ արձանի հետ, որը կանգնած է հսկայական պատվանդանի վրա։ Հենց դրա կողքին գործում է զվարճանքների այգին, որի ատրակցիոնների լավ օրերը վաղուց անցյալում են, իսկ հնամաշ կարուսելներն ու դիտման անիվը կարծես հակադրվեն հսկա Մայր Հայաստանին։

ՌՈՔԸ ՀԱՅԱՍՏԱՆՈՒ ԵՎ ՀԱՅԵՐԸ ՌՈՔԻ ՄԵՋ

Մ

ՆՈՐԱԳՈՒՅՆ ՊԱՏՄՈՒԹՅՈՒՆ

«Մեկ թվում էր, թե ապապություն էինք սպեղծում»

ԵՐԵՎԱՆի խնդրանքով երևանյան անդերգրաունդի փորձառու ներկայացուցիչ Արտաշես Արշակյանը հանդիպել է իր պատանեկության ընկեր Վահագն «Չոռտ» Մամյանին ու վերջինիս հետ վերհիշել 2000-ականների սկզբի երևանյան ռոք միջավայրը՝ անվերջ ծանոթություններով, հասարակության այլ շերտերի հետ խփոցներով և ապապության անվերջ փնտրտուքներով:

Շտո կա չեռպավշինա

Մի քանի օր առաջ Z սերնդի մի վանաձորցի ընկերուհի հարցրեց, թե մենք ջահել ժամանակ ոնց էինք իմանում՝ քաղաքում ինչ իվենթ կա, ուր արժի գնալ, ուր չարժի գնալ, ընդհանրապես՝ որտեղ ինչ ա կատարվում: Պատասխանեցի, որ Չոռտից էինք հարցնում:

Չոռտը գիտեր բոլորին. գլխից մինչև ոտքեր բացվող զապանակ-բլոկնոտում հավաքագրել էր քաղաքի բոլոր ջաքսերի հեռախոսահամարները (այն ժամանակ, իհարկե, տան), իմ աչքով եմ տեսել: Մի քսան հատ մենակ «Աննա» կար: Վանաձորցի ընկերուհին թարս նայեց... Այո՛, արդեն մեծացել է այն սերունդը, որը չի ապրել սոցցանցերից առաջ ու որը չգիտի Չոռտին դեմքով:

Չոռտը Թռու, կարծրատիպային ռոքերի կերպար էր: Այդպիսի դեմքեր մինչև հիմա կարելի է տեսնել ամերիկյան կինոներում՝ երկար մազ-մորուք, պիրսինգ, զարդազանգեր, շղթաներ, և այլն, և այլն: Նա մեր այն խելահեղ ռոք պատանեկության ամենավառ սիմվոլներից էր:

Ֆեյսբուքն ու թինդրը՝ ինտերնետիկ առազ

Չէինք շփվել երևի տասը տարի, եթե ոչ ավելի: Զանգ, դուռը բացում եմ, սկզբում տեսնում եմ փայլուն ճաղատը, հետո՝ երկար փափուկ մորուքի

→ Չոռտն ու ընկերները՝ Love Summer փառատոնին

← Բուռն ռոքնռոլային անցյալի վկայությունները

տակից փայլող ժպիտը: Վերջին հանդիպումից անցած տարիներն արագ ամփոփում ենք (պարզվում է՝ Չոռտն ունի երկու դստրիկ ու զբաղվում է մարդկանց պիրսինգելով) ու անցնում կարևորին՝ հին ժամանակներին:

Վահագնը Վանաձորից Երևան էր եկել համալսարանում սովորելու արդեն «Չոռտի» վերածված՝ ընկեր Լյովկայի թեթև ձեռքով. «Էդ ժամանակ լրիվ սև էինք հագնում, անթրաշ վիճակ, անհասկանալի երկարության մազեր: Գնացել էի իրանց տուն, դուռը բացեց, բա՝ պրիվետ, Չորտ: Էն որ՝ էդ ո՞ւմ ես բարևում: Ես բանուգործ թողած եկել եմ, դու ուրիշին ես բարևում: Ասում ա՝ ուրիշ չի, դո՛ւ ես: Քամին տվել էր, մազերս երկու պոզի պես բարձրացրել, տենց էլ մնաց»:

18 տարեկանի հաջորդ օրը ծակեց ականջը: Հիմա ասում է, որ դա կյանքի առաջին մեծավարի քայլն էլ: Ավելի ճիշտ, թե չէ բուն պիրսինգը, այլ պիրսինգը չթաքցնելը: «Երևի բունտ էր, եսի՞մ: Չգիտեմ էլ՝ ինչի դեմ, բայց բունտ էր»: Ինչպիսի՜ դիպուկ բնութագիր այդ ողջ ժամանակաշրջանի: «Մեզ թվում էր, թե ազատություն էինք ստեղծում, պայքարում էինք: Հիմա մի քիչ որ խորանում ես՝ պայքարում էիր, որ չլինես մյուսների նման շտամպովկա, արդյունքում դառնում էիր ուրիշների նման շտամպովկա: Բայց էդ զգացողությունը կար, հա»:

Եվ այսպես, Չոռտը հայտնվեց երևանյան փոքրիկ, բայց բուռն ռոք հեղեղի կենտրոնում: Եթե համերգ կամ ֆեստ էր լինում, առաջինն իրեն էին տեղյակ պահում, ինքն էլ՝ մնացածին. պարզապես նստում էր համալսարանի աստիճաններին ու անցնող-գնացողներին ձեռի հետ պատմում, թե որտեղ ինչ կա անելու: «Նույնիսկ եթե անասուն համերգ էր լինում, որտեղ ոչ ոք նորմալ երգել-նվագել չգիտեր, բայց ես ասած լինեի, որ արժի գնալ, մարդիկ կգնային ու կգտնեին, թե ինչի համար են գնացել: Որովհետև, դուզը խոսանք էլի, լիքը մարդ գնում էր ոչ թե թույն համերգ լսելու, այլ իրար տեսնելու, շփվելու, ծանոթանալու համար»:

Օ՜, այո՜, Չոռտը նաև մարդկանց էր ծանոթացնում իրար հետ: Ավելի ճիշտ՝ բոլորին բոլորի հետ, այսինքն՝ իր միջոցով կարելի էր տուսսովկայի ցանկացած աղջկա հետ ծանոթանալ: Մի խոսքով, նա ոչ միայն ֆեյսբուք էր, այլև երբեմն՝ թինդեռ: Ինքս մի քանի անգամ օգտվել եմ նրա այդ ֆանտաստիկ հմտությունից, մերսի քեզ, վանաձորցի Չոռտ:

Հին, փոշոտ ՆՓԱԿը

Ամեն շաբաթ Ժուռնալիստների տանը նվագում էին Ալտեր Էգոն ու Քինքս Քրոսը, պարտադիր բոլորով գնում էինք (խոխմա փաստ. էդ երկու խմբերն ունեին լրիվ նույն կազմերը, բացի ֆրոնթմենից. մի տեղ Էդոն էր երգողը, մյուս տեղում՝ Հենդոն): Չնայած, որ մնացած օրերին էլ էինք սաղ օրը իրար հետ՝ Մատենադարան, օբսերվատորիա, համալսարան՝ մնացած բոլոր տեղերում, որտեղ տուսվում էինք:

Բայց էն թվերի շրջադարձային միջացառումները փառատոներն էին: Ամենաթույնը ՆՓԱԿ-ի հավաքներն էին: Չոռտը՝ արդեն լրիվ անցյալի գրկում հարմար տեղավորված, ասում է, որ «ռեմոնտից առաջ փոշոտ ՆՓԱԿ-ի ֆեստերը լրիվ ուրիշ էին, աուրան լրիվ ուրիշ էր, ավելի անմիջական ու իսկական էր ամեն ինչ»:

Հաստատ, հենց էդ այն քաոսային ու ազատ շարժն էր, որն այդքան կարոտում ենք հիմա: Երբ միաժամանակ վախվորած և աննկարագրելի հետաքրքրասիրությամբ լիցքավորված մտնում էի ՆՓԱԿ-ի հերթական խառը ֆեստին, մետաղյա դուռը փակվում էր ահասարսուռ շրխկոցով, որի արձագանքը, խառնվելով երաժշտական շուխուռին, հետևում էր թողնում դրսի անիրական, կեղծ աշխարհը, որում մեզ անվերջ համոզում էին, որ պետք է դադարենք երազել: Ես մտնում էի ուրիշ աշխարհ, իսկ դռան հետևինը ճաքում է, փշրվում ու անհետանում, ինչպես զուգարանի թուղթը՝ ջուրը քաշելուց հետո (եթե խողովակները խցանված չեն)...

2000 թվի ՆՓԱԿի փառատոնը վանաձորցի Չոռտի համար առաջին մեծ իվենթն էր Երևանում, հենց էնտեղ ծանոթացավ տուսսովկայի գլխավոր մարդկանց հետ: «Առաջինը կարծեմ ԱԼՔի Անդրեյն էր,– պատմում է Վահագնը,– Ես էն ժամանակ դեռ ահագին քաշված էի, մտածում էի՝ ամոթ ա, որ ես պապայիս հին վինիլներն եմ լսում, ոչ թե ժամանակակից ինչ-որ բան, բայց Անդրեյն աչքերս բացեց, ասեց՝ ոչինչ, նորմալ ա»:

Հետաքրքիր է, որ համարյա նույն ժամանակներում նույն ՆՓԱԿ-ով ես էլ միացա ռոք համայնքին: Քայլում էի մի օր դասից հետո՝ 17 տարեկան էի, մեկ էլ տեսնեմ մի շենք, շուրջը տասնյակ շատ տարօրինակ տեսքի մարդիկ՝ մրջյունների նման գնում են ու գալիս են: Ես էն ժամանակ ոչ Նորարար փորձառական արվեստի կենտրոնի մասին լսած կայի, ոչ էլ գիտեի, որ Հայաստանում ռոք նվագողներ կան: Պարզվեց, որ ՆՓԱԿ-ի մեծ ֆեստերից մեկն էր, որտեղ հավաքվել էին Երևանի բոլոր հնարավոր ոչ ֆորմալները՝ ռոքերները, պանկերը, մետալիստները, ով ասես: Մինչև էդ օրն ինձ թվում էր, որ տենց ազատ քայլող, շնչող մարդիկ մենակ կինոներում են լինում: Հետո հասկացա. իրանք սովորական, իմ նման մարդիկ էին, ուղղակի հաղթահարել էին վախերն ու կոտրել տաբուները:

Միրո ամառվա փուչիկները

Մի ուրիշ կարևոր իրադարձություն էր 2001 թվականի ամռանն անցած Love Summer երկօրյա փառատոնը Ստանիսլավսկու թատրոնի տարածքում: Ինքս չէի եղել, բայց անընդհատ լսում էի պատմություններ այդ զարմանահրաշ ֆեստից: Սառը ջրում կապտած փոկի պես նախանձում էի բոլորին, ով ներկա էր գտնվել, քանի որ ամեն ինչից երևում էր, որ հենց էդ երկու օրն էին որոշիչ եղել զրոյականների ռոք համայնքի ձևավորման գործում, էդ երկու օրում էին խաչվել, մերվել, ծանոթացել և եղբայրացել հին ու նոր ռոք սերունդները, փառատոնի ջերմությունը հալեցրել էր միջսերնդային սառույցը և մեծերը ձեռնբաց իրենց գիրկն էին ընդունել 21-րդ դարի երազկոտ ջահելությանը:

Բայց դրա մասին բազում պատումներից ինձ էն ժամանակ ամենաշատը հուզել էր պահպանակների պահը: Ուրեմն, գլխավոր հովանավորը

պահպանակներ արտադրող մի ընկերություն էր: Կազմակերպիչները որոշել էին մասնակիցներին բաժանել հովանավորի արտադրանքից (սիրո ամառ էր, մասնակիցներն էլ՝ ջահել ու կրքոտ), բայց ոչ թե հենց այնպես, այլ հնարամիտ կերպով/ մեծ փուչիկներ էին փչել, մեջը լցրել պահպանակներ, հետո փուչիկները օդ հանել, պայթեցրել, ու որ ցանկացողները վերցնեն: Չոռտը վերցրել էր այնքան, որ հանկարծ պակաս չզգա: Մի քիչ էլ ավելի: Ու մի քանի հատ էլ:

— Շատ-շատ էր մոտս հավաքված, էն որ ֆեստից հետո սաղին բաժանում էի, բայց չէր վերջանում ու անընդհատ ինչ-որ տեղից դուրս էին գալիս՝ կուռտկի գրպանից, կռավաթի տակից, արդեն ժամկետն էլ էր անցել, բայց հա՛ ինչ-որ տեղից դուրս էին գալիս...

Ենթամշակութային խփոցիներ

Կոիվներ շատ էին լինում: Քյարթերը շատ էին ու չէին սիրում ջագիջուգիներին (այդ պիտակի տակ տեղավորվում էին ռոքերները, մետալիստները, ռեպերներն ու ցանկացած այլ ոչ ֆորմալ երիտասարդ): Ես խորամանկ էի, աշխատում էի չխառնվել: Հատկապես եթե շատ էին լինում, պետք էր ուղղակի փախչել:

Մի անգամ էլ Ազնավուրի հրապարակում բացօթյա ռոք համերգ էր, մեր համար լրված էինք: Մեկ էլ մեկը ուսիս է թփթփացնում, ես ու Գրիշը ֆռում ենք, թե բա՝ կգա՞ք ընդեղ մի հատ խոսանք: «Ընդեղը» կինո «Մոսկվայի» անկյունն էր, որտեղ հիմա Կամին ակումբն է՝ դատարկ տեղ էր, կոիվների համար շատ հարմար: Նայեցինք, տեսնենք՝ էս մութ անկյունը մանրից լցվում է զանազան ջագատյաց եզոներով: Ես էլ մտածեցի՝ մենք էլ մի հարյուր հոգի ռոքեր կլինենք, լավ առիթ է տեղում հարց լուծելու: Ում էդտեղ ճանաչում էի, առաջարկեցի միավորվել: Բայց, ավաղ: Արձագանքեց մենակ Ռոմկան, ինքն էլ լրիվ ջագի չէր, ավելի քյարթաջագ էր՝ բոլորի հետ հանգիստ լեզու էր գտնում: Սա գնաց, մի երկու բառ խոսաց, եկավ, ասեց՝ ձև չկա, ուզում են ձեզ տփեն: Ու քանի որ մեզ աջակցող չկար, սկսեցինք դանդաղ, աննկատ հեռանալ դեպքի վայրից: Անկյունի եզոներից մեկը նկատեց, գոռաց թե՝ «սրանք ցվրվում են» ու էդ ոհմակը քարերով զինված վազեց մեր հետևից: Մի կերպ խցկվեցինք Թումանյանի խաչմերուկում մի հատ մաշված «24» ու հազիվ թռանք:

Չոռտը հիմա՝ էս դեպքերից տարիներ անց, փիլիսոփայում է. «Նորմալ ա, որ մարդիկ չեն սիրում իրանցից տարբերվողների: Ռաբիզները ռոքերներին, ռոքերները՝ ռեպերներին, մեկը մյուսին և այլն: Բայց, մի երկու բառ որ իրար հետ խոսան, լավ էլ ախպերություն կանեն»: Որպես ապացույց բերում է սեփական օրինակը. էն ժամանակներից ուներ ռեպեր ընկեր էլ, ռաբիզ ընկեր էլ, ու էպդիսիք շատերն էին: Պարզապես չգրված օրենքներ էին, որ մասսաներն իրար չեն ընդունում:

Բայց մի լուրջ խփոցի Չոռտի կյանքում էլ է գրանցվել: Համալսարանում քյարթ-համայնքի երկու ներկայացուցիչ որոշել էին բոցվել Չոռտի արտաքինի վրա՝ «բա էդ ե՞րբ տղա դառար, հահա», նման բաներ: Չոռտն ընկերոջ հետ հասկացրեց երկու զվարճասերներին, որ խոսքերի համար պետք է պատրաստ լինել պատասխան տալ: Ծեծված քյարթերը գնացին, շուխուռ գցեցին:

«Երբ իմացա ինձ մի հարյուր հոգով ման են գալիս, մտածեցի նախօրոք տղերքին հավաքեմ, տենց գնամ համալսարան: Բոլորը վրայիցս թռան, ի դեպ: Լավ առիթ եղավ, որ էդ մարդկանց լավ ճանաչեմ ու դրանից հետո էլ մոտիկություն չանեի». ակամայից հիշեցի իմ դեմքն Ազնավուրի հրապարակում... Ինչևէ, Չոռտին ի վերջո բռնացրեցին համալսարանում ու ամբոխով ծեծեցին: «Չնայած շատ ավելի վատ կարող էր լինել՝

ընկա, գլուխս ձեռներով պահեցի, վերջում սկի հիվանդանոցի կարիք չեղավ»: Ականավոր ռոքերի ձայնի մեջ նույնիսկ հիասթափության որոշ նշույլներ եմ նկատում...

Բանը հասավ Չոռտի հայրիկին: «Ահավոր նեղվել էի, որ իմ պատճառով պիտի գնա բազառների մեջ մտնի, բայց ասեց՝ հիմա պապա չեմ, հիմա ավագ ընկեր եմ: Մի խոսքով, մի քանի օր հետո էդ տփող ոհմակն ինձ որտեղ տեսնում էր, քաշում էին մի կողմ, ասում էին՝ ախպերս, որ բան պետք ըլնի, իմացի հետդ ենք: Դրանից հետո էլ ոչ մի տեղ ոչ մեկի հետ ոչ մի պրոբլեմ չեմ ունեցել»:

Իրոք, լիքը տփող ու տփվողներ են եղել մեր ջահել թվերին: Ու որ հիմա երեխեքն ինչ երկարության մազերով ու ցանկացած հագուկապով հանգիստ ապրում են, էդ նաև մեր սերնդի ռոքերների ջանքերի շնորհիվ է եղել:

Էպիլոգ

«2000-ից 2004 թիվն իմ համար ավելի երկար ա տևել, քան մինչև էս օրը: Ոնց որ մի քսան տարի հասցրեցինք ապրել էդ փոքր ընթացքում»,– անթաքույց հպարտությամբ նշում է Չոռտը: «Շատ խնդալու էր, երբ որ մեկ էլ լրիվ հեռավոր անծանոթ մարդիկ գալիս, ինձ իմ մասին ինչ-որ լեգենդներ էին պատմում: Ասում էի՝ հը՞, էդ ո՞ւմ մասին եք հիմա պատմում, ի՞մ: Երանի՜ էդ սաղ պատմությունների գոնե մի փոքր մասն իրոք իրականություն լիներ»:

Հետո գնաց բանակ: «Ու որ եկա, պարզվեց էլ հին տուսովկան չկա, մարդիկ իրարից առանձնացել էին ավելի փոքր-փոքր խմբերի մեջ, սերունդների կապող օղակները ոնց որ շղթայից պոկված ընկած լինեին: Ես էլ հավես չարեցի նույն հավեսով խրվել մեջը: Ժամանակն անցավ»:

Ժամանակն անցավ, եկան նոր ժամանակներ: Նոր մյուզիք ճարելու համար էլ չես գնում «Օրֆեյ», «Դանկո» կամ «Օսկար»՝ Երևանի քարտեզի երեք լուսավոր կետերը, որտեղից եթե մի քանի հոգով էինք լինում, իրար մեջ բաժանում էինք՝ դու էս կառնես, ես էս կառնեմ, էդպես միասին ավելի շատ կասետ կունենանք, քան եթե բոլորս նույնից առնենք: Ինտերնետ չկար՝ իր ինֆորմացիոն ջրհեղեղով ու էդ որոնումները մարդկանց իրար մոտ էին պահում: Հիմա շատ բան է փոխվել շփման մեջ: Մեր ժամանակ մտնում էիր դահլիճ ու հանգիստ գնում ծանոթանում էիր բոլորի հետ (եթե Չոռտը մոտակայքում էր՝ ծանոթություններն ավելի հեշտ էին լինում): Հիմա ով ում հետ եկավ, նույն մարդկանց հետ էլ շփվում ու գնում ա: Չեն խառնվում իրար, չեն ծանոթանում:

Մենք էլ քսան տարով մեծացած աննկատ անցնում ենք բնակարանային հարցի խնդիրներին: «Եթե մեկը 2000 թվին ասեր, որ մենք քսան տարի հետո նստելու ենք խոհանոցում ու քննարկենք Հայաստանում հիպոտեկի վայրենի պայմանները ու սենց դժգոհ փնթփնթանք, որ մարդ չի կարողանում իրա համար տուն առնի, պատկերացնում ե՞ս՝ ոնց կղժայինք վրան,– հրճվում է համարյա 40-ին հասած Չոռտը,– կասեինք՝ ինչ հիպոտեկ, մենք կարանք Կասկադի աստիճաններին ապրենք սաղ կյանքներս: Երևի հիմա էլ կան տենց ազատատենչներ, բայց դե, ավաղ, չէ, ժողովուրդ, չեք կարող»:

Չեն կարող, բայց երևի ամեն սերունդ կյանքում գոնե մի անգամ հավատա էդ անիրական ազատությանը: Մենք հավատում էինք ու լավ էինք անում:

Արտաշես Արշակյան
Վահագն Մամյանի արխիվ

evnmag.com

կարդացեք առցանց

ՌՈՔ ԱԼԻՔԸ ՆՓԱԿ-Ի

↓ Սևադա Պետրոսյանը՝ RockNPAK-ի ժամանակ

Ճարպարապետ և MHHOG ռոֆ խմբի համահիմնադիր Սևադա Պետրոսյանը պատմում է, թե ինչպես 90-ականների կեսերին ՆՓԱԿ-ը վերածվեց ռոֆ էպիկենտրոնի՝ իր շուրջ հավաքելով հայաստանյան գլխավոր խմբերին ու ռոֆասերներին:

25 կարի առագ

1996-ին երկար բացակայությունից հետո նորից հայտնվեցի Երևանում: 19 տարեկան էի, հետաքրքրվում էի ռոքով, նույնիսկ ինքս էի նվագում: Այդպես սկսեցի հարցուփորձ անել, թե այստեղ ով կա, ինչ կա ռոքի ասպարեզում: Արդյունքում հասկացա, որ կա շատ ցրված և ոչ շատ տեսանելի ենթամշակույթ: Ինձ խորհուրդ տվեցին մի օր գնալ Հովհաննես Թումանյանի արձանի մոտ, քանի որ բոլոր ռոքերներն այնտեղ էին հավաքվում: Գնացի ու տեսա, որ հիմնականում դպրոցական տարիքի երեխաներ են, որոնք սիրում էին արևմտյան երաժիշտների և զբաղվում էին նրանց կասետային ձայնագրությունների պեղումներով: Ինձ ավելի շատ հետաքրքրում էին տեղացի կատարողները:

Ծանոթներիցս մեկը ինձ մի ծամած կասետ տվեց, որի մասին այն ժամանակ բոլորը խոսում էին: MDP խմբի կասետն էր, որի երկու հիմնադիր անդամները ներկայիս DOGMA խմբում են հանդես գալիս: Բոլորը գիտեին MDP-ն ու մի քանի այլ խմբերի, բայց նրանց գտնելը շատ դժվար էր, համերգներ կամ չէին լինում, կամ էլ տեղ չէր լինում: Ժամանակի ընթացքում ընկերների միջոցով մի երկու խմբի հետ ծանոթացա, մեր համալսարանում ևս կային տղաներ, որոնք նվագում էին, և սկսեցի պատկերացում կազմել:

Փորձառական

Նույն ժամանակ սկսեցի աշխատել ՆՓԱԿ-ում: Այդ տարիներին այն հիմնական թիմ չուներ, շատ փոքր հիմնարկ էր, որտեղ հավաքվում էին առաջադեմ նկարիչներ, տարբեր փախած ցուցահանդեսներ էին

անցկացվում, և մենք մտածում էինք, որ ՆՓԱԿ-ում տեղի ունեցող գործընթացները պետք է դիվերսիֆիկացվեն: Երաժշտության տեսանկյունից մտածեցինք՝ ի՞նչ կա: Հասկացանք, որ ալտերնատիվ ուղղվածություն է համարվում ռոքը: Մենք ուզում էինք, որ այն արվեստի տեսակները, որոնք արժանի են ներկայացված լինելու լայն հասարակությանը, բայց ինչ-ինչ պատճառներով չեն ներկայացվում, իրենց տեղը գտնեն ՆՓԱԿ-ում:
Նույն 96-ին մի խումբ գտանք՝ Strangers: Նրանք բժշկական համալսարանի ուսանողներ էին, և իրենց փորձասենյակը հենց համալսարանի նկուղում էր: Կիսաքանդ, ցուրտ սենյակ էր, պատերին տարբեր կատարողների պատկերներով: Բավական հետաքրքիր խումբ էր, երեք հոգով նվագում էին պրոգրեսիվ ռոք: Այդպես ՆՓԱԿ-ում մի հետաքրքիր համերգ կազմակերպեցինք: Ցուրտ էր, բոլորը բաճկոններով, տաք շորերով փաթաթված եկել էին նրանց լսելու: Հաջորդը եղավ Angels խումբը: Իմ տպավորությամբ իրենք Երևանի Բոն Ջովին էին:
Այս համերգից հետո է՛լ ավելի շատ մարդիկ սկսեցին նկատել, որ ՆՓԱԿ-ում ինչ-որ հետաքրքիր գործընթացներ են տեղի ունենում: Դեռ մինչ այդ՝ շուրջ երեք տարի շարունակ, ՆՓԱԿ-ը կազմակերպում էր Երիտասարդական արվեստի փառատոն: Այսօր այն կոչվում է Արվեստի այլընտրանքային փառատոն: Այս փառատոնի շրջանակներում որոշեցինք հրավիրել ռոք խմբերի, որոնք նոր են, վերջին տարում են կազմավորվել: Երկու խումբ նվագեցին՝ The Kings Cross-ը և If-ը: Այս խմբերը հետաքրքիր էին նրանով, որ արդեն նոր սերունդ էր, նրանք պարզապես Beatles կատարելուց հասել էին նրան, որ սեփական գործերն էին նվագում:

↓ Amber խմբի երույթը

← ↑ Ուստան Հայոց

↓ ԱԼՔ



Հայտարարություններով փառատոն

Միևնույն ժամանակ, Երևանում կային այլ խմբեր, որոնք ավելի մեծ սերնդից էին: Բնականաբար ռոքը շատ ավելի շուտ էր սկսվել Հայաստանում: Պարզապես այդ խմբերն ընդհատակային կյանքով էին ապրում, իրար գիտեին հեռվից, ակտիվ չէին: Նախկինում այլ փառատոներ եղել էին, որոնցից մեկը Gaudeamus-ն էր, որի մասին բոլորը խոսում էին: Մտածեցինք՝ ինչո՞ւ մենք նման մի բան չկազմակերպենք, տեսնենք՝ ով կա առհասարակ այդ դաշտում: Մենք կարծում էինք, որ հոյակապ կլինի, եթե զոնե չորս-հինգ խումբ նվագի: 98 թվականի սկզբին հայտարարությունը տարածեցինք: Այսինքն պրինտերով տպած պաստառները փակցրեցինք համալսարանների պատերին, մետրոյում և նման այլ վայրերում:
Այն ժամանակ ՆՓԱԿ-ը երևի երկու աշխատող ուներ: Գործադիր տնօրենը Միքայել Մկրտչյանն էր, որի գաղափարն էր փառատոն կազմակերպելը: Կար նաև տնտեսվարը և ես, որ ուղղակի կողքից օգնում էի: Ծանոթություններով կազմակերպչական խումբ հավաքեցինք, որի մեջ էին Միքայելը, ես (ՆՓԱԿ-ի երաժշտության բաժնի կորդինատոր), «Ուստան Հայոց» խմբի լիդեր Արեգ Նազարյանը, նկարիչ, «ԱՐ» հեռուստաալիքի «Քաղաք» հաղորդաշարի հեղինակ Գրիգոր Խաչատրյանը, «Մարկատո» պարբերականի հեղինակ Արման Պաղարյանը և Միքայել Բալասանյանը,

Փառատոնին էություն ունեցած բոլոր խմբերի ցուցակը (ըստ այբբենական կարգի, կազմակերպման թվական և անդամներ)՝

- *ԱԼՔ, 1995, Անդրեյ Ափոյան, Հովսեպ Աղավերդյան, Սարեն Գրիգորյան, Դավիթ Գրիգորյան*
- *Alter Ego, 1997, Էդգար Բարսեղյան, Լևոն Գևորգյան*
- *AMBER, 1995, Արտաշ Հարությունյան, Արթուր Դգիթյան, Հրանդ Ղորուխչյան*
- *Angels, 1995, Արտակ Անյայան, Վլադիմիր Սոֆյան, Հովսեպ Աղավերդյան,*
- *Ass Kissers, 1993, Խաչատուր Միհիթարյան, Վարդան Սահակյան, Ռոբերտ Մաթևոսյան, Լևոն Հախվերդյան*
- *Բանբիռ 2, 1996, Նարեկ Բարսեղյան, Արման Քոչարյան, Մեր Վարդիկյան, Արեգ*
- *Empyray, 1992, Սարեն Արզումանյան, Սերգեյ Ջանգիրյան, Սեյրան Մաթևոսյան, Սարգիս Սանուկյան*
- *Hieronymus Bosch, 1988, Միխայել Բալասանյան, Արտաշես Բալասանյան*
- *IF, 1998, Հայկ Գոչանյան, Գևորգ Բաղդասարյան, Սերգեյ Ազարյան*
- *Լավ Էլի, 1997, Ալեխս Ավետիսյան, Մեր Սանուկյան, Դավիթ Գրիգորյան*
- *ՆԱԱՍ, 1998, Արթուր Մարտիրոսյան, Արսպիոն Դանիելյան, Աբրահամ Գրիգորյան, Նորիկ Ղազարյան*
- *Ro The U, 1992, Սերգեյ Մելիք-Բարիտոնդյան, Դիմա Սկրտչյան, Գրիգոր Իշբուխա, Լևոն Հախվերդյան*
- *Time, 1997, Աշիկ Աբազյան, Վանիկ Հակոբյան, Վահե Հակոբյան, Հայկ Ավետիսյան, Արտակ Ներսիսյան, Մհիգրան Սարսպեկյան*
- *Объединение TUSH, 1996, Արտաշ Բաղասանյան, Արթուր Բարսեղյան, Սմբատ*
- *ВИА ИМЕНИ ДЖОНА ТРЛИНСКИ, 1997, Մհիգրան Մարտիրոսյան, Նորայր Չիլինգարյան, Անհայտ Զինվոր*
- *Ուսրան Հայոց, 1986, Արեգ Նազարյան, Դավիթ Մուշեղյան, Հովհաննես Սուրենյան, Լևոն Միքայելյան, Լևոն Հախվերդյան*
- *The One Man Band, 1995, Սևադա Պետրոսյան*
- *King's Cross, 1998, Հենրիկ Սարգսյան, Աշոտ Առաքելյան, Սոդոմ Բաբիկյան, Սուրեն Սարգսյան*
- *PEGAS, 1998, Գուրգեն Ներսիսյան, Վարդան Ավինյան, Մհիգրան Ներսիսյան, Վահե Բորեյան*

Լուսանկարների արդիագանձը

ով Հայաստանում ռուսական փանք ռոքի կարկառուն ներկայացուցիչներից էր և Hieronymus Bosch խմբի առաջին դեմքը:
Մեզ նաև մեծապես օգնեց Արարատ Բաբիկյանը, ով շատ հետաքրքիր կերպար էր՝ Վերնիսաժի մոտ նստում նվագում էր ու նաև երաժշտական գործիքներ էր վաճառում: Իր արվեստանոցում հազարավոր գործիքներ ուներ և աղքատ երաժիշտները հենց իր մոտից էին գնում իրենց գործիքները:
Ստացանք մոտ 40 հայտ: Հիմնական պայմանները երկուսն էին՝ ներկայացնել ռոքի որևէ ժանր և անպայման ունենալ հեղինակային գործեր: Այդ պայմաններով մաղելու արդյունքում կանգնեցինք մոտ 20 խմբի վրա: Դա Հայաստանում չտեսնված բան էր՝ 20 խմբով փառատոն:

Հրաչի սարիալորումները

ՆՓԱԿ-ն ուներ հսկայական դահլիճ, որը պիտի տեղավորեր մեր հանդիսատեսին: Արդեն պայմանավորվել էինք սարքավորումների համար և խմբերի հետ առանձին հանդիպումներ էինք ունեցել: Սկսում ենք աշխատել, գալիս հասնում է փառատոնի նախօրեն: Պետք է բերվեն սարքավորումները, որ տեղադրենք ու սաունդչեք անենք: Սարքերը բերում են և պարզվում է, որ դրանք բացարձակապես չեն համապատասխանում նրան, ինչ մեզ պետք է: Վաղը պիտի սկսվի փառատոնը: Նստած մտածում ենք՝ ինչ անել: Ուստան [Արեգ Նազարյանը – խմբ.] ասում է. «Ինձ 1000 դրամ փող տվեք, ես կգնամ սարքավորումներ կբերեմ, դուք գործ չունեք»: Տալիս ենք գումարն ու նստում սպասում, որ հեսա մի քանի ժամ անց պիտի սարքավորումները հասնեն: Մի քանի ժամ անց գալիս է Արեգը՝ քեֆը լավ, այդ 1000 դրամն էլ երևի խմիչքի վրա էր ծախսել: Երևանում կար մի Հրաչ, բավական մեծ չափերի մարդ էր, ով հայտնի էր նրանով, որ քաղաքի ամենալավ սարքավորումներն իր մոտ էին: Արեգը գնացել էր իր մոտ և համոզել, որ բավական էժան գնով սարքավորումները վարձակալենք:
Առավոտյան ժամը 5-ին բեռնատարներով սարքավորումները բերեցին մեզ մոտ: Բոլորս՝ կազմակերպիչներ, երաժիշտներ, մասնակիցներ, առավոտվա այդ ժամին հավաքվել ենք ՆՓԱԿ-ի դռան առջև, տեղափոխում ենք սարքավորումներն ու դնում ձայնը: Այդ ընթացքում այլ խնդիրներ են առաջանում: Մի քանի հոգի, ում մերժել էինք, գալիս են պարզելու, թե ինչու չենք նվագելու, մենք սկսում ենք բացատրել: Այդ պահին հայտնվում է Բամբիռի Ջազը՝ երեխեքի հետ և հարցնում՝ արդյո՞ք կարող են իրենք

↑ Ուպրան Հայոց

էլ նվագել: Այդ ժամանակ հիմիկվա Բամբիռի տղաները մոտ 14-15 տարեկան էին, որոշեցինք, որ հենց իրենք էլ կբացեն փառատոնը:
Ընդհանուր առմամբ այս ամենի վրա ծախսեցինք մոտ 500 դոլար: ՆՓԱԿ-ի կողքը կար մի բիստրո, որտեղ քաղաքապետարանի աշխատակիցները 200 դրամով կարտոֆիլ ու նրբերշիկ էին ուտում, բայց բացի դրանից այնտեղ «Հոլութոն» գարեջուր էին տալիս: Նրանց պատուհանը բացվում էր հենց ՆՓԱԿ-ի մուտքի մոտ և որոշեցինք, որ էժանով գարեջուր կվաճառեն մասնակիցներին:
Այդպես 98 թվականի հունիսին կազմակերպվեց ՆՓԱԿ-ի առաջին ռոք փառատոնը: Իրոք, բոլոր քսան խմբերը նվագեցին, համերգը տևեց մոտ 12 ժամ: Այդ օրվա մասնակիցներից խմբեր կան, որոնք այսօր էլ գործում են: Օրինակ՝ «Լավ Էլիի» հետ այնտեղ եմ ծանոթացել: Նրանք արդեն շուրջ երկու տարի է նվագում էին, հասցրել էին խմբի անվանումը փոխել և արդեն կար իրենց ամենահայտնի «Գտա քեզ երկնքում» երգը: Հենց այդ երգն էլ նվագեցին փառատոնի ժամանակ:
Այս փառատոնի մեկ այլ հետաքրքիր կողմերից եղավ այն, որ ծանոթացանք հայաստանյան բայքերների ենթամշակույթի հետ: Նրանց էլ հրավիրեցինք, որ գան և իրենց մոտոներով դահլիճ մտնեն: Իսկ անվտանգությունն ապահովում էին այկիդոյով զբաղվող մի խումբ մարզիկներ:
Կարող է անհավատալի թվալ, բայց այդ օրն ընդհանրապես ագրեսիայի որևէ դրսևորում չկար: Թեև խմիչքը շատ էր, բայց ոչ մի կռիվ չեղավ: Իսկական փառա-տոն էր: Տոմսեր էինք վաճառում և տարիներ անց իմացա, որ դրանք այսպես ասած սև շուկայում էին հայտնվել: Մենք ծախսել էինք մոտ 500-600 տոմս, բայց մեր հաշվարկներով փառատոնին եկել էր 1000-ից ավել մարդ:

ՆՓԱԿից՝ Սրոպ

Սա ռոքի սկիզբն էր ՆՓԱԿ-ում, ինչը խթանեց մի քանի կարևոր գործընթացի: Երկու այլ ավելի փոքր փառատոն կազմակերպեցինք, մեկը Հելոուինի թեմայի մեջ էր, մյուսն ավելի ռոքնռոլային մթնոլորտի մեջ: Այլ մարդիկ ևս սկսեցին տարբեր վայրերում ռոք միջոցառումներ կազմակերպել, բայց բոլորի աչքը ՆՓԱԿ-ի վրա էր, քանի որ երկար տարիների դադարից հետո հենց այնտեղ էր առաջին անգամ կազմակերպվել նման մասշտաբային ռոք փառատոն:
Բացի այդ, Մալխասյան Արթուրը՝ Ուստան Հայոց խմբի ընկերներից, ով ևս ռոքի մեծ սիրահար էր, առաջարկեց, որ այդ փառատոներն ավելի փոքր տարբերակով, ավելի հաճախակի բնույթ կրեն: Նա իր վրա էր վերցնում ապահովությունն ու գարեջուրը: Միջոցառումների ընթացքում նվագելու էին մի քանի ռոք խմբեր. համ գումար կաշխատեինք, համ ավելի կզարգանար ոլորտը: Ցավոք, ՆՓԱԿ-ում նման գործունեության հնարավորություն չեղավ, բայց Արթուրը չհրաժարվեց իր մտքից և արդյունքում ստեղծվեց ռոք ակումբը, Երևանի առաջին ռոք ակումբը, որը գտնվում էր այսօրվա Stop ակումբի տեղում:
Այնուհանդերձ զգում էինք, որ սկսնակ խմբերի համար քիչ տեղ կա: Նրանց ռեպերտուարն ավելի փոքր էր, դժվար էր իրենց համար տոմսեր վաճառելը: Մտածեցինք, որ կարելի է շարունակել այն, ինչ սկսել էինք դեռ 98-ին՝ ՆՓԱԿ-ի Երիտասարդական արվեստի փառատոնի շրջանակում և կազմակերպել նորաստեղծ խմբերի փառատոն: Այս փառատոներն անվճար էին, լիքը նորաստեղծ խմբեր հենց այդ փառատոների ժամանակ արեցին իրենց առաջին քայլերը: Սարքավորումների խնդիրն արդեն այդքան սուր չէր, քանի որ ՆՓԱԿ-ն ուներ իր սեփականը:

Ինչեսպ

Այդ ժամանակ, բացի փառատոներից, ՆՓԱԿ-ի տանիքի տակ ես փորձում էի առանձին խմբերի առաջ տանել: Նրանցից մեկը Ինցեստն էր, չորս աղջիկներ էին՝ թե՛ երաժշտության տեսակով, թե՛ բառերով շատ հետաքրքիր էին, ծանր երաժշտություն էր, բայց ունիկալ: Նրանց այդ բավական սեքսիստական ոլորտում, որտեղ գերակշռում էին տղամարդիկ, շատ դժվար էր առաջ շարժվելը, և ես որոշել էի օգնել:
Այն ժամանակ ստուդիայում ձայնագրվելը բավական թանկ հաճույք էր մեզ համար, բայց մենք, միևնույն է, որոշեցինք դա կազմակերպել: Աղջիկների համար ՆՓԱԿ-ի սենյակներից մեկում դեմո ալբոմ ձայնագրեցինք, որից շուրջ հարյուր օրինակ վաճառեցինք: Արդեն 2005-ին կարողացանք նրանց մի քանի գործ հենց ստուդիայում ձայնագրել և պատրաստվում էինք շարունակել, բայց, ցավոք, խումբը ցրվեց:

Ռոքի մեղմայումը

Արդեն քայլ առ քայլ դաշտը բացվում էր, հայտնվում էին վայրեր, որտեղ ռոք երաժիշտները կարող էին ելույթ ունենալ, ինչու ոչ, նաև գումար աշխատել: Ոլորտը զարգանում էր և արդեն ՆՓԱԿ-ից դուրս: Ռոքն այլևս այդքան էլ ալտերնատիվ չէր, այժմ վերելքի վրա էլեկտրոնային երաժշտությունն էր և ինքնաբերաբար ռոքի ներկայությունը ՆՓԱԿ-ում մեղմվեց:
Գուցե նաև ես էի արդեն հոգնել, քանի որ ամեն մի փառատոնը բավական ծանր էր, թեև ինձ բոլոր կողմերից օգնում էին:
Մինչ այդ ևս մեծ փառատոներ եղել էին, նույն 80-ականներին անցկացված Վելատրեկի փառատոնը, բայց նման «բումի» կարողացավ հասնել երևի թե միայն ՆՓԱԿ-ը և այն մնաց մարդկանց հիշողության մեջ, որպես ռոք ոլորտի ամենամեծ երևույթներից մեկը: 90-ականներին չկար փող, սարքավորումներ, բայց կար շատ յուրահատուկ էնտուզիազմ:

Մենք ցանկանում ենք մասնակցել 99.9 ռոք փառատոնին
հետևյալը մեր խմբի տվյալներն են
անվանում Titan
կազմավորման թվական 1993 /XI
լիքեր
կազմ
հաճախում 1994
1995
1996
ծախսագրություններ
արդյունք
հասցե, հեռախոս

← Titan խմբի հայտը

Մարգարիտ Միրզոյան
ՆՓԱԿ արխիվ / Վռամ Հակոբյան

ՇԻՇԱՎՈՐՎԱԾ Է ՀԱՅԱՍՏԱՆՈՒՄ

Ինչպես ֆրանսիայի Լյուկ Հասասը հայտնվեց հեղափոխիր-դային Հայաստանում, և ինչպես նրա շնորհիվ ՆԱՏՈ-ն դարձավ առազին հայկական ռոք խումբը, որի երաժշ-տությունը թողարկվեց արտերկրում վինիլային կրիչով: Հայոց փանկի խորհրդավոր էջերից մեկի մասին շփվել ենք գլխավոր գործող անձանցից երկուսի հետ:

Ռուսական Ռոք: Շիշավորված է Հայաստանում:

→ Հայնագրման ընթացքում

Չինական հրապարակի անունով

Լյուկ Հասասը սկսեց ճանապարհորդել, երբ 18 տարեկան էր: 1983-ին կյանքը նրան հասցրեց սոցիալիստական Լեհաստան, որտեղ այդ ժամանակ սահմանված էր արտակարգ դրություն: Հենց այդ ճամփորդությունն էլ Լյուկի համար դարձավ որոշիչ: Նա հայտնաբերեց լեհական փանկը, որն այդ պայմաններում է՛լ ավելի հետաքրքիր էր թվում, և սիրահարվեց: «Առհասարակ իմ ճանապարհորդելու նպատակը, աշխարհը տեսնելուց զատ, հենց հետաքրքիր երաժշտության և խմբերի բացահայտումն էր,- պատմում է Լյուկն այդ իրադարձություններից գրեթե չորս տասնամյակ անց,- ես ուզում էի լսել գործեր ինձ անծանոթ լեզուներով և ճանաչել այդ երկրներն իրենց բնորոշ երաժշտության միջոցով»:
Շուտով պարզապես երաժշտական ծանոթությունները վերածվեցին երաժշտական արտադրանքի: 1993-ին նա թողարկեց առաջին վինիլային սկավառակը և հիմնեց սեփական լեյբլը՝ Tian An Men 89 (ակնարկելով պեկինյան հրապարակը, որտեղ 1989 թվականին տեղի են ունեցել խոշոր բախումներ ուսանողների և ոստիկանների միջև):
Լեյբլի նպատակն է բացահայտել փանկն այն երկրներում, որոնք դուրս են մնացել ուշադրությունից: Tian An Men 89-ը թողարկում է սահմանափակ քանակությամբ վինիլային ձայնապնակներ Ասիայում, Միջին Արևելքում, Աֆրիկայում, Լատինական Ամերիկայում և նախկին Սովետական Միության երկրներում ստեղծագործող փանկ խմբերի կատարումներով: Օրինակ հայաստանյան ՆԱՏՈ-ն հենց այդ տեսակի անդերգրաունդ էր:
«Ես ուզում էի թողարկել փանկն աշխարհի այն անկյուններից, որտեղ ֆինանսական խնդիրների, պատերազմական և այլ կոնֆլիկտային վիճակների հետևանքով փաստացի հնարավոր չէ նման երաժշտության թողարկումն ու տարածումը»,– պատմում է Լյուկը: Բայց լեյբլը Հասասի անձնական հոբին էր: Այն չէր կարող լինել գումար վաստակելու միջոց, քանի որ 90-ականներին մարդիկ փանկով առանձնապես չէին հետաքրքրվում, այն էլ՝ աշխարհի հեռավոր ծայրերից, վինիլների արտադրությունն էլ ամբողջ աշխարհում ձգտում էր զրոյի:

Կիսափակ սահմաններ

1993-ին Լյուկը որոշեց մի երկար ճանապարհորդություն իրականացնել, որի արդյունքում հայտնվեց Հայաստանում, թեև, ինչպես այսօր ծիծաղով հիշում է, որևէ պաշտոնական փաստաթղթով դա ապացուցել անհնար է...
Սկզբի համար Ֆրանսիայից ավտոբուսով ուղևորվեց Ուկրաինա՝ Լվով: Լյուկը գնեց տոմս մի ուղղությամբ, վերցրեց մի պայուսակ և նստեց ավտոբուսը: Սահմանին նրան 5 դոլարով տրանզիտային վիզա տրամադրեցին, որը ուժի մեջ էր ընդամենը 5 օր: Դա այս ճանապարհորդությանը վերաբերող առաջին ու վերջին պաշտոնական նշումն էր իր անձնագրում:
Հետո գնաց Կիև, Կիևից՝ Մինսկ, հետո Սանկտ-Պետերբուրգ: Սահմանները հատելիս նրան նույնիսկ չկանգնեցրին: Հետո գնեց օդանավի տոմս դեպի Երևան: Մեկնելիս կրկին ոչ մեկ չհարցրեց իր անձնագիրը, իսկ Երևանում օդանավակայանը դատարկ էր, մաքսակետեր չկային, ընդունարանների սեղանների մոտ ևս դատարկ էր: Լյուկը պարզապես օդանավից մտավ շենք և դուրս եկավ, վերցրեց տաքսի և խնդրեց վարորդին տանել կենտրոն:

Դատարկ օդանավակայան

Տարածաշրջանում տոտալ քաոս էր, Հայաստանում դեռ օգտագործում էին սովետական ռուբլիներ, որոնք չէին գործում նույնիսկ Ռուսաստանում: Ոչ մեկ չգիտեր կանոնները, կար որոշակի տարօրինակ ազատություն: «Հյուրանոցն առաջին վայրն էր, որտեղ ինձնից անձնագիր պահանջեցին և նկատեցին, որ վիզա չունեմ,– պատմում է Լյուկը,– Բայց խնդիր չեղավ, ես վճարեցի իմ սենյակի համար և ամեն ինչ նորմալ էր»:
Այսօր էլ հիշում է, որ երկրում շատ ծանր վիճակ էր. պատերազմ էր, պարբերաբար անջատումներ էին լինում, մետրոն գրեթե միշտ կանգնած էր, և նա սկսեց շրջել Երևանով, հարցուփորձ անել երիտասարդներին տեղական ռոք երաժիշտների մասին: Որոշ ժամանակ փնտրելուց հետո նրան պատմեցին ՆԱՏՈ-ի մասին: «Ես կապվեցի նրանց հետ և ինձ հրավիրեցին իրենց փորձատեղ, որը քաղաքի ծայրամասում էր, «ԱրմՊրոեկտ» ինստիտուտի լքված շենքում,- հիշում է Լյուկը,- երկար քննարկեցինք, լուսա-

↑ ՆԱՏՈ-ն և
Լյուկ Հասասը
(ազիզ երկրորդը)



ARMENIA

Arriving at Yerevan airport was a pain in the ass. The plane from St. Petersburg was kind of charterized and I was the only non-Armenian on board. Don't get me wrong, I really LOVE being the only foreigner in weird places, and Armenians are really nice people. But somehow I wasn't fitting in the work plan of the Armenian capital's airport employees, which refused for half an hour to take my backpack out of the plane's luggage boot: they virtually had emptied it under my eyes, taking out and handing directly their luggage to the other passengers, and left my own bag inside, definitely refusing to give it to me despite my insistence. They talked to me in Russian and I didn't understand, then left. I stayed under the Tupolev 154's bottom, desperately trying to find someone with a ladder or something to climb inside for half an hour, several other airport employees refusing to help me, and I was wondering if I would have to spend the night under the plane. Finally a helpful Russian plane staff succeeded in convincing an Armenian to get inside and give me my bag. The airport building was empty: no immigration control, no customs, no information desk, no other passenger. I was the last one to get out. Outside, some taxi drivers were busy taking a nap or discussing under the

← Լյուկ Հասասի հուշերը Հայաստանի մասին՝ ռոֆ թերթերից մեկում

նկարներ արեցի , նրանք մի քանի գործ կատարեցին, և ես՝ շատ զոհ լսածիցս, որոշ ձայնագրություններ վերցրի հետս»:

Ռուսական ռոֆ՝ շիշավորված Հայաստանում:

Այդ տարիների հայաստանյան անդերգրաունդը ռուսական ռոքի մեծ ազդեցության տակ էր: Համերգների ժամանակ «Կինոյի», «Ակվարիումի», «Սեկտոր Գազայի» ու այլ հայտնի խմբերի քավրները սովորական երևույթ էին, շատերն էլ իրենց հեղինակային երգերը գրում էին ռուսերեն՝ ոգեշնչված սիրված կատարողներից: ՆԱՏՈ-ն բացառություն չէր: Լյուկի օգնությամբ թողարկված սկավառակի վերնագիրը հենց այդպես էլ ասում էր՝ «ռուսական ռոք: Շիշավորված է Հայաստանում» (պահպանել ենք սկավառակի վրայի հեղինակային ուղղագրությունը):

ՆԱՏՈ-ի համահիմնադիր Արամ Սահակյանը պատմում է, որ ամեն ինչ սկսվեց ընկերներին մի փառատոնի կազմակերպման մեջ օգնելուց: 90-ականների սկիզբն էր, Հայկ Հարությունյանը և Արայիկ Մավիսակալյանը որոշեցին «Ալմաստ» գործարանի տարածքում ռոք փառատոն կազմակերպել: Արամը, ով այդ ժամանակ աշխատում էր Ազգային սեյսմիկ պաշտպանության կենտրոնում, իր վրա վերցրեց միջոցառման կազմակերպչական աշխատանքների, ձայնային ապահովման և գործիքներին վերաբերող հարցերի մի մասը:

Ընթացքում նա զգաց, որ որոշակի պասիվություն կա ոլորտում, որ առհասարակ «շատացել են ռաբիզ կերպարները», որոնց պետք է մի լավ զարմացնել: Նա որոշեց խումբ հիմնել, սկսեց փառատոնի շուրջ հավաքված մարդկանց հարցուփորձ անել, թե նրանցից ո՞վ ի՞նչ կարող է նվագել: Խումբը հավաքվեց շատ արագ, ընդամենը մի քանի երգ փորձեցին, որպեսզի հաջորդ օրը հայտնվեն բեմում: Հարվածային գործիքները նվագում էր Արթուր «Մաշտոց» Թարփուշյանը, ստեղնաշարայինները հայտնվեցին Դավիթ Կազարյանի ձեռքում, Արամ Սահակյանը նվագում էր կիթառ և երգում էր, իսկ Արթուր Վենգերժանովիչը բասիստն էր ու երգերի մի մասի հեղինակը: Ավելի ուշ նրանց նաև միացավ Արթուր Ջաղինյանը:

«Երգերի մեծ մասը գրվում էր կոլեկտիվ ուղեղով,– հիշում է Արամը,– մեր գործերը նման չէին այն ժամանակվա ռոք խմբերի ասպետական սիրո մասին երգերին: Դրանք տարբեր էին, լացակումած ռեգիից մինչև «Սեկտոր Գազայոտ» ռոքնռոլ»:

Ականզ ծակող ու անհարմար

Ի վերջո, կարելի է ասել, որ ՆԱՏՈ-ն դարձավ հայաստանյան առաջին խումբը, որի ալբոմը թողարկեցին վինիլային տարբերակով արտասահմանյան երկու լեյբլներ: Ձայնապնակներից մեկը թողարկվեց ամերիկյան Վիսքոնսին նահանգում Beer City Records ընկերության կողմից: Այդ նույն լեյբլը մոտավոր նույն ժամանակահատվածում թողարկել էր հայաստանյան մեկ այլ՝ «Ռոդեռս» խմբի երաժշտությունը: Դեր խաղաց այն, որ ընկերության հիմնադիրներից մեկը ամերիկահայ էր, ով պատահաբար ամսագրերից մեկում կարդացել էր հեռավոր Հայաստանում գործող փանկ մշակույթի մասին:

Մյուս թողարկումը եղավ Սթրասբուրգում՝ Tian An Men 89 լեյբլի ներքո: Արամը Լյուկից ֆաքսով ստանում էր սկավառակի շապիկի դիզայնի տարբերակներ, ինքն էր ուղարկում հայկական դեկորի դետալներ և խմբի երգերի տեքստեր, որպեսզի այդ ամենը տեղ գտնի շապիկի վրա:

«Ի տարբերություն այլ տեղական ռոք բենդերի՝ մենք ուզում էինք, որ ՆԱՏՈ-ի երաժշտությունը ծակեր ուրիշների ականջը, անհարմար լինել ցույց տալու բարեկամներին, հեռուստացույցով որևէ կերպ չերևար,– հպարտությամբ հիշում է Արամը,– և արտասահմանյան լեյբլներին դա հետաքրքիր էր, ի վերջո՝ նրանք էին մեզ հետ կապի դուրս եկել»:

Լյուկը ՆԱՏՈ-ի ձայնագրությունները ձեռքին մեկ շաբաթ Հայաստանում մնալուց հետո որոշեց, որ ժամանակն է շարժվել առաջ և գնալ Վրաստան, որտեղ քաղաքացիական պատերազմ էր թնդում (ուրեմն հետաքրքիր երաժշտություն էլ կարելի է գտնել): «Իմ ընկերներն ինձ ասում էին, որ Հայաստանում ապահով է, քանի որ այստեղ նրանք գիտեն, թե ում դեմ են պայքարում և ով է նրանց թշնամին, իսկ Վրաստանում մարդիկ մեկը մյուսի դեմ են ելել,»– հիշում է Լյուկը:

Միզսկգային համբավ

Լյուկի խոսքով՝ ՆԱՏՈ-ն սիրվեց արտասահմանցի ունկնդրի կողմից: Հետաքրքիրն այն է, որ 90-ականներին պնակների վաճառքը մեծ չէր, բայց վերջին տարիներին շատերը սկսել են հետաքրքրվել առհասարակ փանկով և ՆԱՏՈ-ի երգերով (հերիք է կարդալ YouTube-ում խմբի կատարումների տակ թողված մեկնաբանությունները՝ ամենատարբեր երկրներից):

«Եթե մարդը հետաքրքրվում է իմ լեյբլով, դա արդեն իսկ նշանակում է, որ նրան գրավում է արտասովոր երաժշտությունը,– պատմում է Լյուկը,– այն ժամանակ դժվար էր վաճառել վինիլները և այդ թվում ՆԱՏՈ-ինը, բայց այսօր այդ պնակների օրինակները սփռված են ամբողջ աշխարհով, բոլոր նրանց մոտ, ովքեր սիրում են հետաքրքիր ու մի քիչ էլ տարօրինակ գործեր»:

Սակայն այդ խառը ժամանակներում երաժշտությամբ զբաղվելը, մեղմ ասած, հեռանկարային չէր: 90-ականների վերջում գրեթե բոլոր անդամները տարբեր ուղղություններով լքեցին Հայաստանը, ըմբոստ փանկային տարիները մնացին անցյալում: Որպես հուշ մնաց կոլեկցիոներների մոտ արդեն լեգենդար համարվող վինիլային սկավառակը:

Լյուկը շուրջ 25 տարի աշխատեց Կարմիր խաչի միջազգային կոմիտեում, եղավ բազմաթիվ այլ կոնֆլիկտային երկրներում, լսեց շատ այլ թաքնված փանկ խմբերի և հիմա, արդեն թոշակի անցած, պատրաստվում է նորից վերակենդանացնել Tian An Men լեյբլը, բացահայտել ընդհատակյա ռոքը՝ հին ու բարի ժամանակների պես:

Մարգարիտ Միրզոյան
Լյուկ Հասասի արխիվից

...ՈՒ ՌՈՔ

Լուսանկարիչ Վահան Ստեփանյանը ԵՐԵՎԱՆի խնդրանքով առաջին անգամ խորացավ իր քսան տարվա ֆոտո արխիվի մեջ՝ հատուկ ռոքային կադրեր պեղելու համար: Այն, ինչ ստացվեց արդյունքում, կարելի է համարել 21-րդ դարի հայկական ռոքի ֆոտոպատմություն:

→ Բամբիո 2020



← Գոռ Սուքյան, 2006

→ Գայա Հարությունյան /
Deti Picasso, 2004

↓ Ռոֆ համերգ, 2007

Վահան Ստեփանյան

1997 թվականին իմ կյանքում տեղի ունեցած մի շարք իրադարձություններից, ինչպես հետո պարզվեց, միակը, որ պիտի մնար հիշողությանս մեջ՝ King Crimson-ի առաջին ալբոմի աուդիո կասետն էր, որը Ջեֆը տվել էր ինձ լսելու ու երևի գեղագիտական աշխարհընկալումս ընդլայնելու համար: Մյուս անգամ Ջեֆը, ում իրական անունը Վահագն էր, իմ կյանքում պիտի հայտնվեր 2002-ին, հրավիրեր իր Oaksenham խմբի փորձերին ու համերգին, ես պիտի լուսանկարեի համերգը, իրենք պիտի թողարկեին իրենց առաջին ձայնասկավառակը, իմ լուսանկարները պիտի տպվեին այդ սկավառակում ու այդտեղից ամեն ինչ սկսվեր:
Բամբիռներ, The Kings Cross ու Alter Ego, տիկնիկային թատրոն, Վահան Արծրունի ու Կոմիտաս, հանրայինով համերգներ, Sard ու «Դոմժուռի» պադվալ, Reincarnation, բայց դեռ ոչ այսքան բարի, Stop, MDP, Ոստան Հայոց, Deti Picasso, Dogma, ռոք փառատոն, «Այաս», մի հատ էլ ուրիշ փառատոն, բայց ավելի ծանր, մի հատ էլ «Այաս», բայց սիմֆոնիկ նվագախմբի հետ, Zhesht, Որդան Կարմիր, Լավ էլի՝ առանց Գոռ, Լավ էլի՝ Գոռի հետ, Գոռ Սուջյան, որ դեռ խումբ չունի, նոր խմբեր, որ դեռ անուն չունեն ու էդպես՝ անվերջանալի շրջան ու անվերջանալի քանակի ֆոտոներ:
Հիմա առաջին անգամ եմ փորձում մոտ 20 տարվա նկարածիցս ինչ-որ կադրեր առանձնացնել ու հավաքել մի տեղ, քանի որ մտքովս չի անցել երբեք, որ մի վայրկյան կարելի է կանգնել կամ առավել ևս, որ էս ամեն ինչը ավարտվել է: Ուղղակի մի հատ երկար ռոլ ա... Ու ռոք:

↓ Ռոլանդ Գասպարյան /
Reincornation, 2008

← Road Movie, 2009

↑ The Kings Cross, 2004

← Էդգար Բարսեղյան /
Alter Ego Stop club-ում, 2008

↑ Արեգ Նալբարյան /
Ուպան Հայոց, 2007

→ Dogma, 2009

← Վահան Արծրունի, 2003

→ Արսեն Հակոբյան /
Sworn, 2007

↓ Վահագն «Jeff» Պապայան /
Oaksenham 2008

← Սորյուն Բոբիկյան /
Stryfe, 2008

← Alter Ego, Sard,
ռայկոմի փոքրֆայեր, 2003

↓ Արթուր Միսիրյան /
Ayas, 2008

/ Վահան Սրբեիանյան

ST OP տալ չկա՞

ԵՐԵՎԱՆՆ հանդիպել և կրուցել է Stop ակումբի սեփականատեր Մկրտիչ Բալասանյանի, FairWind խմբից Վարդգես Հովեյանի և Alter Ego խմբի հիմնադիր Էդգար Բարսեղյանի հետ, ովքեր տարբեր ժամանակներում կյանքի մի մեծ շրջան անցկացրել են «Բրյուսովի փակ» գտնվող նկուղային ռոք հավաքատեղիում:

Մկրտիչին հանդիպեցի հենց Stop-ում՝ իր բնական միջավայրում: Ակումբի ղեկավարը չունի առանձին աշխատասենյակ, նախընտրում է իր հաշվարկները սրահի անկյունային մասի ակվարիումի կողքը գտնվող սեղանի մոտ կատարել՝ ընթացքում շփվելով աշխատակիցների և այցելուների հետ: Հենց այդ սեղանի մոտ էլ նստեցինք և փորձեցինք վերականգնել սկզբում ռոք ակումբի, իսկ հետո արդեն Stop-ի անցած օրերը: Մկրտիչը, իր շուրջը նայելով, ասում է, որ այս պատերը շուրջ 23 տարի ռոք են լսել և, իհարկե, բազմաթիվ պատմությունների ականատես եղել:

Ռոք ակումբը

Stop-ը բացվել է 2005-ին, իսկ մինչ այդ այս նույն տարածքում գործում էր տարածաշրջանի առաջին ռոք ակումբը՝ «Ինտելեկտ Լիգան»: Ակումբի հիմնադիրն Արթուր Մալխասյանն էր՝ ազատամարտիկ, մահապարտների ջոկատի հրամանատար, շատ մեծ հայրենասեր և այդ ամենի հետ մեկտեղ՝ ռոքի սիրահար: Նա բացեց ակումբը 98-ին՝ դարձնելով ռոքը ոչ թե ժամանակ առ ժամանակ տեղի ունեցող իրադարձություն, այլ առօրյայի մի մաս: Ցավոք, Մալխասյանը շատ շուտ հեռացավ կյանքից և չհասցրեց տեսնել, թե ինչպես ռոքը վերջապես դարձավ ընդունված սովորական երևույթ...

Գովազդն ապահովված էր ամբողջ աշխարհով. ամեն ուր գրված է այդ բառը, նույնիսկ հեպիոպնային անցումներում լինում է STOP ցուցանակը

Սկզբնական շրջանում գրեթե ամեն երեկո կարելի էր գալ լսել Ոստան Հայոցի, երբեմն Kings Cross-ի ելույթները: Քաղաքի ռոքասերները հավաքվում էին հենց այս փոքր երկու հարկանի նկուղային տարածքում, որպեսզի պոկվեն իրականությունից: Այդ ժամանակ Մկրտիչն ու իր եղբայրն ակումբի բարմեններն էին:

Մկրտիչ. «Ամեն մեկը չի, որ սիրում է ռոք: Ես ինքս սկզբում չէի սիրում: Սովորաբար համերգների ժամանակ խառը վիճակում հաճախորդներին էի սպասարկում ու ժամանակ չէր մնում նույնիսկ լսել կատարումները: Մի օր երաժիշտներն ասեցին՝ արի դու մի աշխատի, թող ուրիշ մեկը քո գործն անի, դու արի ու լսի: Էդպես էլ արեցի, սիրահարվեցի և այդ օրվանից ռոքը դարձավ իմ դրոշակը»:

Հլը սպրո՛ւպ

2000-ականների սկզբին ռոք ակումբը տեղափոխվեց Ժուռնալիստների տան շենքը՝ նույն ինքը՝ «Ժուռդոմը», նույն ինքը՝ «Բուրգը»: Մկրտիչն այն ժամանակ դուրս էր եկել աշխատանքից, բայց ակումբի հետ կապը դեռ կար: Մալխասյանի մահից հետո ակումբը սկսեց գնալ դեպի անկում: Այնտեղ աշխատելու ընթացքում Մկրտիչին այնքան էր կլանել ռոք ակումբի միջավայրը, որ մի քանի տարի անց՝ 2005-ին, երեք ընկերով՝ Մկրտիչը, իր բանակային ընկեր Ռուբեն Սուչյանն ու Ռուբենի քեռին՝ Ռոբերտ Ղազարյանը, որոշեցին վերաբացել ակումբը:

Անվանումն ընտրեցին բոլորով: Մի օր ակումբ էին եկել «Բամբիռի» ժողովուրդը, «Կատունները» և ակումբի այլ ընկերներ: Իրենց ուժերով վերանորոգում էին տարածքը և զուգահեռ մտածում ցուցանակի մասին: Սկզբից մեկը առաջարկեց Peoples՝ նկատի ունենալով, որ այս տեղը պատկանում է մարդկանց: Մեկ ուրիշը մի այլ բան առաջարկեց և այդպես ամեն առաջարկից հետո մյուսն ասում էր՝ «հլը ստոպ, իսկ եթե սենց դնենք»:
Մի պահի էլ հասկացան, որ կարելի է ակումբն անվանել հենց Ստոպ: Գովազդն ապահովված էր ամբողջ աշխարհով. ամեն ուր գրված է այդ բառը, նույնիսկ հետիոտնային անցումներում լինում է STOP ցուցանակը:

Մկրտիչ. «Stop-ում նվագում էին թե՛ երիտասարդ խմբերը, թե՛ հին գելերը: Ոստան Հայոցի հետ մեկտեղ ելույթ էին ունենում Բամբիռները, Դորիանը, Ռեինկարնացիան, որն այդ ժամանակ դեռ պանկ ռոք էր նվագում, ու շատ ուրիշներ: Նույնիսկ ջազն իր տեղն ուներ: Երևանում արդեն իսկ գոյություն ունեին ջազ ակումբներ, օրինակ Պոպլավոկը, բայց այնտեղ բոլորին չէին բեմ տրամադրում, ընտրում էին մի քանի հոգու, իսկ Stop-ի բեմը բոլորինն էր, ով հմուտ էր երաժշտության մեջ և կարող էր որակյալ երաժշտություն մատուցել: Մի օր Կատունների համերգն էր: Ստեղծագործության շատ հանգիստ ու կամաց հատված էր: Մեկ էլ ներս են մտնում կարմիր պիջակներով հաստավիզ դեմքեր: Նայում են ներքև, որտեղ այդ պահին Նորայր Քարտաշյանը պիկոլո սաքսաֆոնով հայկական երանգներով երգ է նվագում: Մեկ էլ այդ տղաներից մեկը բարձր ասում է՝ «ռաբիզնոց ա, հելանք»: Այդ պահին երաժշտությունը կանգնեց, բոլորը պտտվեցին, նայեցին այդ երկուսին և սկսեցին ծափահարել»:

2400

Էդգար Բարսեղյանը ռոք ակումբում առաջին անգամ եղավ հենց բացման օրը: Մինչ այդ արդեն հասցրել էր հիմնել Alter Ego խումբը, փոփոխել դրա կազմը, ելույթ ունենալ Ռոք-ՆՓԱԿ փառատոնում, գրել մի քանի երգ:

Էդգար. «Խեղճ ու կրակ ուսանողներով որոշել էինք ամեն մեկս 300 դրամ գցվել, գնալ ռոք ակումբի բացմանը և «Կիլիկա» խմել: Վերջին սեղանն էր մնացել, հենց մուտքի մոտ: Ոստան Հայոցը սկսեց նվագել, ոգևորվեցինք, սկսեցինք թռվռալ ու հանկարծ մեր ընկերներից մեկը ձեռքով կպավ և գարեջրի բաժակը գցեց գետնին: Արդյունքում հաշիվը պլանավորված 1200-ի փոխարեն դարձավ 2400: Ստիպված մոտեցա Արթուր Մալխասյանին, բացատրեցի իրավիճակը: Խոստացա, որ մոտ օրերս կբերեմ: Երկու օր անց բերեցի գումարը և այդ օրվանից Արթուրն ասաց, որ այլևս այնտեղ խնդիր չենք ունենալու: Երբ իմացավ, որ նաև նվագում ենք, թույլ էր

տալիս Ոստանի համարների արանքում մենք էլ մի երկու բան երգենք, իսկ հետո արդեն առանձին ելույթներ էինք ունենում: Ժամանակներ էին լինում, երբ շաբաթներով այստեղից դուրս չէի գալիս: Բրյուսովում էի սովորում, դասերից հետո իջնում էի ուղիղ ռոք ակումբ: Եղել է դեպք, որ մի շաբաթ հետո մայրիկս եղբորս հետ գիշերվա ժամը երկուսին եկել են ինձ տուն տանելու, բայց արդյունքում էլի մնացել եմ այստեղ»:

Քաշվանք

2000-ականներին ռոք համայնքի մեջ լինելը դեռ բարդացնում էր մարդկանց կյանքը: Առավել ևս հարթ չէր մի ամբողջ ռոք ակումբի առօրյան: Stop-ից դուրս եկողների վրա հարևանները պարբերաբար տարբեր իրեր էին շպրտում, օրինակ՝ կարտոֆիլ կամ խնձոր: Հարևան թաղերից տարբեր կերպարներ մեկումեջ հայտնվում էին ակումբի մոտակայքում և հետևում երկար մազերով տարօրինակ հագնվող տղաներին և արտասովոր տեսքով աղջիկներին: Անդադար կռիվներ ու բացատրական աշխատանքներ էին տարվում:

90-ականների վերջին, երբ դեռ կար Արթուր Մալխասյանը, դժվար էր գալ ու մահապարտների ջոկատի հրամանատարին ասել՝ ինչի՞ են մազերդ երկար, դրա համար շրջակայքի հետաքրքրությունն այդքան մեծ չէր, բայց արդեն Stop-ի տարիներին դաստիարակչական գործընթացներ էին անցկացվում: Ստուգիները փորձում էին հասկացնել, որ պետք չի անուն կպցնել՝ առանց իրար ճանաչելու: Այդ համբերատար շփումների արդյունքում այդ անկոչ հյուրերից շատերը դառնում էին Stop-ի հաճախորդ: Միֆեր էին նաև պտտվում, որ ռոք ակումբի աղջիկները շատ ավելի հասանելի են, քան այլ վայրերում և շատ սեռաքաղցներ հենց այդ նպատակով էին գալիս, բայց քանի որ դա իրականությանը չէր համապատասխանում՝ ինչպես գալիս էին, այդպես էլ գնում էին:

Մկրտիչ. «Դեռ ռոք ակումբի օրերն էին, այսինքն՝ 90-ականների վերջ, նվազում էր Ոստան Հայոցը: Ներս են մտնում մի քանի հոգի, ինչպես հետագայում պարզվեց՝ ուժային կառույցների ներկայացուցիչներ, ու մեծ կռիվ է սկսվում: Ամբողջ փողոցով մեկ՝ տուր ու դմփոց, ինչի արդյունքում բոլորին՝ այդ թվում Ոստան Հայոցի տղեքին ու մեզ տանում են ոչ շատ հեռու գտնվող այսօր արդեն նախկին դատախազության շենք: Բարեբախտաբար, Մալխասյանը լուրջ համբավ ուներ, մենք էլ մեղավոր չէինք, ու այդ հարցը շուտ լուծվում է, մեզ բոլորիս դուրս են թողնում: Բայց էդ գիշերվա հետքերով որոշ ժամանակ հետո ծնվեց Ոստան Հայոցի հայտնի «Քաշվանք» երգը, որը մինչ հիմա ակտուալ է:

Էդգար. «Էսօրվա պես հիշում եմ՝ մտան ներս, սկսեցին մատուցողուհիներից մեկին նեղացնել, իսկ հինգ լոպե հետո քթով ասֆալտն էին մաքրում: Հետո իրանց ընկերները հայտնվեցին սպիտակ 06-երով և բոլորին հավաքեցին ու տարան: Մենք ջահել երեխեք էինք, մեզ ձեռք չտվեցին: Որոշեցինք գնալ թափառել մինչև մի լուր լինի: Ինչ-որ անօթևանների գտանք, կրակ էինք վառել, զրուցում էինք, բնականաբար խմիչք էլ գտնվեց: Լուսաբացին վերադարձանք հետ ու տեսանք, որ ակումբի լույսերը վառ են: Ներսում մեծ սեղան էին գցել:

Պարզվեց՝ երբ ուզեցել են բաց թողնել տղերքին, սրանք ասել են, որ ուզում են ֆուտբոլ նայել, միլիցեքն էլ հեռուստացույցը մոտ են բերել ու բոլորով նստել նայել են: Հետո արդեն ուրախ-ուրախ եկել են ակումբ՝ հաղթանակը նշելու: Էդ էն օրերից էր, որոնք ուղղակի չեն վերջանում, շարունակվում են»:

Մեր նմանները

Վարդգես Հովեյանին, ով Stop-ի համեմատաբար երիտասարդ սերնդից է, սերը ռոքի հանդեպ փոխանցվել է ծնողներից: 2000-ականների սկզբում երևանյան երիտասարդ ռոքերների (այդ թվում նաև Վարգեսի և իր ընկերների) երթուղին անցնում էր հետևյալ ճանապարհով՝ Կասկադ, «Ջինսնոց», երբեմն՝ Ռայկոմի ռոք համերգներ, իսկ, երբ բացվեց Stop-ը, այն դարձավ իրենց տեղը, վայր, ուր հավաքվում էին ռոք համայնքի բոլոր ներկայացուցիչները:

Ըստ էության, Stop-ը եղել է այն վայրը, որտեղ նա հանդիպել է իր նմաններին: Հենց Stop-ի պատերի ներսում այդ նմաններով որոշել են հիմնադրել FairWind խումբը:

Վարդգես. «Մինչ Stop-ի բացումը մեզ թվում էր, որ էս յոթ հոգին ենք քաղաքում չլարած կիթառներով, որ ռոք ենք սիրում լսել: Մենք 16-17 տարեկան երեխեք էինք ու Stop-ը մեզ համար իրական ակումբ էր՝ իր բոլոր լավ ու վատ կողմերով, կռիվ-ղալմաղալներով, անպատասխան սիրո պատմություններով:

Ես դասից թռնում էի, գնացքի գծերով վազելով իջնում էի Կասկադ, գնում էի Yum-Yum, իջնում էին Ջինսնոց ու հետո վերջին կետը Stop-ն էր: Երբ եկանք, Stop-ն արդեն ռոք ակումբի պատմություն ուներ ու մեզ համար

Հարևան թաղերից կարբեր կերպարներ հայտնվում էին ակումբի մոտակայքում և հետևում երկար մազերով տարօրինակ հագնվող տղաներին և արտասովոր տեսքով աղջիկներին



↓ *STOP-ի հանրահայտ պատշգամբը, որից լավ երևում է բեմը*



← Լավ էլին՝ STOP-ում

→ FairWind-ի էությունը

← Նոր-նոր փանկիյ ռեգիի անցած Ռեին-կարնացիան, 2008

շատ ավելի հետաքրքիր էր դառնում այնտեղ գտնվելն ու առհասարակ ոռքը: Մեր խմբի թմբկահար Տիգրանին հենց Stop-ում ենք հանդիպել: Նստած էինք էն հաստ թավշյա շալվարներով, անհասկանալի վերարկուներով, 150 դրամանոց սուրճ էինք խմում: Մենք սուրճ չէինք սիրում, բայց չսիրելով խմում էինք, որովհետև էդ տարիքում գիտեինք, որ լավ տղան սուրճ է խմում: Հայտնվեց Տիգրանը՝ երկար մազերով, գունավոր շորերով ու անընդհատ մտածում էինք՝ ե՞րբ առիթ կլինի էս տղային մի երկու բան բացատրել: Երբ առիթը եղավ, դարձանք լավագույն ընկերներ: Մեր առաջին համերգը եղավ իհարկե Stop-ում: Ռեինկարնացիայի Ռոլանդի համերգն էր: Ինքը մեր ընկերն էր, խնդրեցինք, որ համերգի ընթացքում մի հինգ երգ էլ մենք նվագենք: Համաձայնեց: Stop-ի համար իդեալական համերգ էր. մեր ընկերոջ ծնունդն էր, նվագում էինք Мама Анархия-ն Наив-ի, անմիջապես հետո Knocking on the heaven's door-ը, և իմ գրած երգերից մի բան:

Վերջերս հին Stop-ի հին դեմքերից մեկն ասեց՝ գիտե՞ս, էն երեխեքը, ովքեր ծնվել են ձեր առաջին համերգների արդյունքում, էսօր գալիս են ձեզ լսելու»:

ՔարաՖիկով կարտոֆիլն ու սալաբիությունը

Stop-ում միշտ եղել է ու դեռ կա բավական լուրջ խոհանոց, որի մասին քչերը գիտեն: Օրինակ՝ քարաՖիկով կարտոֆիլ, աջարական խաչապուրի: Իսկ ամենակարևոր դեմքերից էր մատուցողուհի Անոն, ով այսօր էլ դեռ այնտեղ է: Բայց այդ ամենում կարևորը այն է, որ առ այսօր Stop-ը կա: Այն կարող է վերանորոգման մեջ լինել, պասիվ լինել մի որոշ ժամանակ, բայց այսօր էլ երևանյան ոռքը մեծապես պտտվում է հենց Stop-ի դռներից ներս:

Վարդգես. «Լոնդոնում սովորելուց հետո, երբ վերադարձա, ամեն ինչ նույնն էր: Stop-ը կար: Նույն աղջիկները չէին տալիս նույն տղեքին, նույն տղեքը նույն կարիքներով պտտվում են, նույն Անոն իր տեղում էր: Կարևոր է, որ այս մի բանը քո կյանքում ստաբիլ է, միշտ էլ վերադառնալու տեղ ունես»:

Անցյալն ու ներկայի միզև

Ակումբն իր բումն ապրեց 2005-ից 2011 թվականներին: Ընթացքում լիքը բաներ փոխվեցին, բայց անկախ ամեն ինչից Stop-ը դեռ գործում է՝ մնալով հին ու նոր ոռքնռոլային ժամանակներն իրար կապող բացառիկ կամրջակներից մեկը:

Սկզբում չկար գումար, բայց կար ցանկություն: Նույնիսկ առաջին դինամիկներն ակումբի ձեռքով հավաքած էին, իսկ բեմ պարզապես գոյություն չուներ: Հետո FairWind խումբն ակումբին բեմ նվիրեց: Բարի մենյուն վինիլային սկավառակի վրա էր, որը բազմաթիվ տուրիստներ պարբերաբար փորձում էին գնել, իսկ այսօր այն որպես հուշ կախված է ակումբի պատից:

Ակումբը մնում է հավատարիմ իր գաղափարներին: Ամեն երկուշաբթի երեքշաբթի օրերին բեմը տրամադրում են նորեկ երաժիշտների և խմբերի, որպեսզի նրանք փորձեն իրենց ուժերը, փորձառու երաժիշտների հետ ծանոթանան: Ջեմ սեշններին մասնակցելն անվճար է, եթե նորմալ նվագում ես, կարող ես գալ փորձել, ծանոթանալ և միանշանակ մի բան կստեղծվի, մի բան կառաջարկեն, կամ դու կառաջարկես:

Չորեքշաբթի օրերին ակումբը փակ է, քանի որ, Մկրտիչի խոսքով, Stop-ը կենդանի էակ է, պիտի շունչ քաշի հանգստանա, որ արդեն ուրբաթ-շաբաթ օրերը գմփա:

Մարգարիտ Միրզոյան
Հարություն Մալխասյան, Stop-ի արխիվ

Մհեր Սանուկյան. «Սվանթեսինք Երևանն առանց նախասպայմանների»

Վանաձորյան «Լավ էլիի» Մհեր Սանուկյանը պատմում է խմբի առաջին քայլերի, սուղ պայմաններում մեծ երազանքների իրականացման և Երևանն ու երևանցի աղջիկներին գրավելու մասին:



ՎԱՆԱՁՈՐ

Երաժշտությամբ զբաղվել եմ դեռևս մինչև ծնվելս: Ծնողներս շատ շուտ նկատեցին, որ լացիս ձայնը կտրվում է միայն երաժշտություն միացնելու պարագայում:

Առաջին լուրջ երաժշտական սիրահարությունս Վլադիմիր Վիսոցկու հանդեպ էր: Ավելի ուշ մայրիկին համոզեցի՝ ինձ համար կիթառ գնել, որպեսզի կարողանայի կատարել նրա երգերը: Իսկ մինչ այդ՝ դաշնամուրի դասերի էի հաճախում ու խորապես ատում էի Բախի բոլոր ֆուգաները, որոնք ուսուցիչը ստիպում էր նվագել: Շատ հետո միայն այդ նույն ֆուգաներն ինձ համար դարձան ակնածանքի ու սիրո աղբյուր:

Պարզվեց՝ Կիրովականում մեր ճաշակի մարդիկ կային: Մի խորհրդավոր անձնավորություն կար՝ Իլյուշը, ով ձայնագրման կետ ուներ: Նա արևմտյան երաժշտություն էր ձայնագրում ու վճարի դիմաց տրամադրում ցանկացողներին: Դա Կիրովականում միակ տեղն էր, որտեղ հնարավոր էր լսել այլ երաժշտություն: Մի անգամ Իլյուշի մոտ մեզանից առաջ մի խումբ տղաներ այնպիսի երաժշտություն պատվիրեցին, որից ողջ մարմնով փշաքաղվեցինք: Շատ արագ ընկերացանք: Այդ տղաներից մեկն Աշոտն էր, ում հետ էլ ստեղծվեց «Ստվերներ» խումբը:

Ավելի ուշ ծանոթացա Գոռի հետ ու երեքով ստեղծեցինք Game խումբը: Իբր՝ մեր անվանատառերով: Տափակ անուն էր իհարկե ու, իհարկե, շատ շուտ հասկացանք, որ խումբն ապագա չունի: Խումբ հրավիրեցինք մեր ընկերներից մեկին՝ Ալեքսին ու առաջարկեցինք բաս նվագել: Ալեքսն օպերային երգիչ էր ու դա առաջին գործիքն էր, որ ինքը երբևէ պիտի նվագեր: Համաձայնեց: Ավելի ուշ մեզ միացավ Մայքը, ով ԱՄՆ-ից էր ու կամավոր էր Կիրովականում: Հենց այս կազմով ստեղծվեց Snack-ը: Հետո՝ երբ Մայքն ու Աշոտը մեկնեցին ԱՄՆ, Գոռի հետ միասին հիմնեցինք «Լավ Էլին»:

Կիրովականում 90-ականներին հետաքրքիր երաժշտական միջավայր կար: Մի նոր սերունդ կար, որ ծարավ էր երաժշտության: Երբ մենք մեր առաջին ելույթն ունեցանք երկաթուղայինների ակումբում, շատ արագ հասկացանք, որ անպայման պետք է շարունակել ստեղծագործել: Հետո մեր առաջին լիարժեք համերգն ունեցանք տիկնիկային թատրոնում: Պայթյունի էր նման: Էդ երեխեքը, որ ծայրից ծայր լցրել էին դահլիճը, այնպես էին ցնցում շենքը՝ թռվռում, հանում բաճկոններն ու պտտում, ու դա այն պարագայում, որ մեզ ու մեր երգերն առաջին անգամ էին լսում: Զարմանալի էր ու ոգեշնչող:

Շուտով ձայնագրեցինք մեր առաջին, այսպես կոչված, կասետը: Ողբերգական պայմաններ էին: Կիրովականում էդիկ անունով մի մարդ կար, ով ձայնագրման ստուդիա ուներ, դե, պայմանական անվանենք դա այդպես: Բայց պետք է խոստովանեմ, որ այն շատ ավելի պրոֆեսիոնալ էր, քան մենք՝ որպես կատարողներ: Ու հենց այդտեղ էլ, մեզ համար այդ ժամանակ աստղաբաշխական մի գումարով՝ 50 դոլարով, ձայնագրեցինք մեր առաջին ալբոմը: Ինչ-որ հրաշքով այդ ալբոմը հայտնվեց Հայ FM-ի եթերում ու մեզ սկսեցին ճանաչել նաև Երևանում: Հույս առաջացավ, որ կկարողանանք մեկնել Երևան ու այնտեղ էլ համերգ տալ:

Մեր երաժշտական գործիքներն ավելի հարմար կլինեին գյուղատնտեսության համար: Ձայնագրությունն արվում էր մի հին ճապոնական Akai պուլտով, գրվում ժապավենի վրա, ու դա մեզ համար իրական երջանկություն էր:

Առաջին համերգին կենցաղային ձայնարկիչի բարձրախոսն ենք օգտագործել, իսկ գործիքներից միակը, որ քիչ թե շատ երաժշտական կարելի էր համարել՝ մայրիկիս օգնությամբ գնված կիթառն էր: Առհասարակ, մայրիկս մեզ՝ խեղճ ու կրակ երաժիշտներիս, շատ էր աջակցում: Օրերից մի օր իր հետ ԱՄՆ-ից մորաքրոջս աղջկա կողմից նվեր բերեց մեր առաջին distortion սեղմակը: Երևի միակն էր քաղաքում, ձեռքից ձեռք անցավ: Մինչև հիմա էլ կա, պահել եմ:

Որքան սուղ էին պայմանները, այնքան հարուստ էր երևակայությունը: Ստիպված էինք ավելի շատ էներգիա, ժամանակ ու ջանք ներդնել յուրաքանչյուր երգի մեջ: Հիշում եմ, թե ինչպես մի խումբ դպրոցականների օգնությամբ ձայնագրեցինք «Հասարակ աղջիկներ, հասարակ տղաներ» երգի կրկներգը, որտեղ հասարակ աղջիկներն ու հասարակ տղաները երգում էին. «Ես զբաղվում եմ սիրով, դու զբաղվում ես սիրով, մենք զբաղվում ենք սիրով՝ միայն աչքերով»: Հիմա՝ այս առատության մեջ, երբ ամեն բան հասանելի է, մի տեսակ տեղ չի մնում երևակայության համար:

ԵՐԵՎԱՆ

Երբ երեխա էի, ամառային արձակուրդներին գալիս էի Երևան՝ մորաքրոջս տուն: Իհարկե, տարօրինակ է, հաշվի առնելով կլիմայական պայմանները: Հետո արդեն Երևան եկա որպես ուսանող ու այդ ժամանակ մեզ համար բացվեց Երևանի երաժշտական կողմը, մասնավորապես՝ ռոք բեմը, երևանյան փառատոները, ինչպես օրինակ՝ Գառուդեամոսը: Դա մի իրական հրաշք էր մեզ համար:

Որպես խումբ՝ Երևանում հայտնվեցինք ԱՄՆ խաղաղության կորպուսի շնորհիվ: Դե մեր Մայքն այնտեղ կամավոր էր ու մենք իրենց միջոցառումներին նվագում էինք: Զարմանալի ու ուրախալի էր հետևել, թե ինչպես էին օտարերկրացիները սիրում մեր երգերը: Դա ևս մի շարժառիթ հանդիսացավ Երևանում համերգ ունենալու համար:

Snack-ի առաջին լիարժեք համերգը տեղի ունեցավ 1996-ին, Սունդուկյանի «Գոյ» թատրոնի դահլիճում: Այն ժամանակ Արթուր Սահակյանը լեփ-լեցուն դահլիճում հանդիսատեսին հարցրեց, թե արդյո՞ք Վանաձորից են, պարզվեց, որ մեծ մասը Երևանից են:

Արդեն 1998-ին ֆիլհարմոնիայի դահլիճում ելույթ ունեցավ «Լավ Էլին»: Շատ մեծ սպասումներ ունեինք ու միևնույն ժամանակ վախվորած էինք, թե արդյոք կգա՞ն, չե՞ն գա: Եկան: Դահլիճը լիքն էր երևանցիներով: Հիանալի համերգ էր: Ու մենք մեզ համար որոշեցինք՝ նվաճել ենք Երևանը: Երկրպագուների ու հատկապես աղջիկների ուշադրությունը մեզ էլ ավելի մեծամտացրեց:

Երևանն ինձ համար երկու խոշոր ցնցող բան ունի: Մեկը՝ ճարտարապետությունը, մյուսը՝ աղջիկները: Ես, իհարկե, միշտ հավատարիմ եմ եղել վանաձորցի աղջիկներին, բայց դե, փաստերն արձանագրել է պետք:

Երևանը դարձավ անչափ սիրելի, քանի որ մեզ գրկաբաց ընդունեց ու ներգրավեց փոքր Հայաստանի ավելի փոքր ռոք աշխարհի ներկապնակի մեջ: Մեր գավառական աչքերի համար շատ անկյուններ Երևանում յուրահատուկ էին, ու գուցե երևանցիները դրանք չեն էլ նկատել: Իսկ նկատելիներից ՆՓԱԿ-ը, Երիտասարդական պալատն ու էլի շատ շենքեր ռոքի, երաժշտության ու հատկապես մեզ համար հիշարժան են ու սիրելի:

Երևանում Աղայան փողոցի վրա մի տուն էինք վարձել: Այդ տան հարևանությամբ մի կողմից ապրում էր այն ժամանակ նորանկախ Հայաստանի առաջին ֆինանսների նախարարը, մյուս կողմից՝ Համո Սահյանը: Մի զարմանահրաշ տեղ էր դա մեզ համար: Մեր լավագույն երգերը գրել եմ հենց այդ բնակարանի զուգարանում, որովհետև ինձ հետ ապրող ընկերներս ու եղբայրս ինձ ստիպում էին այնտեղ նվագել: Դե, գլուխները տանում էի:

Երևանն իր մագնիսականությունն ունի: Երևանը դեպի իրեն է ձգում ու հավաքում երկրի լավագույն ստեղծագործողներին: Ի վերջո՝ «Միներալը» գալիս է Ջերմուկից, «Բամբիռը»՝ Գյումրիից, «Լավ Էլին»՝ Վանաձորից: Իմ գավառական հայացքով դա նրանից էր, որ Երևանում շատ ավելին կա պատրաստի, ու կարիք չկա հաղթահարել սեփական ծուլությունն ու թափ տալ երևակայությունը:

Այսօր հայկական ռոքում բազմազանության պակաս եմ նկատում: Իհարկե, կան խմբեր, ու դրա հավաստիքը Դոգմայենց կազմակերպած վերջին ռոք փառատոնն էր, որն իրար գլուխ հավաքեց լիքը հին ու նոր խմբերի: Բայց ամեն դեպքում՝ ամեն մեկը մի գույն, մի ուղղություն վերցնելու տեսանկյունից ոլորտն աղքատացել է: Կան իհարկե շատ տաղանդավոր երիտասարդներ, լավ խմբեր, բայց, կարծում եմ, պիտի էլ ավելի շատ լինեին այն երիտասարդները, ովքեր իրենց կյանքն առանց երաժշտության ու ստեղծագործելու չեն պատկերացնում: Բացի դրանից, դա աղջիկների սրտերը նվաճելու ամենալավ ճանապարհն է, կիթառով երիտասարդն ուղղակի անդիմադրելի է:

Մենք եկանք Երևան ու նվաճեցինք այն առանց նախապայմանների: Այսինքն՝ մարդիկ պարզապես սկսեցին լսել ու սիրել մեզ, ու կարիք չեղավ հանդիսատեսին հրամցնել մեր տեսահոլովակները, ֆոտոշոփում ավելի լավը դարձրած լուսանկարները, կազմակերպել մեծ ու ցնցող համերգներ: Հաճախ նույնիսկ հանպատրաստից էինք համերգներ կազմակերպում ու էլի բավական մեծ քանակով հանդիսատես էր ներգրավվում, որը մեզ չէր էլ ճանաչում: Մեզ պարզապես ընդունեցին առանց նախապայմանների:

Համիկ Բարխուդարյան
Հարություն Մալխասյան

«Կայֆ էր, որովհետև սիրում էի նվագել՝ կապ չուներ, թե ում հետ»

Թմբկահար Սորյուն Բոբիկյանը երևանյան ռոք համայնքի ամենաակտիվ անդամներից մեկն է եղել: Մոտ 15 տարվա ընթացքում նա հարվածային գործիքներ է նվագել մեկ տասնյակ խմբերում՝ The King's Cross-ից ու Alter Ego-ից մինչև Stryfe ու Sworn: ԵՐԵՎԱՆի խնդրանքով Սորյունը վերհիշել է այդ բազմազան ժամանակները:

Beetles

Ես սովորում էի 5-րդ դասարանում, երբ մտքովս անցավ ռոք խումբ ստեղծել: Գլխավոր հանցակիցս Հենդոն էր՝ շատ փոքրուց դեռ բակից ընկերություն էինք անում ու համ էլ նույն դասարանում էինք սովորում: Ես քիչ թե շատ գլուխ էի հանում կիթառից, Հենդոն արդեն սովորում էր: Մեր դասարանում սովորում էր նաև Սուրենը, ինքն էլ շատ լավ երգում էր: Հետո երեքիս միացավ Հենդոյի եղբայրը, ով թմբուկ էր նվագում: Էդպես կազմեցինք մեր առաջին խումբը: Շատ հեռու չգնացինք ու անունը դրեցինք Beetles: Որպես խումբ առաջին անգամ բեմ բարձրացանք 1994 թվի սեպտեմբերի 21-ին՝ Ճարտարապետների տանը: Հայրիկս օգնեց կազմակերպման հարցում՝ ճարտարապետ էր ու կապեր ուներ շենքում: Էդ օրը մենակ Beatles երգեցինք:

1995 թվին մեր խմբում մի քանի փոփոխություններ եղան, որոնցից մեկը շրջադարձային էր ինձ համար: Մի օր, երբ հերթական փորձի ժամն էր, զայրացա և փոխարինեցի մեր խմբի թմբկահարին: Դե ինքը սիրողական էր նվագում, իսկ ես էդ ժամանակ էստրադային սիմֆոնիկ նվագախմբում ջութակ էի նվագում, ու մտածեցի, որ կկարողանամ գլուխ բերել հարվածայինները: Գլուխ բերեցի ու էդ պահից կապվեցի հարվածային գործիքների հետ:

Շատ չանցած՝ նոր խումբ ձևավորեցինք: The King's Cross-ում ես թմբկահար էի, Հենդոն ու Սուրոն նույն աշխատանքին էին: Մեզ միացավ ևս մեկ կիթառահար՝ Աշոտը, ով երկու տարի մեզ հետ նվագելուց հետո դուրս եկավ խմբից և մեկնեց Ամերիկա: Շուտով մենք մնացինք նույն կազմով՝ երեք ընկերներով: Միասին նվագեցինք շուրջ 15 տարի, մինչև 2000-ականների վերջը, երբ խմբից գնացի ու ժամանակավոր արտագաղթեցի:

Սոլյունի առաջին խումբը՝ Beetles

Պապայի ընկերները

12 տարեկան էի, երբ պապաս ինձ հետը տարավ Ոստան Հայոցի ու Էմփիռեյի միացյալ համերգին: Որպես հին ռոքեր՝ ծանոթացրեց հետնեները, դե փոքր էի, հետս երեխու նման էին շփվում՝ «բալես, ինչ նվագենք քո համար էսօր», էդ տիպի: Ութ տարի հետո զանգ ստացա Էմփիռեյի Սաքոյից, ասեց, որ թմբկահար չունեն, առաջարկեց միանալ: Էն ժամանակ, ի դեպ, Էմփիռեյը հեվի մետալ էր նվագում՝ արագ, ծանր ռիթմերով, ձեր էսօրվա իմացած խումբը չէր: Ընդհանրապես, բավական կայֆոտ բազմազանություն կար էդ տարիներին՝ մետալիստներ կային, պանկեր, ալտերնատիվ, փսիխոդելիկ, պրոգ՝ ինչ ուզես: Կյանքն ահավոր դժվար էր, իսկ մշակույթը, երաժշտությունը, ռոքը ծաղկում էին: Մշակույթը փրկում էր բոլորին՝ մի մասին նվագելով, մյուսներին՝ նվագողներին լսելով:

Նույն կայմը, տարբեր խմբեր

98 թիվն էր: Սունդուկյանի թատրոնի կողքը կար «Սահինյան» դիսկոն: Մենք մի անգամ համերգ ունեցանք՝ Alter Ego-ն ու մենք: Alter Ego-ն, իրականում, երկու հոգուց էր բաղկացած՝ Էդոն ու թմբկահարը: Բայց ինչ-որ ժամանակ հետո թմբկահարն արտագաղթեց, ու մենք՝ ես, Սուրոն, Հենդոն, միացանք Էդոյին:
Սա, ըստ էության, Էդոյի հեղինակային պրոյեկտն էր: Գլխավոր տարբերությունը լեզուն էր՝ Alter Ego-ի երգերի մեծ մասը հայերեն էին, իսկ The King's Cross-ն անգլիալեզու էր: Մեր առաջին հինգ ձայնագրված երգերն իրարից տարբեր էին ու ունեին կոնկրետ ազդեցություն՝ Ջեթրո Թալ, Փինք Ֆլոյդ, Նիրվանա ու Էլի:
2001-ին միացա Օքսենհեմին, որը լրիվ ուրիշ բան էր նվագում՝ King's Cross-ի ու Alter Ego-ի հետ համեմատ: Բայց Էնտեղ որպես ջութակահար գնացի, թմբակահարի կարիք չունեին:

Ինտելեկտ լիգա

1998 թվի ամռանը նվագեցինք նորաբաց Ինտելեկտ լիգա ակումբում՝ հիմիկվա Stop-ի տեղում: Շատ կայֆ էր, հատկապես, որ դրանից առաջ ութ ամիս ոչ մի իվենթի չէի գնացել, սաղ օրը պարապել էի ընդունելության քննությունների համար ու էդ մեծ ընդմիջումից հետո վերջապես հասա գործիքներին: Էն ժամանակ շատ համախմբված, ամուր, ընկերական տուսովկա կար, ոնց որ մի ընտանիք լինեինք: Իսկ ակումբը մի քանի ամիս հետո տեղափոխվեց Ժուռնալիստների տուն, որտեղ էլի անընդհատ նվագում էինք:

Բոլորի թմբկահարը

Առհասարակ, հայկական ռոքի համար սրանք լավագույն տարիներն էին: Ես 1994-ից մինչև 2009 թվերը նվագել եմ Էմփիռեյում, The Beautiful Project-ում, Stryfe-ում, Sworn-ում, The King's Cross-ում, Alterego-ում, առանձին համերգներին՝ էլի ում հետ ասես: Եղել են դեպքեր, երբ փառատոների ժամանակ միաժամանակ հանդես եմ եկել մի քանի խմբերի հետ՝ ես մնացել եմ թմբուկների մոտ, մնացած երաժիշտներն են եկել տեղերով փոխվել: Հա, չէ, մի անգամ տեղը տվեցի Նարեկին, հետո էլի ես նստեցի... Ես ուրախ էի, կայֆ էր, որովհետև սիրում էի նվագել՝ կապ չուներ, թե ում հետ: Ու քանի որ ես մասնագիտությամբ հենց երաժիշտ եմ, կոնս եմ ավարտել, հիշողությունս տեղն էր, հանգիստ նվագում էի ամենատարբեր ոճերում: 2001 թվի վիդեո կա՝ իմ ծնունդին, արդեն նորմալ խմած, 22երի վրա փայտերով Slayer ենք նվագում: Ու դե փորձեր, փորձեր, փորձեր: Առօրյայիս մեծ մասն անցնում էր մի փորձից մյուսը գնալով,

երկու-երկու ժամ ամեն մեկի հետ, էդպես մինչև գիշերվա մեկը: Իսկ հետո ընդունվեցի Հայ Սուպերստար աշխատանքի՝ 9-ից 2-ը էնտեղ էի, հետո խմբերի հետ, մինչև գիշերվա հազարը:
Փող չկար առանձնապես, որ ասեմ՝ էդքան ճկռում էինք, որ հարստանանք: Ջուտ էնտուզիազմ ու սեր:

Ֆեստիվալային հայոց ռոք

93 թվի Gaudeamus-ին, որ Վահան Արծրունին էր կազմակերպել, պապաս նվագում էր, ինձ էլ հետը բեմ էր տարել: Էդ օրվանից ու մինչև 2009 թիվը Հայաստանում ինչքան ռոք ֆեստ ա եղել, ես դրանց բոլորին նվագել եմ: Sworn լսողները չէին գնա Օքսնհեմ լսելու, Օքսնհեմի ֆանատներն էլ դժվար լսեին Beautified Project: Էդ բոլորին մի տեղ հանդիպելու տեղը ֆեստերն էին: Firewall-ը, հիշում եմ, աննախադեպ էր իր ժամանակի համար: 2003 թվին էր կարծեմ, ու իր մեջ ներառեց հին ու նոր սերունդները: Նույն էֆեկտը ուներ Love Summer-ը: Հետո Տիկնիկայինը դարձավ ռոք կենտրոն, բոլոր մետալ իվենթներն էնտեղ էին լինում: Դե ՆՓԱԿի ֆեստերն էին շատ հավես: Մթնոլորտն ընտիր էր, բայց դե ավելի շատ հավաքույթ էր, քան ֆեստ: Երաժշտական առումով համենայն դեպս սաունդն էն չէր, բարաբանները նվագելուց պոկվում ընկնում էին, բայց ամեն դեպքում՝ կայֆ վիճակ էր:

Նոր խմբեր

2009 թվին գնացի: Վերջերս հետ եկա, տեսնեմ՝ ոչինչ չկա: Ոչ մի օրիգինալ բան չի մնացել: Հին խմբերը կամ ցրվել են, կամ էնքան են փոխել ոճը, էնքան հեռացել իրենց իրական ձայնից, որ ճանաչելի չեն:
Beat Repeat ակումբն եմ բացել, շատ եմ ուզում, որ ջահել երեխեքը, որոնք նոր են մտնում ասպարեզ, երևան, փորձեն, նվագեն, զարգանան: Դրան զուգահեռ պատրաստվում եմ նորից հավաքել իմ խումբն ու նվագել: Ավելի ճիշտ, մի քանի նախագիծ կա: Մի խումբը կլինի պրոգ-ռոք, մի ուրիշ մետալ խմբում արդեն նվագում եմ ջահել տղեքի հետ՝ Deth Spown, մեկ էլ cover jam band եմ հավաքում, որ հավես քավոներ ենք անելու, օրինակ՝ Թուփաքի California Love-ը՝ ռոք արանժիրովկայով: Գուցե Էդոյի հետ Alter Ego-ով հավաքվենք նորից...
Ընդհանուր առմամբ նվագել եմ 10-ից ավելի խմբերում: Մեկ-մեկ մտածում եմ՝ հավաքեմ էդ բոլոր ժողովրդին՝ կայֆոտ համերգ կլիներ:

Արտաշես Արշակյան
Սոլյուն Բոբիկյանի արխիվ,
Հարություն Մալխասյան

Roland

Սաթիլային համակարգ

ԵՐԵՎԱՆՆ ունեցել է «Կաթիլ» ինդի ֆոլֆ բենդի փորձավայրում և խոսել է երաժիշտների հետ անկախ երաժշտության, ալտերնատիվ լինելու և խումբ ունենալու առօրյա կենցաղի մասին:

Մեդիտացիա

Խմբի փորձերը սկսվում են ժամը 3-ի մոտակայքում: Տղաները հավաքվում են, սուրճ-ծխախոտ, ու ամեն մեկը հարմարվում է իր գործիքի առջև: Ստուդիան գտնվում է Պռոշյան փողոցի բակերում, որոնք ֆորմալ համարվում են Կոնդ թաղամասի մի մաս: Թեև վիզուալ առումով կապը Երևանի ամենահին թաղամասերից մեկի հետ կորսված է, բայց նեղ ճանապարհները որոշակի նմանություն պահպանել են: Հենց այդ ճանապարհներով էլ գտնում ենք ստուդիան, որտեղ իրենց ժամանակի մեծ մասն են անցկացնում «Կաթիլի» տղաները:

Ստուդիան գտնվում է շենքերից մեկի նկուղային հարկում: Առաստաղները ձայնամեկուսացված են, որպեսզի չհարամեն իրենց գլխավերևում գտնվող յոգայի ստուդիայի հաճախորդների անդորրը: Թեև, ինչպես կատակում են տղաները, խմբի հարվածային երաժիշտ Գրիգոր Դավթյանի թմբուկի թեթև արձագանքները նրանց մեդիտացիայի կարևոր նախապայման են դարձել:

Սովորաբար փորձերը լինում են շաբաթը երկու-երեք անգամ, բայց կարևոր ելույթներից առաջ տղաները կարող են օրվա մեջ երկու անգամ գալ փորձի կամ գիշերը հենց այս նկուղային հարկի ստուդիայում լուսացնել:

Առաջին բանը, որ տեսնում ենք ստուդիա մտնելիս, խառը սեղանն է՝ սուրճ, բաժակներ ու տուփերից մեկի վրա դրված խմբի թարմ ալբոմը՝ «Ակները»:

Լյա-ի արանքում

Տղաներն արդեն սկսել էին իրենց փորձը: Գրիգոր Քարտաշյանը դաշնամուրի կողքին փայտե տախտակի վրա հարմարեցնում է իր սինթեզատորը, մյուսներն իրենց գործիքներով էին զբաղված: Մի քանի րոպե անց սկսում են նվագել: Հարվածայիններից մի քանիսի վրա սրբիչներ են, ամենուր՝ լարեր, գորգեր ու հաճելի, ջերմ լուսավորություն: Փորձասենյակի անկյունում փոքր պատուհան կա, որի մոտ նստած է Թագուհին՝ ստուդիայի տիրակալ կատուն: Նա մեզ վրա ուշադրություն չի դարձնում: Նայում է երկնքին: Տղաներն ասում են, որ շատ ժամանակ է անցկացնում ստուդիայում, շատ է սիրում երկինքը, կարող է ժամերով նայել: Գրիգորը հարվածում է թմբուկներին և կատուն դուրս է թռչում սենյակից. ակուստիկ երաժշտության սիրահար է, բարձր ձայներից էլ խուսափում է: Իսկ ահա մեզ սրանով միայն ավելի կհետաքրքրես: Նոր գործ են փորձում, և այն դեռ հղկման կարիք ունի: «Նոր երաժշտություն մշակելը կարող է տևել մեկ ժամից մինչև ամիսներ,–

ասում է Գրիգոր Քարտաշյանը,– կան գործեր, որոնք երկու տարի նվագելուց հետո որոշել ենք ամբողջությամբ փոխել, լեգոյի նման զրոյից հավաքել և այսօր այլ տարբերակով ենք նվագում»:
Շարունակում են նվագել՝ ընթացքում իրար ուղղորդելով՝ «Էս մասը շատ լղոզված ա ստացվում»... «Լյա-ի արանքը շատ ենք ֆրֆռում»... «Բառերով մի մտի, հասարակ մաթեմատիկա ա, հաշվենք մտնենք»:
Որոշում են, որ ժամանակն է սրճել:

Ռարույկի մոտ

«Կաթիլի» տղաները ստուդիայի խոհանոցային հատվածում աթոռներ են շարում, որպեսզի այդտեղ էլ սկսենք մեր զրույցը: Անմիջապես մեր կողքը տաքացուցիչն է, որի մոտ արդեն իսկ տեղավորվել է կատուն, իսկ մեջտեղում՝ աթոռի վրա, մոխրամանն է: «Լինում են օրեր, երբ գալիս ենք փորձի ու չենք նվագում, պարզապես կարող ենք ժամերով խոսել, խմել, քննարկել,– պատմում են տղաները,– կարևորը՝ միասին: Դա էլ մեր թիմ բիլդինգն է»:
Երաժշտական կյանքից դուրս էլ են ընկերներ: Սկզբում խմբի սոլիստ Սևադա Համարբաչյանը և Գրիգոր Քարտաշյանը ծանոթացան Տիգրան Համասյանի համերգին, հետո երկուսն էլ Արցախում էին ծառայում և պարբերաբար հանդիպում էին:
«Մի օր՝ բանակից վերադառնալուց հետո, Սևադան զանգեց ու ասեց, որ մի գործ կա, միասին գնանք նվագենք,– հիշում է Գրիգորը,– ընթացքում պատմեց, որ մի քանի ստեղծագործություններ էլ ունի, բայց անավարտ են, դեռ հղկման կարիք ունեն: Ես էլ առաջարկեցի գնանք Արեզի մոտ, տեսնենք ինչ կասի»: Հաջորդը թիմին միացավ Գրիգոր Դավթյանը և իրենց առաջին իսկ փորձնական հանդիպմանը չորս ստեղծագործություն սարքեցին: Մի տարի անց բանակից վերադառնալուն պես թիմին միացավ բաս կիթառահար Ռոբերտ Սիմոնյանը:
«Մեր փաթեթն ընտանեկան է,– ասում է Սևադան,– եթե փորձի չենք, միևնույն է, գրեթե ամեն օր հանդիպում ենք: Լինում է, որ մեզնից մեկը հոգնած գալիս է տուն ու տեսնում է, որ խմբի մնացած անդամներն իր ընտանիքի հետ նստած թեյ են խմում և սպասում իրեն»: Նույնիսկ spotify-ով family mix փաթեթն են ակտիվացրել, բոլորով իրենց սիրած երաժշտությունը մի տեղում հավաքում են, լսում ու քննարկում: Փաթեթում ներառված է նաև խմբի 6-րդ անդամը՝ Գևորգ Ներսիսյանը, ով զբաղվում է խմբի վիզուալ ինքնությամբ:
Տղաները ծիծաղելով պատմում են, որ անպայման տարին առնվազն մի անգամ անկեղծության երեկո են ունենում, այսպես կոչված՝ «ծեծոցի»: Հավաքվում են իրար գլուխ ու սկսում մտքներին եկածն իրար ասել: Մի լավ թափ են տալիս իրենց, լուծում բոլոր հարցերը և շարժվում առաջ: «Շատ խմբեր ամիսներով լռում են, իսկ հետո այնքան է կուտակվում, որ մի ծուռ կպցրած լարի պատճառով վիճում ու բաժանվում են»,– ասում է Ռոբերտը:

Ռմբի փորձավայրը Պոռշյանի բակերից մեկում է՝ նկուղային հարկում

Դժվար, բայց ոչ ալտերնատիվ

Առաջին ամիսներին երևի թե ակումբ չկար, որտեղ մտած չլինեին: Ամենուր ներկայացնում էին իրենց, առաջարկում, որ նվագեն: Սկզբում վերաբերմունքը շատ իմիջիայլոց էր, բայց, երբ տեսնում էին, որ դահլիճը միշտ լիքն է, արդեն իրենք էին հրավիրում: Երևանում «Կաթիլի» առաջին համերգը «Ուլիխանյան» ակումբում էր, որը սոլդ աութ եղավ, ինչի արդյունքում նրանց խնդրեցին ևս երկու համերգ նվագել նույն օրերին:
«Դու, որպես խումբ, չպիտի քեզ համարես ալտերնատիվ,– ասում է Ռոբերտը,– հայկականն այնքան պիտի զարգանա, անկախ ժանրից, որ այն, ինչ այսօր անվանում են ժամանակակից հայկական երաժշտություն, հենց դա էլ համարվի ալտերնատիվ»:
Սևադայի և Արեզի խոսքով՝ Հայաստանում ցանկացած երաժշտական ոլորտում ընդունված է՝ եթե բան չի մնում նվագելու, անցնում են ֆոլքին: «Մեզ մոտ այդպես չէր,– ասում է Սևադան,– մենք մեր երաժշտությունն անվանում ենք «ինդի ֆոլք», քանի որ այն անկախ է, ցանկացած պահի իր ֆորմը փոխում է ըստ մեր ճաշակի: Բացի այդ, մենք ոչ թե նվագել ենք և ուղղակի մի օր որոշել անցնել հայկականի, այլ ի սկզբանե եղել ենք այդ երաժշտության մեջ և անկեղծորեն սիրել ենք այն»:



***

Տղաները պարբերաբար ճանապարհորդում են Հայաստանով, գնում տարբեր մարզեր և համարում են, որ ճանապարհը կենսական կարևորություն ունի: «Միասին աշխատելու, մի բան ստեղծելու համար պիտի միասին ճանապարհ անցնես, սկզբից գաղափարական, հետո՝ իրական,– ասում է Արեգը,– այն, ինչով մենք հիմա զբաղվում ենք, դա ինքն իրենով ճանապարհ է»: Խոսակցությունն ավարտում ենք, կատուն, որը վերջին մի ժամը հանգրվանել էր գրկիս ու քնել, փախչում է դեպի փորձասենյակը, տղաներն էլ հերթով անցնում են իրենց գործիքների մոտ, որպեսզի շարունակեն ճանապարհը և մշակեն իրենց նոր գործը:

Մարգարիտ Միրզոյան
Հարություն Մալխասյան

ARMENIA IN ROCK

2019 թվականի սեպտեմբերի 27-ին ու 28-ին Ազատության հրապարակում Հայաստանի Ռոք ասոցիացիայի ու DOGMA խմբի նախաձեռնությամբ տեղի ունեցավ Armenia in Rock փառատոնը: Իրադարձությունը տպավորիչ էր նրանով, որ համախմբել էր հայաստանյան ռոք բեմի գրեթե բոլոր գլխավոր կատարողներին՝ վետերաններից մինչև նորեկներ: Իսկ դրանից ոչ շատ առաջ վավերագրական ֆիլմ էր նկարահանվել այդ նույն խմբերի մասին, հետո էլ պիտի միջազգային ելույթներ լինեին... Այս ամենի մասին պատմում է փառատոնի կազմակերպիչ, Ռոք ասոցիացիայի նախագահ, Dogma խմբի բաս կիթառահար Վարդան Գրիգորյանը:

Ռոք խմբերի «ներքին խոհանոցը»

Մի օր Տիկնիկայինի մեր ստուդիայում Dogma-ի հերթական փորձն էինք անում: Ինչպես միշտ քննարկում էինք տարբեր հարցեր ու մտածեցինք, որ լավ կլինի տեսնել ու ցույց տալ հայկական տարբեր ռոք խմբերի ներքին խոհանոցը՝ որտեղ ու ինչպես են նվագում, ոնց են փորձ անում, ինչպես է անցնում իրենց առօրյան, ոնց է ծնվում երաժշտությունը, ինչ է նշանակում լինել պրոֆի խումբ ու էլի հազար ու մի հարց:

Ռոք համայնքի մասին, ըստ էության, հավաստի ու ամփոփ ինֆորմացիա չկա՝ միայն հազվադեպ հարցազրույցներ, կիսատ-պռատ տեղեկություն: Գաղափարն այն էր, որ հենց մենք էլ պատմենք մեր մասին, հանրայնացնենք, իրազեկենք, պատմություն հավաքենք: Որոշեցինք պատմել խմբերի մասին՝ հիմնվելով իրական փաստերի վրա ու 100 տոկոսանոց ճիշտ ինֆորմացիա փոխանցել: Մեզ մոտ երաժշտական չափանիշը սահմանափակվում է «լավ ա երգում-վատ ա երգում» բնորոշմամբ, իսկ մենք ուզեցինք ցույց տալ իսկական՝ մասնագիտական կողմը:

Ռոք-դոք

Այսպիսով, «ներքին խոհանոցի» հանրայնացումը որոշեցինք մեզնից սկսել: Պրոֆեսիոնալ տեսախցիկներ ձեռք բերեցինք, թիմ հավաքեցինք, որ իրականացնենք նկարահանումներն ու վավերագրենք բոլորին մեր ստուդիայում: Բայց կեսից մտափոխվեցինք ու որոշեցինք գնալ խմբերի մոտ՝ բոլորին հավաքելով աշխատանքի վայրում ու միավորելով հենց իրենց ռոքային գաղափարի շուրջ:

← *Adana Project*

↑ *Վարդան Գրիգորյանը՝ Dogma-ի ելույթի ժամանակ*

↓ *Eleven Green*

Մեր նկարահանման թիմով նստեցինք իմ մեքենան ու գնացինք Գյումրի՝ որոշեցինք սկսել «Բամբիռի» Ջագից, հետո՝ Վանաձոր, հետո «Ոստան Հայոցենց» մոտ՝ Ուստա Արեգի՝ Սաղմոսավանում գտնվող պապիկի տանն էին միշտ հավաքվում, հետո Երևան, ամեն մեկին իր մթնոլորտում, իր ոճով, իր ռոքով ու գաղափարով: Ճանապարհ ենք ընկել, գնացել դաշտեր, խորոված արել, խոսել, նվագել ու վավերագրել այդ ամենը:

Ֆիլմում պատմում ենք 20 խմբերի մասին: Ընտրել ենք նրանց, ում ես գիտեի անձամբ, ծանոթ էի նրանց գործունեությանն ու որակյալ էի համարում: Խմբեր, որոնք բազմաթիվ ձայնագրություններ, ալբոմներ, համերգներ, շրջագայություններ, ինչ-որ նվաճումներ են ունեցել:

Իհարկե, նեղացողներ էլ եղան, սակայն դա իմ ու ընկերներիս նախագիծն էր, մեր սեփական բյուջեով ենք արել ու նորմալ է, որ մենք էինք որոշում՝ ում ընդգրկել: Վստահ եմ՝ եղել են լավ խմբեր, որոնց չենք անդրադարձել, քանի որ այդ պահին չենք իմացել նրանց մասին:

Ֆիլմը վաղուց պատրաստ է: 6 ժամ է՝ 4 մասից բաղկացած, խմբերը բաժանված են ըստ սերունդների՝ խորհրդային տարիներից մինչև մեր օրեր: Ուզում ես իմանալ «Ոստան Հայոցի» մասին, միացնում ես ֆիլմում հենց իրենց հատվածը, տեսնում ես փորձը, ինչ են մտածում, խոսում, ինչպես են ապրում, հանգստանում, հետո՝ բեմում, թե ինչպես են նվագում: Սա այն իրականությունն է, որ ուզում էինք ցուցադրել:

«Անում ենք»

Բայց սա դեռ ամենը չէր. վավերագրական ֆիլմն ու թեման հանրայնացնելու հետ մեկտեղ

↑ Հարությունյան Ուսման
Հայոցի անդամների հետ

որոշեցինք այս գաղափարն ավելի գլոբալ առումով զարգացնել՝ կազմակերպելով Armenia in Rock ռոք փառատոնը, որը պիտի դառնար ամենամյա ու համախմբեր բոլորին: Տարբեր երկրներն ունեն իրենց՝ այցեքարտ դարձած հայտնի ռոք փառատոները, մենք էլ ուզեցանք մերն ունենալ: Ֆիլմով ուզում էինք ցույց տալ խմբերին իրենց միջավայրում, իսկ հետո փառատոնով՝ արդեն բեմում:
Ֆիլմի նկարահանումների ընթացքում բոլոր խմբերի հետ քննարկեցինք ու համաձայնեցրինք՝ անում ենք փառատոնը: Պատասխանը միանշանակ էր՝ անում ենք:
Սկսեցինք:

Ու ստացվեց

Ամեն բան մեր ուժերով ենք իրականացրել: Երևի նման բան քաղաքում չէր եղել, որ նման մասշտաբի փառատոն լինի, բայց պաստառներին, բացի անունից, որևէ այլ բան, լոգո նշված չլինի: Քաղաքապետարան գնացի, խնդրեցի, որ Օպերայի հրապարակը 4 օրով հատկացնեն մեզ՝ երկու օրը փորձերի համար, երկուսն էլ՝ համերգի:
Ու ստացվեց. նկարահանեցինք, եկանք հասանք Ազատության հրապարակ, բեմը սարքեցինք, ու սկսվեց: Մինչև վերջ էլ մարդիկ հարցական աչքերով էին նայում մեզ՝ չէին հասկանում, թե ինչ է կատարվելու, ինչ է լինելու:

18 խումբ այդ երկու օրերի ընթացքում ելույթ ունեցավ բեմում: Բոլորը բացառապես սեփական կատարումներն էին նվագում: Համերգը ևս նկարահանվում էր: Ildaruni ու Level 81 խմբերը, որ էքստրեմալ մետալ են նվագում, բեմում ելույթ չունեցան: Տարածքային առումով նրանց երաժշտության համար հարմար ու սազական չէր: Բայց նրանց մասին կա ֆիլմում: «Բամբիռենք» էլ բեմում չնվագեցին, դրանից առաջ Գերմանիա էին մեկնել, որոշ խնդիրների պատճառով ուշ վերադարձան:

Չստացված շարունակությունը

Շարունակությունը պիտի լիներ 2020-ի օգոստոսի 28-ից 30-ը՝ Լոռիում. փառատոնը դառնում էր միջազգային: Ամեն ինչ պատրաստ

էր, խմբերը հրավիրված էին, պայմանագրերը՝ համարյա կնքված: Բայց փոխվեց ամեն ինչ՝ համաճարակ, հետո էլ՝ պատերազմ:
Հաստատված խմբերի կազմում էին այնպիսի աշխարհահռչակ խմբեր, ինչպիսիք են՝ Opeth-ը, Sons of Apollo-ն, Pain of Salvation-ը, Ihsahn-ը, Anathema-ն, Dirty Loops-ը և այլն: Փառատոնի հիմնական գաղափարներից էր բացահայտել ու օգտագործել Վանաձորի ներուժը՝ վերադարձնելով հայկական ռոքն իր բնօրրան: Ամենակարևոր գաղափարը, սակայն, այն էր, որ սա խաղաղ երկիր է՝ չնայած որ հաճախ ընկալվում է որպես կոնֆլիկտային տարածք: Իսկ հետո սկսվեց պատերազմը: Իմաստային առումով ամեն ինչ փոխվեց, մի քանի խմբեր, որոնց հետ արդեն համագործակցության պայմանագիր ունեինք, դադարեցրին գործունեությունը: Հիմա էլ պատրաստ եմ շարունակել, բայց...

↑ FairWind ↓ Clocker

← Բամբիռ.
երկու սերունդ

Ամեն ինչ ռոքի մասին

Կա այս ամենի շարունակությունը, որի վրա աշխատում ենք: Ցանկացանք ստեղծել մի հարթակ՝ կայք, որտեղ կլինի ամեն ինչ ռոքի մասին: Քլիք ես անում որևէ անվան վրա ու ստանում ես ամեն ինչ՝ սկսած տեղեկությունից, վերջացրած տեսանյութերով, համերգներով, նոտաներով և այլն:
Կայքում բազմաթիվ բաժիններ կան՝ այդ թվում նաև ռոք TV, որը բազմազան բովանդակություն կունենա՝ մաստերկլասներ, տեխնիկական ամփոփումներ, երաժշտական ռեվյուներ: Վստահ եմ, որ կամաց-կամաց այս ամենը կհետաքրքրի հասարակությանը: Հետագայում նախատեսում ենք նաև ներգրավել լրագրողների, ովքեր կկարողանան մասնագիտանալ հենց երաժշտական ռեվյուներ գրելու հարցում՝ երաժշտական քննադատներ կունենանք:
Կայքը համարյա պատրաստ է, սակայն հովանավորի կարիք ունենք, որովհետև մեր սեփական ռեսուրսները սպառվեցին ֆիլմի նկարահանման ու համերգի ընթացքում: Մեր ընկերների, կամավորների ուժերով ենք ամեն ինչ անում, դրա համար էլ փոքր ինչ դանդաղ է ստացվում: Հենց որոշում եմ, կամ խոսում եմ ֆիլմի պրեմիերայից, մի բան լինում է ու ամեն ինչ խառնվում: Դրա համար որոշել եմ, որ երբ պատրաստ լինի կայքը, հենց այդ հարթակում էլ կցուցադրենք:

← Ցեսպի ավարտը

Լենա Գևորգյան
Vibrographus

ԺԵՇՏԱՍՉԻ

Իրալայի «սադիստները» Մանկական կբոսայգում, լեգենդար Sepultura-ի կբոսանէները Երևանում, իրանցի մեթալիստների ֆերբակալումը Հայաստանի սահմանին, լեհական Vader-ի դեմ արշավը. երևանցի ամենաակտիվ մեթալիստներից մեկը՝ Արսեն «Փինհեդ» Հակոբյանը, պատմում է, թե ինչպես ոռֆ համայնքի ներսում ֆևավորվեց մեթալիստների խմբավորումը և ինչու է նրա հիմնած Zhesht Events-ը տարիներ շարունակ այստեղ բերում աշխարհի լավագույն մեթալ խմբերին (գրեթե առանց որևէ ֆինանսական օգուտի):

↑ Metal Attack փառա-
կոնը, 2008 թվական

→ Իրանական մեղալի
փառատոնի մասնակիցները

Rotting Christ, Zhesht
Events-ի 10-ամյակ

Rock the Borders
փառատոն

Փինք Ֆլոյդից Ալեգրովա, Ալեգրովայից՝ Մեղալիկա

Ռոք լսելն ինձ համար բավական օրգանիկ է, քանի որ ծնողներս ռոքասեր էին, էն տարիների Երևանի հիպիներն էին ու մեր տանը միշտ էլ հնչել է Բիթլզ, Դիփ Փարփլ, Փինք Ֆլոյդ և այլն: Դեռահասության տարիքում մի պահ շեղվել էի ու հասել գրեթե Իրինա Ալեգրովային: Հետո դե կամաց-կամաց վերադարձա լավ երաժշտությանը: Անցումը մետալին տեղի ունեցավ Մետալիկայի «One» կիսաբալլադի շնորհիվ, որի առաջին հատվածը ռոք բալլադ էր, իսկ մյուս կեսը՝ բավական ծանր թռեշ մետալ: Սկզբում ինձ առաջին մասն էր դուր գալիս, քիչ-քիչ սկսեց երկրորդ մասն էլ դուր գալ ու հասկացա, որ ինձ տանում է դեպի ավելի ծանր, ագրեսիվ երաժշտությունը, ու անցա ծանր թռեշ մետալին՝ Sepultura, Slayer և այլն: Դրանից հետո արդեն անցումը բլեք մետալին, դեթ մետալին շատ ավելի օրգանիկ էր: Հետագայում նույնիսկ ինքս նվագեցի հայկական մետալ խմբերից մեկում՝ Sworn-ում և նույնիսկ նոր թողարկվող ալբոմում սքրիմն ու վոկալն էր իմը:

90-ականների Երևանի մեղալոյա համայնքը

Իհարկե, մեզանից առաջ էլ ռոքասերներ կային և մետալ լսող առաջին սերունդը մենք չէինք 90-ականներին, բայց մեր ժամանակ դեռ մնում էր անդերգրաունդ վիճակում: Մետալիստներն այնքան քիչ էին, որ բոլորս իրար ճանաչում էինք: Հիմնական տուսվելու տեղը «Սահինյան» ակումբն էր, որտեղ երկու շաբաթը մեկ հավաքվում էին մետալի սիրահարները: Այդտեղ կամ բարձր երաժշտություն էր միացրած լինում, կամ էլ հայկական ռոք խմբեր էին նվագում: Ու հենց այդտեղ էլ առանց կաշկանդվելու մոտենում ու ծանոթանում էինք միմյանց հետ, քանի որ նույն հետաքրքրությունն ունեինք ու շատ չէինք:
Որքան քիչ էինք, այնքան կարևոր էր միմյանց գտնել-ճանաչելը, երաժշտությամբ, կասետներով փոխանակվելը: Երևանում ընդամենը մի քանի կետ կար, որտեղից կարելի էր կասետներ ու տարբեր ռոքային ատրիբուտներ գտնել: Կասետները հիմնականում Աբովյանի «Օրֆեյ» կամ «Կնիգոլյուբ» գրախանութներից էինք գնում, որտեղ, չգիտես ոնց, հայտնվում էին մետալ կասետներ: 90-ականներին, երբ առանձնապես ինտերնետ էլ չկար ու քիչ ինֆորմացված էինք, կասետներն ըստ նկարի էինք ընտրում. որը դուր էր գալիս, դա էլ գնում էինք, ու եթե նույնիսկ երգերը վատն էին լինում, այնքան էինք լսում, որ սկսում էին դուր գալ: Դե, ընտրության հնարավորություն չունեինք, ինչ կար, դա էլ լսում էինք: Եթե բախտներս բերեր, ինչ-որ մեկը դրսից կասետներ կբերեր ու կձայնագրեինք, միմյանց կփոխանցեինք: Մեկ էլ Վերնիսաժում էր հնարավոր, օրինակ, Sepultura-ի նկարով շապիկ գտնել, դա շատ մեծ բան էր այն ժամանակ: Ամեն ինչ շատ իրական էր ու ամեն մանրուք մեծ արժեք ուներ: Հիմա արդեն այդպես չէ, ամեն ինչ կա, ամեն ինչ հասանելի է:
Մեզ մոտ առհասարակ ռոքասերների համայնքը միշտ էլ տարբերվել է օրինակ ԱՄՆ-ի կամ Մեծ Բրիտանիայի համայնքից: Նման երաժշտությունն մեզ մոտ, որպես կանոն, լսում է ինտելիգենցիան: Սա վատ չի կամ լավ չի, պարզապես այդպես է ստացվել: Բայց հատկապես մետալն իր մեջ որոշ կոնսերվատիվիզմ է պարունակում: Դա մի բան է, որով պատում ես քեզ ու դա որոշ չափով սահմանափակում է մտահորիզոնդ, սկսում ես ուշադրություն չդարձնել ուրիշ ոչնչի ու չընդունել ուրիշ ոչինչ: Այդ էլիտիզմն ինձ մի քիչ անհանգստացնում է: Ես կողմ եմ այլոց ճաշակի ու նախընտրած ոճերի հանդեպ տոլերանտությանը:

Ինչպես էր կոփվում ժեշրը

2000-ականներին վեբ-կայք բացեցի, որն ավելի շուտ հայկական մետալ խմբերի կատալոգ էր. ներբեռնում էի նկարներ ու mp3-ներ, պատմում խմբերի մասին: Ինչ-որ պահի միացա Հայ FM-ում «Մետալ ֆրոնտ» ծրագիրը վարող ընկերոջս՝ Արտաշես Արամազդին, ու իր հետ «ԷքսպերիՄետալ» անունով ծրագիրը հիմնեցինք: Այն ժամանակ մետալը մեր էության մասն էր: Մենք աստվածացնում էինք մետալիստ խմբերին, որոնց լսում էինք ու դժվարությամբ էինք պատկերացնում, որ իրենք էլ միս ու արյունից կազմված հասարակ մարդիկ են, որ ուղղակի երաժշտություն են ստեղծում ու նվագում, ինչպես մենք: Օրինակ՝ նորվեգական բլեք մետալի ներկայացուցիչները մեզ թվում էին բոլորովին այլ աշխարհից:

Rotting Christ, Zhesht Events-ի 10-ամյակ

Napalm Death

Saturnus

Շուտով սկսեցի շատ ճանապարհորդել, հաճախել տարբեր ռոք համերգների ու փառատոների: Գնացի Մոսկվա՝ իմ սիրելի Mayhem-ի համերգին ու այդ ժամանակ էր, որ հասկացա, որ բոլոր այդ մարդկանց հետ կարելի է ծանոթանալ, շփվել ու, ինչու ոչ, հրավիրել Երևան և որ դա ինչ-որ վերացական բան չէ, լրիվ իրական է: Մի օր էլ հասկացա, որ գրեթե նույն գումարով, ինչ ծախսում եմ այդ համերգներին գնալու համար, կարող եմ խմբերին հրավիրել Երևան ու կազմակերպել համերգներ, հետևերը տուսվել, շփվել և, որ պակաս կարևոր չէ, հպարտանալ, որ մեր երկրում էլ նման բաներ են կատարվում: Այդպես ստեղծվեց Zhest Events-ը:

2006-ին առաջին անգամ վրացական խմբեր բերեցինք: Հետո արդեն տարվա մեջ մի քանի անգամ մետալ համերգներ էինք կազմակերպում Երևանում: Այդ շրջանում Տիկնիկային թատրոնի դահլիճը կահավորվեց նոր տեխնիկայով և լուսավորությամբ: «Վիբրոգրաֆուսն» [Dogma ռոք խմբի հիմնադիրների ստեղծած պրոմոութերական ընկերությունը, որը կազմակերպել է, օրինակ, Deep Purple-ի երևանյան ելույթները – խմբ.] այդտեղ տարածք ունեցավ ու սկսեց համերգներ կազմակերպել: Իրենց հետ համագործակցեցինք ու իրենց աջակցությամբ արդեն 10 տարուց ավելի է Տիկնիկայինի դահլիճը Երևանում դարձել է այն կետը, որտեղ պարբերաբար մետալ ու ռոք համերգներ են կազմակերպվում, որոնց շնորհիվ կտրուկ բարձրացել է դրանց թե՛ որակն ու թե՛ փոխվել հասարակական ընկալումը: Դրանից առաջ համերգներն օրինակ Stop-ում կամ Ժուռնալիստների տանն ավելի փոքրամասշտաբ, ակումբային բնույթ էին կրում. մի քիչ ավելի կեղտոտ, աղմկոտ, ավելի վատ սաունդով, լուսավորության ու տեխնիկայի առումով՝ ավելի թույլ:

Sepultura-ից մինչև կիսալեգալ իրանցիներ

Իրականում «Ժեշտի» մենամեծ մոտիվացիան եղել է սեփական ցանկությունների բավարարումը, սեփական երազանքներին հասնելը: Դպրոցական տարիքում, երբ Մետալիկայից անցա ավելի ծանր երաժշտության, դարձա Sepultura-ի ֆան ու նույնիսկ մեծ հավաքածու ունեի, ինչն այն ժամանակ հեշտ բան չէր: Ու 10 տարի անց ինձ հաջողվեց կազմակերպել խմբի համերգը Երևանում: Աննկարագրելի զգացողություն է, երբ կարողանում ես ամենասիրելի խմբիդ հրավիրել քո երկիր, շփվել, ցույց տալ քաղաքդ: Սա թերևս կյանքիս ամենամեծ նվաճումներից մեկն է, որտեղ երբեք չի եղել որևէ ֆինանսական ենթատեքստ, եղել է միայն էնտուզիազմ և սեր երաժշտության հանդեպ:

Նույն զգացողություններն էին Horse the Band-ի հետ կապված, երբ երևանյան համերգից հետո միասին գնացինք Թբիլիսի, որտեղ շատ պատահական մտանք ինչ-որ փոքր փախած վարսավիրանոց: Անհավատալի էր, որ իմ ամենասիրած մետալ խմբերից մեկի վոկալիստն իմ աչքի առաջ մազերն էր կտրում և որ այդ ամենի նախաձեռնողը հենց ես էի:

Մեկ այլ երազանք էլ 2008 թվականի Rock the Borders փառատոնն էր: Այդ տարի Stryfe-ի տղաները՝ ես՝ «Ժեշտ իվենթսը», «Մետալ Ֆրոնտի» Արտաշեսը, «Վիբրոգրաֆուսի» Վարդանենք, բոլորով կպանք էդ գործին: Գումար հայթայթվեց նախկին ԱՊՀ երկրներից ռոք խմբեր հրավիրելու համար: Ընթացքում հասկացանք, որ բավական լուրջ գումարներ ենք վատնում միջակ խմբերի վրա ու այդ գումարով կարող ենք մեր սիրելի ու հայտնի խմբերից որևէ մեկին հրավիրել: Այդպես որոշեցինք Հայաստան հրավիրել մեր այն ժամանակվա ամենասիրելի պրոգրեսիվ դեթ մետալ նվագող խմբերից մեկին՝ իտալական Sadist-ին:

Այդ ընթացքում համընկավ իմ այցը Չեխիա, որտեղ պետք է ներկա լինեի ռոք փառատոնի և հանդիպեի Sadist-ենց: Հետս միանգամից պայմանագիր տարա ու հենց այնտեղ էլ ստորագրեցինք: Երբ վերադարձա, սկսեցինք համերգի նախապատրաստական աշխատանքները: Հուզվում էինք, հաճախ սխալվում էինք, բայց, ի վերջո, ամեն բան լավ ստացվեց:

Սկզբում պլանավորել էինք համերգը կազմակերպել Օպերայի հրապարակում, բայց հետո տեղափոխեցինք Մանկական այգի: Բավական մեծ բեմ ունեցանք, բոլոր այդ խմբերը եկան, Sadist-ն էլ նվագեց: Նման էքստրեմալ երաժշտությամբ բացօթյա համերգ Երևանում առաջին անգամ էր տեղի ունենում: Հատկապես Sadist-ենց նվագելու ընթացքում տեսնում էի,

← Vader-ի համարյա
չեղարկված համերգը

↓ Sepultura

Sepultura-ն՝ հայ
երկրպագուների հետ

թե ինչպես էին կողքի շենքերի բնակիչներն ու անցորդները զարմացած այգու կողմ նայում: Շատ մազալու էր այդ ամենին հետևելը: «Ժեշտն» իրականացնում էր նաև ուրիշների երազանքները: 2012-ին իրանական մետալ փառատոն կազմակերպեցինք Երևանում: Ընդ որում, դրանցից կապի մեջ էի միայն Master of Persia-ի տղաների հետ, որոնց և խնդրեցի կապ հաստատել այլ հաջողված խմբերի հետ: Ընտրված ու հրավիրված 10 խմբերից երկուսը տեղ չհասան. դեռ սահմանը չհատած ձերբակալեցին ու բանտ նստեցրեցին: Բանն այն է, որ Իրանում ռոքը և առավել ևս մետալը ուղղակի ապօրինի են, հնարավոր չի համերգներ ու փառատոներ կազմակերպել, ազատ ստեղծագործել: Եղած խմբերն իրենց տան նկուղներում թաքուն են նվագում, ու հենց դա էր, որ մեզ ստիպեց կազմակերպել իրանական մետալի փառատոն ու Երևանում այդ խմբերին ազատ հարթակ տրամադրել: Ֆինանսավորման համար դիմել էի ԱՄՆ դեսպանատուն ու գրանտ ստացել, որը, ի դեպ, «Ժեշտի» կյանքում միակն է եղել: Ի վերջո, փառատոնը կայացավ, վերջում խմբերին ուղարկեցինք իրենց ելույթների DVD տեսագրությունները, ինչը ևս իրենց համար մեծ բան էր:

«Սատանայապաշտները» Տիկնիկայինում

2019-ին լեհական Vader խմբի համերգից առաջ բողոքի մեծ ալիք բարձրացավ: Տիկնիկային թատրոնում մեր հերթական համերգը վտանգված էր: Պարզվեց՝ մի խումբ մարդիկ դիմել էին Մշնախ՝ համերգը չեղարկելու պահանջով: Ասում էին, թե իբր խմբի մենակատար Պյոտր Պավել Վիվչարեկը սատանիստ է: Սակայն հակառակ այդ անհեթեթ բողոքների՝ մեզ սատարողների մեծ բանակ հավաքվեց, որոնք սոցցանցերում գրառումներ արեցին, հայտնեցին իրենց աջակցությունը մեզ ու վրդովմունք հայտնեցին արվեստի ցենզուրայի հանդեպ: Ի վերջո, ավելի օգտակար եղավ այդ աղմուկը, հասարակության մեջ նոր հարցեր բարձրացան, դիսկուրս առաջացավ ցենզուրայի ու տոլերանտության շուրջ: Համերգն էլ, ի վերջո, կայացավ, Poligraf-ը սիրով հյուրընկալեց մեզ ու ամեն բան նույնիսկ շատ ավելի լավ ստացվեց, քան կլիներ Տիկնիկայինում: Ժողովուրդը համախմբվեց, որովհետև հասկացավ, որ նմանատիպ մոտեցումներով ու ցենզուրայով չի կարելի արվեստը սահմանափակել: Հաճելի էր տեսնել, թե ինչպես են ընկերները և նույնիսկ Տիգրան Համասյանն ու Սերժ Թանկյանը սատարում մեզ: Սովորաբար այդպես է. մարդիկ սկսում են պայքարել նրա դեմ, ինչը խորթ է ու անհասկանալի ու դե երևակայությունն էլ սատանիզմից այն կողմ չի գնում:
Իհարկե, մետալը ծանր, ագրեսիվ, ջղայնություն պարունակող երաժշտություն է և, իհարկե, չեմ հերքի, որ կա նաև այդ ուղղվածությունը, բայց դա ողջ ոլորտի ընդամենը 5 տոկոսը հազիվ լինի: Նույն հաջողությամբ կա քրիստոնեական մետալ, որտեղ փառաբանվում է Աստված: Այս պոռթկումը վերջին տարիներին Հայաստանում որդեգրված պահպանողական, նացիոնալիստիկ տենդենցների ու ռազմավարության տրամաբանական արդյունքն էր: Այդ ամենը, իհարկե, ազդել է հասարակության՝ ոչ ստանդարտ երևույթների հանդեպ ունեցած վերաբերմունքի վրա, մարդիկ անհանդուրժող են իրենց կարծիքով ոչ սովորական երևույթների հանդեպ: Կարծում եմ, որ այս իրավիճակում մեծ բան է այն, որ մեր 12 տարիների գործունեության ընթացքում մեր կազմակերպած ոչ մի համերգ չի չեղարկվել, այդ թվում և Vader-ը:

Ժանգոտ

Հայաստանում որակյալ խմբեր ու տաղանդավոր մարդիկ կան: Բայց, միևնույն է, որքան էլ պոտենցիալով լի ու տաղանդավոր երաժիշտներ ունենանք, շատ կարևոր է, թե որ երկրում ենք ապրում, որքանով ենք հեռու կամ կտրված համաշխարհային երթուղիներից:
Ռոք ծաղկունք Հայաստանում երբեք էլ չի եղել, ուղղակի բոլորս փորձել ենք պահել ռոք երաժշտությունը գոնե ինչ-որ մակարդակի վրա: Չնայած իմ գերնպատակը դրսից խմբեր բերելն էր, այնուամենայնիվ փորձել ենք միշտ սատար կանգնել նաև տեղական խմբերին, բայց ես միշտ էլ մի քիչ պեսիմիստորեն եմ վերաբերվել Հայաստանում երաժշտության ու ոչ միայն երաժշտության ոլորտին: Մենք երբեք առաջատար չենք եղել, ու երևի դա օրինաչափ է, պարզապես պետք է համակերպվել ու չողբալ:

Համիկ Բարխուդարյան
Zhesht Events

Ժամանակները փոխվում են, իսկ մենք ժպրում ենք

Ռոք երաժշտության մասին խոսակցությունը կիսապ կլիներ, եթե չանդրադառնայինք նրա բողոքական բաղադրիչին: Բոբ Դիլանից ու Վուդսթոքից մինչև Սիսթեմ օֆ ը Դաուն, Սոաֆյալներից մինչև Զոմբիներ. ովքեր և ինչի դեմ էին/են բողոքում դրսի և Հայաստանի ռոքերները:

Speak out, you got to speak out against
The madness, you got to speak your mind,
If you dare.
But don't try to get yourself elected.
If you do you had better cut your hair.
Crosby, Stills, Nash and Young, "Long time Gone"

Մենք նրանց բերեցինք նոր օրվա երակներ,
Զահել հիշ բերեցինք ապագա օրերի,
Նրանց հայացքը, ափսոս, վաղուց խուլ է դարձել,
Մեր վնգուն, գրկաբաց երգերին,
Մեր սիրուն, աղմկոտ երգերին...
Սիեր Սանուկյան,
«Մենք ժպրում ենք»

«Գեղագիտականը, որը դադարում է լինել վուլգ գեղագիտական, մտնում է քաղաքականի գարածք»
Մի խմաստուն մարդ, ում անունը չհաջողվեց գտնել համացանցում

Freedom! Ինչպես ռոքը դարձավ ազատության երաժշտություն

1969 թվականի օգոստոսի 15-ին Նյու Յորք նահանգի Բեթել բնակավայրի մոտ՝ Ռուսաստանից ներգաղթած հրեա էմիգրանտների որդի Մաքս Յասգուրին պատկանող ֆերմայի տարածքում, հավաքվել էր մի քանի հարյուր հազար մարդ: Արդեն մի քանի ժամ էր, որ երկար մազերով և գույնզգույն շորերով ջահելները սպասում էին խոստացված համերգին: Փառատոնին այնքան շատ մարդ էր եկել, որ ճանապարհները խցանված էին, և երաժիշտները չէին կարողանում տեղ հասնել: Վերջապես երեկոյան ժամը 5-ին բեմ դուրս եկավ բարձրահասակ մի աֆրոամերիկացի՝ ակուստիկ կիթառով: Ռիչի Հեյվենզն էր, ֆոլք-երաժիշտ, ով երգում էր սուր քաղաքական և սոցիալական խնդիրների մասին՝ Վիետնամ, սևամորթների իրավունքներ, գալիք միջուկային ապոկալիպսիս: Նա պետք է լիներ հինգերորդը, բայց քանի որ մյուս երաժիշտներից ավելի շուտ էր տեղ հասել, նրան խնդրեցին սկսել ելույթը: Երբ Ռիչին ավարտեց իր երեքժամանոց սեթը, հաջորդ խումբը դեռ չէր հասցրել պատրաստվել ելույթին և նրան խնդրեցին ևս մեկ երգ երգել: Ռիչիի երգացանկն արդեն սպառվել էր, բայց նա իրեն չկորցրեց: Պարզապես սկսեց նվագել մտքին եկած առաջին ակորդները և կրկնել «Freedom» բառը՝ «ազատություն»:

Հետագայում Հեյվենզը պատմում էր. «Երբ սկսեցի նվագել, գաղափար չունեի՝ ինչ պիտի երգեմ... կարծում եմ՝ արտաբերեցի «ազատություն» բառը, քանի որ իմ առջև տեսնում էի ազատությունը...»: Քիչ անց հարյուր հազարավոր մարդիկ երգում էին «Freedom! Freedom! Freedom!»: Այդպես սկսվեց Վուդսթոքի լեգենդար փառատոնը:

1960-ականներին ռոքը և ազատությունը դարձել էին հոմանիշներ: Սրանից տասը տարի առաջ «ռոքնռոլ» նշանակում էր պարային կարճ երգ՝ պարզ և անլուրջ բառերով: Քչերն

↓ Բոբ Դիլան



էին պատկերացնում, որ մի քանի տարի անց ռոքը կդառնա լուրջ գլխացավանք իշխանություն ունեցողների համար: Ճիշտ է, կային դրա նախանշանները: Այսպես, ամերիկյան պահպանողականներին արդեն իսկ անհանգստացնում էր, որ սև երաժիշտների երգերը հաճույքով լսում էին սպիտակները, և, ավելին, անամոթաբար կրկնում էին սևերի անպարկեշտ պարային շարժումները: Հատուկ անհանգստություն էր պատճառում, երբ երգելու զգացական ոճը և վերոհիշյալ անպարկեշտ շարժուձևը կրկնում էին սպիտակ երգիչները, օրինակ՝ «ռոքնռոլի արքա» Էլվիս Փրեսլին: Առավել հեռատեսների համար ակնհայտ էր, որ այս ամենը կարող էր սպառնալիք դառնալ ամերիկյան ավանդական արժեքների, և, անգամ, ազգային անվտանգության համար:
Սակայն անգամ ամենահեռատեսները չէին պատկերացնում, թե ինչ է կատարվելու մեկ տասնամյակ անց: 60-ականները դարձան երիտասարդների խռովության և մշակութային հեղափոխության դարաշրջան ոչ միայն Ամերիկայում և Արևմտյան Եվրոպայում, այլ գրեթե ամբողջ աշխարհում: Այս երիտասարդական խռովությունն ուներ ամենատարբեր արտահայտությունները քաղաքական, մշակութային և սոցիալական կյանքում՝ հիփիների շարժում, պայքար փոքրամասնությունների իրավունքների համար, գիտակցության ընդլայնման փորձեր, հակապատերազմական ելույթներ, և շատ ավելին: Եվ այս ամենը տեղի էր ունենում ռոքի հնչյունների ներքո:

Ժամանակները փոխվում են

Ընդ որում, ռոքը ևս անճանաչելիորեն փոխվել էր: Պարզ ռոքնռոլային ստանդարտներին փոխարինում են խլացնող ռիֆերը, անվերջ սոլոները, սադրիչ տեքստերը, էքստրավագանտ պահվածքը բեմի վրա: Անգամ եթե ռոքերները չէին երգում քաղաքականության մասին, նրանք մնում էին վտանգավոր խռովարարներ, որոնց երգերը սարսափեցնում էին ավանդապաշտ ժամանակակիցներին: Հիշենք Ջիմ Մորիսոնին և նրա «Վերջը» («The End»)՝ հնդկական ռագաների և ֆրոյդիզմի մոտիվներով պսիխոդելիկ ռոք-սիմֆոնիան, որն այսօր էլ շոկի մեջ է գցում ունկնդրին: 1967-ին, երբ լույս տեսավ Doors-ի առաջին ալբոմը, ամերիկյան ավանդական արժեքների ջատագովները երանի էին տալիս հիսունականների ռոքերների անպարկեշտ պարային շարժումներին, բայց արդեն ուշ էր: Ինչպես երգում էր Բոբ Դիլանը՝ «ժամանակները փոխվում են»:
Եթե 50-կաններին անգլալեզու երաժշտության մեջ քաղաքական և սոցիալական սուր թեմաներին հիմնականում անդրադառնում էին ֆոլք երաժիշտները, ապա այժմ գլխավոր

← Էլվիս Փրեսլի

→ Ջոն Լենոնի ու Յոկո Օնոյի հերթական փերֆորմանսը

← Օհայոյի ողբերգական դեպքերը ոգեշնչեցին Նիլ Յանգին

→ Ջոն Լենոնն ու Յոկո Օնոն՝ պայքարային դեմ

խոովարարների դերն իրենց վրա են վերցնում հենց ռոքերները: Որոշ ֆոլք երաժիշտներ էլ սկսում են ռոք նվագել, ինչպես դա արեց Բոբ Դիլանը, ով 1965-ին Նյուփորթի ֆոլք-փառատոնին առաջին անգամ նվագեց իր «էլեկտրական» սեթը՝ շոկի ենթարկելով ֆոլքի երկրպագուներին: Դիլանը «Blowing in the Wind», «Times they are a-changing» և նման երգերի շնորհիվ դարձավ 60-ականների երիտասարդական ապստամբության գաղափարախոսներից մեկը: Ինչ-որ չափով հենց Դիլանի ազդեցությունն էր, որ ռոքերներին ստիպեց ավելի լուրջ վերաբերվել երգերի տեքստերին: Բայց առանց դրա էլ, ռոքերները պարզապես չէին կարող չգիտակցել, որ ունեն հսկայական ազդեցություն մարդկանց վրա, և վաղ թե ուշ պետք է փորձեին այն օգտագործել, որ ուշադրություն հրավիրեն իրենց հուզող խնդիրների վրա: Թերևս քչերն են ռոքի պատմության մեջ ունեցել այնպիսի ազդեցություն ժամանակակիցների վրա, ինչպես Բիթլզը: Փառահեղ քառյակի անդամներից հատկապես Ջոն Լենոնն էր, ով աչքի էր ընկնում սոցիալ-քաղաքական դիրքորոշումներով: Սկսելով սիրո մասին միամիտ երգերից, անցնելով աբսուրդիստական պսիխոդելիկ կտավների փուլով (Strawberry fields և Lucy in the Sky with Diamonds)՝ Լենոնը, հատկապես իր սոլո շրջանի երգերում սկսեց քննարկել սուր քաղաքական և աշխարհայացքային հարցեր (Working Class Hero և Give Peace a Chance): Էլ չենք խոսում Լենոնի էքստրավագանտ քաղաքական պերֆորմանսների մասին, երբ

↓ Ջիմ Մորիսոն

նա իր նորաթուխ կին Յոկո Օնոյի հետ խաղաղություն էր պահանջում հյուրանոցային սենյակի մահճակալից:

Ի դեպ, քչերը գիտեն, որ Բիթլզի ամենահայտնի երգերից մեկը՝ Come Together-ը, կարող էր դառնալ նախընտրական քարոզարշավի երգ: 1969-ին ամերիկացի հոգեբան Թիմոթի Լիրին, ում գիտակցության ընդլայնման ոլորտում ոչ ավանդական հայացքների համար հեռացրել էին Հարվարդի համալսարանից, պատրաստվում էր մասնակցել Կալիֆոռնիայի նահանգապետի ընտրություններին: Լիրին խնդրեց Լենոնին երգ գրել իր ընտրարշավի համար, որի կարգախոսն

էր՝ Come together, join the party: Քարոզարշավն այդպես էլ տեղի չունեցավ, բայց Come Together բառերը մնացին Լենոնի հիշողության մեջ և դարձան լեգենդար այդ երգի կրկներգը: Ռոքերների խռովությունը հիմնականում ուներ լայն խոհափիլիսոփայական բնույթ: Բայց որոշ ռոքերներ արտահայտում էին կոնկրետ քաղաքական և քաղաքացիական դիրքորոշումներ: Իր քաղաքացիական ակտիվիզմով հատկապես աչքի էր ընկնում Նիլ Յանգը: 1970 թվականի մայիսի 4-ին Օհայո նահանգի Քենթ քաղաքի համալսարանում ցույցի ժամանակ զինվորները կրակեցին անզեն ցուցարարների վրա՝ սպանելով չորս ուսանողի: Այդ համալսարանում լուսանկարչություն սովորող մի երիտասարդի լուսանկարների շնորհիվ ողջ Ամերիկան իմացավ այդ ողբերգության մասին: Ազդված այդ դեպքերից՝ Նիլ Յանգը գրեց «Ohio» երգը, որի կրկներգը՝ «Four dead in Ohio», հնչում էր իբրև մեղադրական դատավճիռ:

60-ականների ռոքերների երազանքներից շատերն այդպես էլ մնացին երազանքներ: Ռոքերներից ոմանք կուլ գնացին համակարգին և սկսեցին նվագել կոմերցիոն երաժշտություն, ոմանք էլ զոհ գնացին ալկոհոլի և թմրանյութի չարաշահմանը (կամ էլ, եթե հավատանք դավադրաբաններին, կառավարական գործակալների կազմակերպած սպանություններին): Ոմանք էլ պարզապես ծերացան և հիասթափվեցին: «I used to care, but times have changed», երգում էր ծերացած և դառնացած Բոբ Դիլանը 2000-ին:

Եվ այնուամենայնիվ, ժամանակը հետ պտտել հնարավոր չէ: Քաղաքական հեղափոխությունը, որի մասին երազում էին որոշ ռոքերներ, այդպես էլ տեղի չունեցավ, բայց մշակութային և հանրային փոփոխություններն այլևս հնարավոր չէր կանգնեցնել: Եվ ռոքն էլ այլևս երբեք չէր կարող վերադառնալ միամիտ երկուրոպեանոց երգերին, որոնցից ամեն ինչ սկսվել էր: Եկան նոր ուղղություններ, որոնցից ամեն մեկն իր ձևով ավելի արմատական էր, քան նախորդը՝ փանք, հեվի մեթալ, գրանջ, ալտերնատիվ, ցուցակը գրեթե անվերջ է: Ռոքերների ամեն նոր սերունդ իր ձևով էր արտահայտում իր բողոքն անարդարության դեմ: Երբեմն էլ ռոքին որպես երիտասարդական խռովության երաժշտություն փոխարինում են նոր ոճեր՝ ինչպես օրինակ՝ ռեպը կամ էլեկտրոնային երաժշտությունը՝ իրենց անհամար ժանրերով և ուղղություններով: Բայց ամեն անգամ, անկախ նրանից, թե ինչ երաժշտություն և ինչ բառեր են հնչում բեմից, տեղի ունեցողը գրեթե միշտ կարելի է նկարագրել Ռիչի Հեյվնզի բառերով. «Իմ առջև ես տեսնում էի ազատությունը...»:

Բայց մենք ժպտում ենք. հայկական ռոք-բողոքը

Հայկական ռոքը, ինչպես և հետխորհրդային մյուս երկրներում, շատ ավելի դժվար ճանապարհ է անցել: Եթե անգամ ամերիկյան ռոքերները, ապրելով «ազատ աշխարհի առաջատարը» համարվող երկրում, բախվում էին ճնշումների, պատկերացրեք, թե որքան դժվար էր լինել ռոքեր-խռովարար Խորհրդային Միությունում:

Թերևս առաջին ռոք-խռովարարները Հայաստանում «Առաքյալներ» խումբն էր, որոնց անունն արդեն իսկ ըմբոստության նշան էր: Եթե աստվածավախ Ամերիկայում ռոքերներից շատերն իրենց ըմբոստությունն արտահայտում էին մերժելով կրոնը, պարտադիր աթեիզմի երկիր ԽՍՀՄ-ում, հենց նման անուն ունենալն էր ըմբոստ ոգու արտահայտություն: Ըստ «Առաքյալների» առաջատար Արթուր Մեսչյանի՝ առաջին շրջանում խումբն ընդհանրապես ելույթ էր ունենում առանց անվան: Բայց երբ Պոլիտեխնիկում ունեցած մի քանի աղմկոտ համերգներից հետո տեղի կոմերիտականները սկսեցին հեգնել երաժիշտներին՝ անվանելով «նորընծա առաքյալներ» (ակնարկելով հոգևոր երաժշտության օգտագործումը և արտաքինը), նրանք որոշեցին, որ ուրեմն այդպես էլ կկոչվեն՝ «Առաքյալներ»:

Եթե արևմտյան ռոքերները սովորաբար աչքի էին ընկնում կոսմոպոլիտիզմով, ապա Խորհրդային Հայաստանում, ընդհակառակը, լինել ըմբոստ նշանակում էր խոսել ազգային խնդիրների մասին: Երբ սկսվեց Ղարաբաղյան շարժումը, ռոքերներն անմասն չմնացին տեղի ունեցողից: Այսպես, այն ժամանակվա հայկական հարդ ռոքի առաջատարներից

↑ «Առաքյալների» առաջնորդ Արթուր Մեսչյանը

«Ոստան Հայոց» խումբը 1991-ին ձայնագրում է «Զարթնիր, որդյակ» ալբոմը, որի երգերից մեկը՝ «Արցախ, լսի՛ր» անունով, դարձավ խմբի ամենասիրելի ստեղծագործություններից մեկը:

Երբ ԽՍՀՄ-ը փլուզվեց՝ իր հետ տանելով գրաքննությունը, թվում էր, թե ռոքի համար պետք է ոսկե դար սկսվեր: Բայց եկան բուռն 90-ականները, իրենց հետ բերելով հասարակության արխաիզացիա, և ռոքը, որպես մոդեռնին բնորոշ երաժշտություն, դժվարությամբ էր գոյատևում այն հասարակության մեջ, որտեղ տիրապետում էին ռաբիսն ու շանսոնը: Այնուամենայնիվ, հայոց ռոքը, ինչպես և ցանկացած ռոք, ուներ ապստամբ ոգի, որը չկարողացան կոտրել ոչ խորհրդային գրաքննությունը, ոչ էլ հետխորհրդային անճաշակությունը:

Հավանաբար հենց այդ ապստամբ ոգու շնորհիվ էր, որ գրեթե յուրաքանչյուր բողոքի ալիք Հայաստանում նշանավորվում էր բողոքի նոր երգերով: 2008-ի մարտի 1-ի ողբերգական դեպքերից հետո, երբ ընդդիմությունն ընդհատակում

→ Ուպտան Հայոց. «Արցախ, լսի՛ր»

էր, իսկ հանրությունը՝ շոկի մեջ, համացանցում սկսեցին հայտնվել երգեր, որոնք փորձում էին իմաստավորել տեղի ունեցածը և կոչ անում չհուսահատվել: Շուտով պարզվեց, որ դրանց մեծ մասի հեղինակը վանաձորյան «Լավ էլի» խմբի առաջատար Մհեր Մանուկյանն էր, իսկ երգերից մի քանիսի խոսքերի հեղինակը՝ Նիկոլ Փաշինյանը: Այդ օրերի ակտիվիստները հիշում են, որ այդ պահին Մհեր Մանուկյանի երգերը կարծես լույսի շող լինեին համընդհանուր խավարի մեջ: Թերևս դրանցից ամենահուզիչը «Մենք ժպտում ենք» երգն էր: Հետաքրքիր է, որ 2019-ին, երբ ընթանում էր նախկին նախագահ Ռոբերտ Քոչարյանի դատավարությունը, դատարանի բակում բողոքի ակցիա իրականացնող նրա աջակիցները միացրել էին հենց այդ երգը: Թերևս, դա նշանակում է, որ այս երգը ժամանակի փորձությունն անցած իսկական գլուխգործոց է:

Բողոքի հաջորդ ալիքները ծնունդ տվեցին նոր երգերի: 2015-ին «Էլեկտրիկ Երևանի» ցույցերի ժամանակ ցուցարարների առջև ելույթ ունեցավ «Զոմբիներ» խումբը, որի ամբողջ ստեղծագործությունը խիստ քաղաքական էր: Իսկ այդ ամենից մի քանի ամիս առաջ լույս էր տեսել հիմնականում ռեգգի ու սկա կատարող SimbioZZ խմբի բավական ծանրաձայն «Դեպուտատի տատին»՝ քաղաքական երգիծանքի մի իսկական գլուխգործոց: 2016-ին, Սասնա Ծռերի հետ կապված դեպքերից հետո, «Որդան Կարմիր» խումբը գրեց «Քայլ արա» երգը, որում տողեր կային Հաց բերողի՝

↑ Զոմբիներ

← Մհեր Մանուկյան



Արթուր Սարգսյանի և Սարի Թաղում ոստիկանության գործողությունների արդյունքում աչքը կորցրած երեխայի մասին: Երգի ծանր «մետաղյա» ռիֆերը լսելիս զգում ես այն հուսահատ լարումը, որը տիրում էր Երևանի փողոցներում այդ ամառ: Մոտավորապես նույն օրերին յութուբում հայտնվեց Դինջիզ խմբի թերևս ամենահեղափոխական երգը՝ «Ողջույնը»՝ յուրահատուկ համագործակցություն Չարենցի հետ, որի արդյունքում նոր կյանք տրվեց «Ամբոխներին խելագարված»:

Սակայն Ռոքի բողոքը երբեք չի եղել միայն քաղաքական: Միք Ջագերից և Ջիմ Մորիսոնից մինչև գլեմ, փանք և գրանջ, ռոքերների մեջ միշտ լինում են մարդիկ, ովքեր ըմբոստանում էին քաղքենիության դեմ, քարոզում ազատություն ամեն ինչում, անգամ եթե դա նշանակում է դեմ գնալ արմատացած պատկերացումներին և դառնալ «ապիտակ ագռավ»: Հայկական ռոքն այդ առումով ևս ունեցել է իր խռովարարներին, ովքեր մարտահրավեր են նետել ընդունված նորմերին: Այդ առումով ամենաարմատականներից մեկը եղել է «Ինցեստը»՝ չորս երիտասարդ աղջիկներից կազմված մի խումբ, որը կատարում էր խիստ պրովոկացիոն բնույթի փանկ: Ճիշտն ասած, ինձ համար մինչ այժմ առեղծված է մնում, թե ինչպես վաղ 2000-ականների Հայաստանում կարող էր գոյություն ունենալ բոլոր հնարավոր կարծրատիպերը ոտնահարող նման մի խումբ: Ամեն դեպքում, «Ինցեստի» և նման պրոյեկտների գոյությունը հայկական ռոք-բեմում ոչ միայն հաճելիորեն զարմացնում է, այլև հույս է ներշնչում ժանրի ապագայի համար:

***

Ապստամբ ռոքի թեման անսպառ է: Այնպես որ, սիրելի ընթերցող, խնդրում եմ ներիր մեզ, որ չկարողացանք խոսել շատուշատ երաժիշտների և խմբերի մասին, որոնց մասին խոսելն անհրաժեշտ էր: Այսպես, չխոսեցինք հակագլոբալիստական շարժման երգիչներ Rage Against the Machine խմբի մասին: Չխոսեցինք նրանց ընկերների և մեր հայրենակիցների՝ System of a Down-ի քաղաքական ակտիվիզմի մասին և երևանյան համերգի մասին: Չխոսեցինք այնպիսի անվախ ռոք-ապստամբների մասին, ինչպիսիք են խորհրդային տարիների լենինգրադյան ռոք-ակումբի անդամները և իսլամիստների «սրբազան պատերազմի» թիրախ դարձած մալիական Tinariwen խումբը: Չխոսեցինք նաև շատ ուրիշների մասին: Բայց, ոչինչ, համոզված եմ դեռ կլսեք նրանց և շատ ուրիշ բողոքավոր ռոքերների մասին: Չէ՞ որ ռոքերների մոտ աղմկելը բավական լավ է ստացվում՝ բառիս բուն և փոխաբերական իմաստով:

Միխայել Զոլյան



SOAD

ԻՍՏՆԵՐԸ.
«ՄԵԿ ԷԼ ԴՈՒՐՍ ԵԿԱՎ ՍԵՐԺԸ...»

Ձեռքից ձեռք փոխանցվող առաջին պիրատային կասետները, հանդիպումները կուռքերի հետ ոչ պաշտոնական այցերի ժամանակ, երևանյան համերգի անվերջ սպասումները և Սերժի «բարև, ազիզ ջան»-ը. շփվել ենք Սիսթեմ օֆ ը Դաունի ամենահին երկրպագուների հետ, որոնք հիանում էին Լոսի հայերի խմբի արածով դեռ մինչև Toxicity-ն ու Aerials-ը:







ԷԴԳԱՐ ԲԱՐՍԵՂՅԱՆ,
ֆոտոլրագրող

SOAD-ի մասին իմացա 1998-ին, երբ ընկերներիցս մեկը՝ Ասպետը, խմբի դեմո ձայնագրությունն էր բերել կասետով: Իրենց առաջին ձայնագրությունն էր, 4 երգ կար վրան: Նման երաժշտություն 98-ին դժվար էր պատկերացնել, նորույթ էր ու շատ տպավորիչ, այն էլ՝ ստեղծված հայերի կողմից: Ասպետն էդ կասետը շատերին բաժանեց ու էդպես բոլորով լսում էինք, քննարկում ու հասկանում, որ մի նոր խոսք ենք բացահայտել ռոքում, որ Նիրվանայից հետո ոչ ոք չէր արել:

Այդ կասետից հետո արդեն սկսել էինք հետևել SOAD-ի գործունեությանը, նոր ձայնագրությունները գտել, լսել, քննարկել ու բախտավոր էինք համարում մեզ, քանի որ այն սերունդն էինք, որ SOAD-ի ամենանոր գործերը լսում էինք հենց թողարկման օրը: Ոգևորիչ էր, որ հայ են, դա մեզ համար խթան հանդիսացավ, որպեսզի գտնենք այլ հայերի, ովքեր ռոք կամ մետալ են նվագում ու ի ուրախություն մեզ՝ պարզվեց, որ այդպիսիք շատ էին: Մինչ էդ մեզ թվում էր, թե տենց մի 300 հոգի հայ կա, որ հետաքրքրվում էր մետալով, բայց պարզվեց, որ հայերն ամեն տեղ կարողանում են լավ երաժշտություն ստեղծել: Նաև շատ էինք ուզում, որ SOAD-ը համերգով գա Հայաստան:

Օրերից մի օր լուր հասավ, որ Սերժը հենց հիմա Երևանում է՝ «Դոլմամայում», եկել է սիրած աղջկան տանելու: Աշխատանքի էինք: Մի քանի ընկերներով մեզ դուրս գցեցինք ու շատ արագ հասանք Աբովյան-Պուշկին խաչմերուկ՝ առանձնապես որևէ հույս չունենալով, որ լուրը ճիշտ է: Եվ մեկ էլ դուրս եկավ Սերժը: Անբացատրելի զգացումներ էին: Չէինք հավատում, որ իրական է, որ մեր կողքին է: Դե, էն ժամանակ ինֆորմացիան քիչ էր, անգամ չգիտեինք՝ հայերեն խոսում է, թե չէ: Ասեցինք «hello Serj», ինքն էլ թե՝ «բարև, ազիզ ջան»: Անսպասելիորեն հաճելի էր նրանից այդքան հայավարի ողջույն լսելը:

Այդ օրն իր հետ նկարվեցինք, մինչ օրս պահում եմ, շատ թանկ դրվագ է: Մի քանի տարի հետո աղմուկ բարձրացավ, որ նորից եկել են, արդեն խմբով ու «Էրեբունի» հյուրանոցում են մնում: Էդ ժամանակ չկարողացա գնալ, բայց շատերը սպասել էին ու հանդիպել իրենց: Էդ օրվանից սկսեցին հաճախ հնչել հարցեր, թե ե՞րբ ի վերջո հանդես կգան համերգով Հայաստանում: Ինքս էլ բազմիցս փորձել եմ նպաստել դրան, հող նախապատրաստել, բայց դե, նման համերգ կազմակերպելու համար մեծ ֆինանսական միջոցներ էին պետք, իսկ այդ ժամանակ Հայաստանում ռոք համերգին նման միջոցներ չէին հատկացվում: Բազմաթիվ այլ դրվագներ են եղել, հիշում եմ, թե ինչպես մի ուրիշ այցի ժամանակ ժամեր շարունակ «Մարիոտի» մոտ սպասեցինք, որ տղաներն իջնեն, զրուցենք իրենց հետ: Ու ինձ ամենից շատ ապշեցնում էր այն, թե որքան հասարակ էին իրենք շփվում ու չէին տառապում աստղային հիվանդությամբ:

2009-ին «Մոսկվա» կինոթատրոնի դահլիճում Սերժի՝ Օքլենդի ֆիլհարմոնիկի հետ համերգի դիտում կազմակերպեցի: Իհարկե շատ հիասթափեցնող էր, որ ոչ թե համերգ է, այլ տեսագրության դիտում, բայց դա առիթ հանդիսացավ, որ SOAD-ի տղաներն իրենք էլ տեսնեին, որ այստեղ լսարան ունեն ու կա մեծ հետաքրքրություն իրենց երաժշտության հանդեպ:

Հետո Սերժի համերգն էր ԹՈՒՄՈ-ում, որը բավականին տպավորիչ էր, բայց դե ոչինչ չի համեմատվի 2015-ի համերգի հետ: Ես այդ ժամանակ որպես ֆոտոլրագրող վազվզում էի մի իրադարձությունից մյուսը: Իսկ այդ օրը կար մի հատիկ կարևոր իրադարձություն՝ SOAD-ի համերգը Հանրապետության հրապարակում: Վազելով ինձ գցեցի հրապարակ, հետո անձրև եկավ: Ես էդ անձրևին շատ շնորհակալ եմ՝ մարդկանց սղլիկ էր դարձրել ու հնարավոր էր ամբոխի միջով արագ-արագ տեղաշարժվել, հասնել մինչև բեմ, լուսանկարել տարբեր դիտանկյուններից: Դա անմոռանալի օր էր: Մինչ օրս էլ SOAD լսում եմ հաճույքով ու ամեն անգամ վերապրում եմ այն սրտատրոփ վիճակը, երբ Youtube-ում հայտնվում էր իրենց նոր տեսահոլովակը:



ՍԵՐԳԵՅ YEREVANTROPICS ՆԱՎԱՍԱՐԴՅԱՆ,
դիզայներ

Կար ժամանակ, երբ ինտերնետ ունենալը մեծ արտոնություն էր: Էդ ժամանակ երևի մի հիսուն հոգի կլիներ Երևանում, որ ունեին դրանից: Մեկը ես էի: Այ էդ մարդիկ ունեին կապ մնացած աշխարհի հետ ու էդտեղից էին իմացել, որ Ամերիկայում կա տենց մի հատ կտցրած գազան հայերի խումբ: Մոտավորապես նույն ժամանակ ստեղ հասավ առաջին ալբոմը, էն ձեռք ա նկարած շապիկին: Մեկը բերել էր ու հերթով բոլորի համար սիդիների վրա գրում տարածում էր: Ես կարծեմ «Օսկարից» էի առել: Ձայնագրում էին, մի հատ էլ ահավոր որակի թղթի վրա նկարն էին տպում, ու պատրաստ էր: Կասետն էլ կարելի էր գտնել Երիտասարդականում, հիմիկվա քսերոքսնոցների տեղում մի քանի շատ լավ կետ կար: Ես էդ ժամանակ ռոքոտ փուլում էի: Ու հիշում եմ, որ շատ տպավորված էի Սիսթեմի նոր, լրիվ ուրիշ սաունդով: Նման չէր մեր լսած ռոքին, թարմ էր: Հայկական էլեմենտներն էլ իրանց հերթին:



Հետո՝ Toxicity-ն նոր էր դուրս եկել, իմացանք, որ Սերժ Թանկյանը, Շավոյի ու իրանց պրոդյուսերի հետ գալիս են Երևան: Կարծեմ Սերժն առաջին անգամ էր ընդհանրապես, դե Շավոն երևանցի էր, իրա համար բացահայտում չէր: Բայց գլխավոր նպատակը ստեղի ֆանատներին տեսնելն էր, մի քիչ էլ անկախ Հայաստանը տեսնել: Աբովյանում տուն էին վարձել՝ հիմիկվա կաֆե Ցենտրալի շենքի երկրորդ հարկում: Մեզ մի քանի հոգով գտան, կանչեցին: Ես էլ որպես Սիսթեմի պատվավոր ֆանատ դրանց թվում էի: Ահագին նստեցինք, Սերժը վերջին մի 15 րոպեն մտավ, սաղիս ողջունեց, լավ-լավ բաներ ասեց, նկարվեց, ու գնաց: Իսկ ես էն տարիքում էի, որ սիրած աստղին հանդիպելը շատ մեծ բան էր: Ֆոտոն ունեմ պահած: Հետո մի քանի անգամ էլ գնաց եկավ ու կար մարդկանց մի շրջանակ, որոնք իրան գիտեն այ էդ ժամանակներից:

Պարբերաբար էդ թեման էր բարձրանում, թե՝ հեսա-հեսա գալու են, բռնվեք: Էնքան չեկան, որ 2005 թվին ես հելա գնացի Բեռլին, որ իրանց վերջապես լայվ լսեմ: Էդ Mezmerize/Hypnotize-ի տուրն էր, այսինքն իրանք ամենապիկում էին ու դրանից հետո ուղղակի ցրվեցին: Առաջին անգամ էի էդ կարգի համերգին, լրիվ ցնդած վիճակ էր:

Չնայած դե 15 թվին որ եկան, շատ լավ եկան: Չնայած ուշոտ էր: Հիմա հասկանում եմ, որ էդ լուրջ, բարդ հարց ա, ֆինանսներից ա կախված, մենեջմենթից, լեյբլից ու էլի հազար բանից: Մյուս կողմից՝ Հայաստանի համար, եթե ուզեին, կարային արտահերթ մի բան անեին, եսիմ: Բայց չեմ փնթփնթում, որովհետև էդ ուշացած համերգը մեկ ա՝ բոմբ էր:

ՄԻՔԱՅԵԼ ՋՈՒՅԱՆ,
երաժշտասեր, պատմական գիտությունների թեկնածու

Ընկերներից մեկի՝ Ասպետի հայրը Կանադայում էր աշխատում, ու մի օր իր մոտ մի կասետ հայտնվեց, որն էլ տվեց ինձ լսեմ: Ինչ-որ ռոք խումբ էր, հայեր էին: SOAD-ի կասետն էր, առաջին ալբոմից սինգլ էր, մինչև հիմա պահել եմ, տանը մի տեղ գցած է: Հա, ես էն քիչ մարդկանցից եմ, ով SOAD դեռ կասետով է լսել: Բայց այն ժամանակ ես այդքան չտպավորվեցի: Դե հայերը սիրում են պեղել, գտնել դրսում ինչ-որ ոլորտներում աչքի ընկած հայերի: Ես իրենց էլ այդ կոնտեքստում ընկալեցի, մտածեցի՝ դե Ասպետի ծանոթներն են երևի: Լսեցի ու մոռացա դրա մասին: Ավելի ուշ ընկերներից մեկը՝ Հայկը, որին բոլորը գիտեին որպես Պռոդ (որովհետև Փրոդիջիի համար մեկ ֆանատն էր) ու ով հայտնի էր բավական առաջադեմ երաժշտական նախասիրություններով, գրպանից mp3 փլեյեր հանեց ու SOAD-ի Chop Suey-ը միացրեց: Ես այդ օրը բացահայտեցի միաժամանակ SOAD-ին ու mp3 նվագարկիչը որպես այդպիսին: Շատ էի տպավորվել ու նույնիսկ չկապեցի դա նախկինում լսածիս հետ, յուրահատուկ էր, նոր էր: Ոգևորիչ էր նաև իրենց հայ լինելու փաստը: Դրանից հետո արդեն սկսեցի գտնել այլ երգեր, գնել ձայնասկավառակներ ու լսել:



Ժամանակ առ ժամանակ նաև ինչ-որ իրեր էի ձեռք բերում իրենց հետ կապված: Դրամապանակս, որն արդեն 15-ից ավելի տարի ինձ հետ է, առանձնահատուկ է ինձ համար հատկապես նրանով, որ դրա վրա SOAD-ի տղաների մի նկարազարդում է, որը ես նախկինում ոչ մի տեղ չեմ հանդիպել: Կար շրջան, երբ այն նոր էր, ու բոլորը ոգևորվում էին այն տեսնելով, հետո հնացավ, մաշվեց ու բոլորն ասում էին՝ նոր դրամապանակ գնելու ժամանակն է, իսկ հիմա այն բոլորի ուշադրությունը գրավող անտիկվարի նման մի բան է, չնայած որ շատ է մաշվել, մեջից ամեն ինչ թափվում է:

2000-ականների սկիզբն առհասարակ բավական տխուր էր հայկական երաժշտության առումով: Ցանկացած հայկական կապվում էր հնի, ավանդականի, պահպանողականի հետ, իսկ SOAD-ը թե՛ հայկական էր ու թե՛ ժամանակակից: SOAD-ը կոտրում էր այդ կարծրատիպը:

Հավես էր նաև, երբ Հայաստանից դուրս իրենց ճանաչում էին ու գիտեին իրենց հայ լինելու փաստը: Նման դրվագ ունեցա Պետերբուրգի ռոք խանութներից մեկում: Հիշում եմ նաև Իտալիայում ակումբներից մեկում SOAD-ի տակ պարող բազմությունն ու իմ հպարտ կեցվածքը: Մի օր էլ մի թուրք ուսանող ասաց, որ շատ է սիրում իրենց ու շատ է ափսոսում, որ քաղաքական հայացքներից ելնելով Թուրքիայում համերգով հանդես չեն գալիս: Ես այդ ժամանակ լռեցի, չասացի, որ Հայաստան էլ դեռ չեն եկել:

Իհարկե, իրենց Հայաստան գալու պահը հասունանում էր: Ժամանակ առ ժամանակ լուրեր էին պտտվում, թե գալու են, կամ եկել են: Ես այդ հանդիպումների մասին ուշ էի իմանում, չէի գնում: Բայց, բարեբախտաբար, ես եղել եմ 2015-ի համերգին: Առանց կեղծ համեստության ասեմ, որ շատ երկրներում եմ եղել, ճանապարհորդել, սովորել և այլն, ու նաև շատ-շատ համերգների եմ եղել, բայց 2015-ի համերգն ինձ համար շատ հատուկ է:

Նախ էդ համերգի միջոցով մենք բացահայտեցինք, որ կա մի քանի տասնյակ հազար մարդ, որ սիրում է SOAD: Էդ համերգի շնորհիվ Հայաստանում երիտասարդությունը հասկացավ, որ ինչ-որ բան է փոխվել ու որ գոյություն ունեն հազարավոր լավ մարդիկ էս երկրում, որոնց հետ կարելի է շփվել, որոնք նույն երաժշտությունն են լսում: Հիշում եմ, որ երբ դեռ հրապարակ չէինք մտել, այգում ինչ-որ մարդիկ էին նստած, կիթառ էին նվագում, էդ երևի առաջին անգամն էր, որ ես զարմացա, ու ինքս ինձ մտածեցի՝ էս Հայաստանո՞ւմ ենք գտնվում, էս ամենը ստեղ է՞ կատարվում: Հետո արդեն ավելի հաճախ եմ ունեցել էդ զգացումն ինչ-որ այլ համերգների, ռեյվերի ժամանակ, բայց էն ժամանակ նոր էր:

Մի անձնական հարց էլ կար: Համերգից մի 10 օր առաջ էի ամուսնացել ու այդ օրերին պիտի լիներ իմ մեղրամիսը, որը ես հետաձգեցի հենց համերգի համար: Կինս իր գործերով Մոսկվա գնաց, ես էլ համերգ: Հետո ամուսնալուծվեցինք: Բայց համերգ գնալը ճիշտ էր, թե չէ հիմա կլինեի և՛ ամուսնալուծված ու և՛ համերգին գնացած չէի լինի:

Շատ ուժեղ փորձառություն էր: Անձրև էր, բաճկոնս էնպես էր թրջվել, որ մի քանի օր չորանում էր, բայց էմոցիաներս այնքան մեծ էին, որ ամեն բան արժեր դրան: Մի քանի ուժեղ պահեր կային, օրինակ երբ «Ղափաման» երգեցին, ու տեղ-տեղ մարդիկ շուրջպար կազմեցին : Այդ շրջանում Կալիֆորնիայում էինք հավաքվում ու SOAD-ի կամ ազգային երգերի տակ պարում, ու այդ պահին հրապարակում այնպիսի տպավորություն էր, որ Կալիֆորնիան է ընդարձակվել ու արդեն մի 50 հազար մարդ կա:



ՌՈՒԲԵՆ ՎԱՐԴԱԶԱՐՅԱՆ,
քոփիռայթեր

2003-ին էր, երբ առաջին անգամ SOAD լսեցի ռադիոալիքներից մեկով: Հաղորդավարը հայտարարեց, թե այժմ կլսեք մեր հայրենակիցներին Լոս Անջելեսից, ովքեր պայթեցրել են մետալ աշխարհը: Chop Suey-ը միացրեցին ու ես տեղիցս վեր թռա. ֆանտաստիկ էր, հզոր ու ոչ մի բանի նման: Զգացողություններս՝ հիացմունք, մեծ հիացմունք ու ցանկություն՝ լսելու տղերքի մյուս բոլոր կատարումները:
Հաջորդ օրը գնացի Աբովյանի «Դիսկ վորլդ» խանութը: Ոչ կասետ կար, ոչ դիսկ, նույնիսկ չգիտեին իրենց մասին: Հետո էլի մի քանի տեղ գնացի՝ չկար ոչ մի տեղ: Միայն ինտերնետով կարողացա մի քիչ լսել: Շատ թույլ կապ էր, ամեն երգը 2 սեմեստր ներբեռնվում էր, անտանելի էր: Նոր մի ութ ամիս հետո առա կասետը: Հայ լինելու փաստն ընդհանրապես կարևոր չէր, ես մետալի ֆանատ էի, եմ: Ինձ ծնկի էր բերել զուտ իրենց երաժշտությունը: Նոր բան էր:
2015-ին անասելի ուրախացա, երբ իմացա, որ իսկապես գալիս են Հայաստան: Իսկ մինչ այդ, պարբերաբար լցվում էի հույսով, հետո հուսահատ լինում՝ հերթական անգամ իմանալով, որ կեղծ լուր է ու չեն գալու: Էդ համերգի օրը ես շատ մռայլ ու ընկճված տրամադրություն ունեի: Մի կերպ տնից դուրս եկա, որ գնամ համերգի: Հա, որքան էլ պարադոքսալ ինչի, ես բավականին անտարբեր տրամադրությամբ սկսեցի ու ավարտեցի էդ օրը: Շատ վատ հոգեվիճակում էի, նույնիսկ SOAD-ի այցն էդ ժամանակ ինձ չէր ուրախացնում: Ինչ արած:





ԱՐՍԵՆ ՀԱԿՈԲՅԱՆ,
SS մասնագետ

Կարծեմ 1997-ն էր, որ ծանոթացա SOAD-ի հետ: Հիշում եմ, որ դրանից մոտ մի տարի անց խումբը թողարկեց իր առաջին համանուն ալբոմը: Իսկ 97-ին ընկերոջս՝ Ասպետենց տան հերթական հենգաութներից մեկի ժամանակ ոգևորված տեղեկացրեց, որ նոր հայկական խումբ է հայտնվել Լոսում, ու metal են նվագում (մենք էլ էդ ժամանակ ու metal շատ էինք լսում, Korn, Coal Chamber, Deftones, Head Pe և այլն) ու որ արդեն լավ աղմուկ են հանել ու ցույց տվեց Ամերիկայից իրեն ուղարկած կասետը: Խմբի պաշտոնական դեմոթեյփերից մեկն էր, վրան Sugar երգի դեմոն ու ևս մեկ կամ երկու գործ: Բացի էդ կասետից խմբի պրոմո նկարներ էին ուղարկել ու խմբի լոգոյով սթիքերներ: Երևի հենց խումբն էր իրեն ուղարկել, որ Հայաստանում տարածի: Ահագին ժամանակ սենյակիս պատին կպցրած էին (հիմա մեծ արժեք կունենային Ebay-ում):
Էդ օրվանից ուշադիր հետևում էինք SOAD-ին, տարածում խմբի մասին խոսքը երևանյան ռոքասերների շարքերում ու ուրախանում իրենց հաջողություններով: Օրինակ, երբ իմացանք, որ Slayer-ի հետ տուր են պատրաստվում գնալ, կամ որ Ռիք Ռուբինի պես լեգենդար պրոդյուսերը զբաղվելու է խմբի առաջին ալբոմի ձայնագրությամբ, շատ ուրախացանք:
Իրականում հայկական խմբի կապը նման անունների հետ արդեն իսկ ապշեցուցիչ էր մեզ համար, դե էն ժամանակ չէինք էլ կարող պատկերացնել, որ հետագայում կդառնան մոլորակի ամենահայտնի ռոք համույթներից մեկն ու նույնիսկ կխավարեն իրենց մեծ բեմ բարձրացրած հսկաների (Slayer-ի) համբավը: Էն ժամանակ նույնիսկ մտավախություն ունեինք, ասում էինք՝ հա, շատ լավ խումբ ա, որակյալ ու հետաքրքիր երաժշտություն են նվագում, բայց դժվար մեծ հաջողությունների հասնեն, քանի որ խմբի անդամների տարիքն արդեն բավականին բարձր է (Սերժն էն ժամանակ արդեն 30 տարեկան էր, ինչը, ենթադրում էինք, արդեն չափազանց բարձր տարիք է սկսնակ խմբի համար): Փաստորեն չարաչար սխալվում էինք: Խմբի դեբյուտային ձայնասկավառակի թողարկումից արդեն պարզ դարձավ, թե ինչ որակյալ խումբ է ու այդտեղից էլ հենց սկսվեց խմբի սրընթաց վերելքը դեպի համբավ:
2015-ի հայաստանյան համերգն ահավոր ուշացած էր, մեր սպասածից մոտ 12-13 տարի ուշացած: Դեռ 2000-ականների առաջին կեսից ի վեր անհամբեր սպասում ու տարակուսում էինք, թե ինչու մինչև հիմա չեն այցելել իրենց պատմական հայրենիքը համերգներով: Հետո տեղեկություն ստացանք, որ խնդիրն իրենց լեյբլի՝ Sony Music-ի հետ է կապված: Կարճ ասած՝ շատ երկար ենք սպասել: Տարեցտարի երբեմն շշուկների ալիքներ էին բարձրանում, թե բա՝ վերջը գալիս են, բայց էդ ալիքները ոնց գալիս, այնպես էլ մարում էին մինչև 2015 թվականի համերգը, որի մասին իմանալը չնայած հիարկե մեծ ոգևորություն պատճառեց, բայց դե արդեն շատ-շատ ուշացած էր: Այդ տարիներին ես ինձ արդեն SOAD-ի ֆան չէի համարում, անցած ճանապարհ էր: Բայց համերգն այնուամենայնիվ ապշեցնող էր, ինչ խոսք:

Հասմիկ Բարխուդարյան

Սա ռոք համերգ չէ, սա վրեժ է

Սարիների սպասում, բակմահկար ամբոխ, շուրջպար, Սարդարապատի կանգեր, անջրև, կայծակ ու ռոֆ. ԵՐԵՎԱՆ-ը կրուցել է 2015 թվականի ապրիլի 23-ին տեղի ունեցած System of a Down խմբի երևանյան համերգի կազմակերպիչ Արման Ճապուրյանի և Հայոց ցեղասպանության 100-ամյակի միջոցառումների կազմակերպման մեդիա պատասխանատու Հարություն Աբեյանի հետ ու նորից հիշել այդ գժական երեկոն:



Ակզբում տարիների սպասումն էր, թե ե՞րբ են վերջապես գալու Հայաստան: Հետո խումբը ցրվեց, հետո վերամիավորվեց, բայց միայն համերգների համար: Մի քանի շրջագայություն՝ առանց մեզ: Հետո արդեն պաշտոնականի նման մի լուր եղավ: Հետո՝ նշվեց խմբի կայքում: Հետո հայտարարվեց օրը՝ ապրիլի 23, Եղեռնի 100-րդ տարելիցի նախորդ օրը: Այն էլ որտեղ՝ Հանրապետության հրապարակ, երկրի կենտրոնում: Այո՛, պաշտոնական տեղեկություն է, բայց հա՞ որ, միևնույն է՝ անհնար է թվում: Երբ ոստիկանության ներկայացուցիչը շփոթված բացատրում է, որ «Սիստըմ օն Դաուս» խմբի համերգը կսկսվի «Քսան զրո-զրոյին», այնքան զվարճալի է ամեն ինչ, որ մտածում ենք՝ չէ, հաստատ լինող բան չի: Բայց օրը մոտենում է, հրապարակում սկսում են բեմ հավաքել: Ոմանք փնթփնթում են՝ է թող էն ժամանակ գային, բայց մեկ է՝ այդ երեկոյի համար ոչ ոք ուրիշ պլաններ չի գծում: Խելոքները ստուգում են օրվա եղանակի տեսությունը: Հետո քաղաքի տարբեր կողմերից ռոքասերների ամբոխները գալիս հասնում են Հանրապետության հրապարակ: Հարմար տեղեր են փնտրում, նստում են, սպասում են, սպասում: Հետո անձրևն է սկսվում, ովքեր չէին ստուգել տեսությունը, նախանձով նայում են անձրևանոցներով ծածկվածներին: Մի ժամ, երկու ժամ... Հետո բոլոր լույսերը հանգչում են: Հետո Տարոնը գոռում է «Հայաստաաաան» ու հրապարակը պայթում է: Մյուս երկուս ու կես ժամերը պատմություն են դառնում՝ շուրջպարով, «Հեյ ջան ղափամա»-ով, Տարոնի «It's good to be back home»-ով, գլուխը թափահարելուց բռնված վզերով, հայաստանցիներին նախանձող վրացի ու ուկրաինացի զբոսաշրջիկներով, Aerials-ի ժամանակ Շավղոյի հետ հավասար երկնքում փայլատակող կայծակով ու պարզապես գժական երաժշտությամբ:

«Լավ է նորից դրանը լինել»

2015-ին Հայաստանն ու աշխարհի բոլոր հայերը պատրաստվում էին Հայոց ցեղասպանության 100-րդ տարելիցին: Դրա ճանաչման համար իր գոյության ընթացքում այդքան բան արած ամերիկահայ մետալ խմբի առաջին հայաստանյան համերգը միջոցառումների շարքի մի մասն էր միայն: Այդ ժամանակ Հայոց ցեղասպանության 100-ամյակի միջոցառումների կազմակերպման մեդիա պատասխանատու Հարություն Աբեյանն ասում է, որ այս համատեքստում SOAD-ի

համերգը ևս մեկ անգամ հանրահռչակում էր Հայոց ցեղասպանության ճանաչման կարևորությունը.
«Երբ նախապատրաստվում էինք միջոցառումներին, մեր առաջ հստակ խնդիր ունեինք՝ հանրահռչակելու յուրաքանչյուր օրվա իրադարձությունը, քանի որ Թուրքիան կրկին զբաղվում էր հակաքարոզչությամբ,– հիշում է Կբեյանը,– մենք պետք է ապահովեինք միջոցառումների հասանելիությունը համաշխարհային լսարանի համար՝ համագործակցելով աշխարհում հայտնի լրատվամիջոցների հետ: Այս միջոցառումների շարքն ասես քննություն էր Հայաստանի համար որպես պետություն և մենք աշխատում էինք վայրկյանների ճշգրտությամբ»:
Այդ աշխատանքի կարևորագույն բաղադրիչներից մեկը տեղեկության սփռումն էր. հանձնաժողովը կապ էր հաստատել աշխարհի խոշորագույն լրատվամիջոցների հետ ու միջոցառումներից շատերը տեսել էին աշխարհի տարբեր ծայրերում բնակվող հեռուստադիտողները: Բայց ոչ Սիսթեմի համերգը: Այն հեռուստատեսություն չհասավ: Բայց դա արդեն անարդար էր ստացվում հայկական մեդիաների նկատմամբ:
«Հեռարձակման սահմանափակումների մասին մենք տեղեկացանք համերգից մեկ օր առաջ և սկսեցինք ակտիվ

բանակցել խմբին ներկայացնող կազմակերպության հետ, որպեսզի կարողանայինք հեռարձակել այն զոնե տեղական ՁԼՄներով և ուղիղ եթերներով,– հիշում է Կբեյանը։– Ի վերջո, նրանք էլ հասկացան, որ սա իրենց հերթական ելույթը չէր, այլ ուներ հստակ բովանդակություն և կարևորություն»։ Չնայած համերգի հեռարձակումը թույլատրված էր տեղական ցանցերով, միջոցառումից երկու շաբաթ անց համերգի ողջ ընթացքը բարձր որակով նկարահանված տարբերակով տեղադրվեց Rolling Stone ամսագրի յութուբյան ալիքում և միայն այդ ժամանակ հնարավոր եղավ համերգը հասանելի դարձնել միլիոնավոր լսարանների համար։

«Հայաստան, մենք եկել ենք ու չենք գնալու»

Մինչև հիմա հիշում եմ այդ օրվա բոլոր մանրամասները, մինչև անգամ այն, թե ինչ կար պայուսակումս, որովհետև նախքան Հանրապետության հրապարակ հասնելը անհրաժեշտ էր մի քանի անգամ անցնել անվտանգության աշխատակիցների հսկիչ սարքերի կողքով ու ցուցադրել ամբողջ ունեցվածքը։

Երբ պարզվեց, որ ես և ընկերներս մեր պայուսակների եղած-չեղածով վտանգ չենք ներկայացնում, կարողացանք զբաղեցնել մեր տեղը դիմացի շարքերում: Մեկ շնչին՝ հինգ նախկին սեր. ոնց պտտվում էիր, մի ծանոթ դեմք էիր տեսնում: Համերգի կազմակերպման մասին Արման Ծատուրյանն էլ խոսում է այնպես, ասես երեկ էր: Հիշում է ամենայն մանրամասնությամբ, թե երկու ամիս տևած նախապատրաստական աշխատանքներն ինչ մարտահրավերներ ու դժվարություններ ունեին: Ի տարբերություն նախորդ համերգների՝ System of a Down-ը Հայաստան բերելը կրկնակի պատասխանատու էր, թեև Ծատուրյանն արդեն մեծ փորձ ուներ՝ ուսանողական տարիներից եփվել էր ոլորտում, հետո եղել բազմաթիվ միջոցառումների, այդ թվում՝ նույն հրապարակում Անկախության մի քանի տոնակատարությունների պատասխանատուն:
«Կարճ ասած, նախքան SOAD-ի համերգի կազմակերպումը ես պատրաստվածություն էի անցնել,– ասում է Արմանը:– Երբ ստացա առաջարկը, ես հստակ տեսնում էի բեմը՝ իր բոլոր դետալներով: Ես գիտեի՝ ինչ պետք է անել»:

Ավստրիայից բերված ճաղեր ու 120 էջանոց սեյսմիկ հաշվետվություն

Բանակցություններից հետո երկրորդ փուլը տարածքի ընտրությունն էր: Հանրապետության հրապարակը պետք է ընդուներ 50 հազարից ավել ջահել-ջիվանի, ուստի անհրաժեշտ էր կառուցել բեմն այնպես, որ տեխնիկական ապահովածությունը լիներ անխափան: Համերգի բեմն իր կառուցված չափերով աննախադեպ էր՝ նախկինում այդքան մեծ տարածք չէր հատկացվել որևէ համերգի, ուստի և՛ տեխնիկական, և՛ այլ ռայդերները (արտիստի պահանջները՝ ելույթի կազմակերպողից) ավելի խիստ էին և որոշ տեղերում՝ անզիջում:
«Մենք աշխատում էինք խստապահանջ կողմի հետ և պետք էր ամեն բան կազմակերպել ըստ իրենց ռայդերների: Որոշ տեղերում փորձում էինք բանակցել, բացատրել, որ Հայաստանի նման փոքր երկրի համար թելադրած պայմաններն իրականացնելը բարդ կլինեն, սակայն կային դեպքեր, երբ իրենց պահանջներին որևէ այլընտրանք պարզապես չէր ընդունվում»,– պատմում է Արմանը:
Խումբը ներկայացնող կազմակերպության ռայդերների համաձայն կառուցվեց մեծ և ընդարձակ բեմ, Հանրապետության հրապարակի տարածքն ապահովվեց բարձր հոսանքային միացումներով ու լուսային սարքավորումներով, բեմը պաշտպանող երկաթյա ճաղերը բերվեցին Ավստրիայից, ձայնային տեխնիկայով և այլն: Բացի տեխնիկական ռայդերներից հայկական կողմը համերգի նախապատրաստական փուլում ներկայացրեց նաև 120 էջանոց հաշվետվություն բեմի սեյսմակայունության ու տարածքի ընդհանուր աշխարհագրության մասին:

«Դիմում եմ մեկ սպանողներին»

Կենդանի համերգներում միշտ կարևոր է ոչ միայն երգերի ընտրությունն ու կատարողի վարպետությունը: Մի ելույթը մյուսից տարբերող փոքր, բայց կարևորագույն տարրերից են հանդիսատեսին ուղղված խոսքերը և ահա դրանք կարող են փոփոխվել կախված միջոցառման աշխարհագրությունից: Իսկ քանի որ Սիսթեմը գտնվում էր պատմական հայրենիքում, այստեղ կապը խմբի ու բազմահազար ամբոխի միջև լրիվ ուրիշ էր: Օրինակ, կարծես ավելի շեշտելու, որ սա շատ ավելին է, քան հերթական երաժշտական երեկոն, Տարոնն արդեն առաջին կատարումից առաջ (պատահական չէր, որ դա Մեծ եղեռնին նվիրված Holly Mountains-ն էր) բեմից դիմում է «մեր թշնամիներին», թե սա համերգ չէ, այլ վրեժ... Այդպիսի թվացյալ էքսպրոմտային հատվածներ հաջորդ երկուս ու կես ժամվա ընթացքում էլի եղան: Բայց, որքան էլ զարմանալի է, դրանք այդքան էլ ինքնաբուխ չէին. կազմակերպման նախապատրաստական փուլում նման դեպքերն անգամ նախօրոք հաշվարկվել են:

«Ամեն մանրուք հաշվարկված էր, քանի որ գործ ունեինք մարդկանց անվտանգության հետ: Անգամ այնպիսի դեպքերը, որոնք կարող էին անվերահսկելի վարք առաջացնել կամ անկարգություն: Մեր ձեռքի տակ մայրաքաղաքի քարտեզն էր և որոշում էինք՝ որ փողոցներն են անանցանելի լինելու և որոնք ոչ: Հեծանիվ չենք հնարել, այլ հետևել ենք միջազգային ստանդարտներին, որոնք անհրաժեշտ են բացօթյա համերգներ կազմակերպելիս»,– պատմում է Արմանը:







«Զիգյար էն աս պղաչը»

Կբեյանն այսքանից հետո ինքը չի հասցրել լինել այդ օրը հրապարակում, հետևել է համերգին հեռուստատեսությամբ: Պատմում է, որ իր համար կարևոր էր տեսնել, որ համերգը հեռարձակվում է բարձր որակով և տեխնիկական ռայդերներին համապատասխան: Հարցին, թե ինչո՞ւ հենց SOAD-ը, պատասխանը մեկն է՝ ուրիշ էլ ո՞վ, եթե ոչ իրենք.

«Սիսթեմն ազատության խորհրդանիշն էր: Իրենց էներգետիկան փոխանցվում էր ամբոխին և ամբոխն էլ ոգևորված էր՝ անձրևի ու միջոցառման խորհրդի հետ: Ուրիշ էլ ո՞վ, եթե ոչ իրենք կարող էին անել այն, ինչի մասին կխոսվեր ամբողջ աշխարհում»:

Հայոց Ցեղասպանության 100-րդ տարելիցին նվիրված միջոցառումների լուսաբանումն ընդգրկել էր ամբողջ աշխարհը: Միջոցառումների կազմակերպիչներն այսօր անկեղծանում են՝ իրեն գլխավոր նպատակին կարողացել են հասնել, քանի որ ամբողջ համաշխարհային մամուլը խոսում էր Հայաստանում կատարվելիք իրադարձությունների

մասին և միայն Ադրբեջանական լրատվամիջոցներն են զբաղվում հակաքարոզչությամբ:
Արման Ծատուրյանն այսօր նույնիսկ ավելի համոզված է, որ 2015 թվականի ապրիլի 23-ի անձրևոտ համերգը շատ ավելին էր, քան հայտնի ռոք խմբի հերթական ելույթ. «Մենք ապացուցեցինք, որ ոճրագործությունից 100 տարի անց մենք չենք կոտրվել և շարունակել ենք ստեղծագործել: Ես հետևում էի համերգին նաև եթերում և հասկանում էի, որ կարողացել ենք հեռարձակմամբ փոխանցել էն դրայվը, երբ տեսախցիկները որսում էին անձրևը և բազմահազարանոց ամբոխի ապրումները»:

***

...Հետո գիշերային Երևանն էինք չափչփում՝ թաց ու երջանիկ, ականջներում դեռ շատ բարձր ռոքնռոլի արձագանքն է ու համոզմունքը, որ չէ, սա չէր կարող իրական լինել: Լավ է, որ շուրջդ քո նման հիացած հայացքներով տասնյակ հազարավոր այլ ջահելներ են, ուրեմն մի բան կար այնուամենայնիվ: Ու մտածում ես՝ ուրեմն անհնար ոչինչ չկա:

Շուշանիկ Փափայան

PAN Photo / Վահան Սրբեփանյան, Մինգրան Մեհրաբյան, Հրանտ Ռաչայրրյան, Նարո Սահակյան

Gaudeamus փառատոն, 1994-96թթ.

90-ականների երիտասարդության ամենասիրելի ու ամենամասշտաբային երաժշտական իրադարձությունը՝ «Գաուդեամուս» փառատոնը, որտեղ իրենց առաջին քայլերն արեցին դեռ ձևավորվող ռոք բեմի շատ հայ կատարողներ, հայ-շվեյցարական հասարակական ընկերության «Առագաստ» երիտասարդական ակումբի նախագծերից էր։ Երաժշտական փառատոնի միտքն ընկերությանն առաջարկեց ու կազմակերպումը ստանձնեց Վահան Արծրունին։ Առաջին միջոցառումը՝ Music 5-ը, տեղի ունեցավ 1994-ին ու տևեց 5 օր։ Այն ընդգրկեց բոլոր երաժշտական ժանրերը՝ դասականից մինչև ռոք։ Տեղը Գոյ թատրոնն էր, ժամանակի առաջադեմ երիտասարդության սիրելի վայրերից Երևանում։

Վահան Արծրունու առաջարկով մյուս փառատոնը կազմակերպվեց արդեն ուսանողական հարթակում՝ 12 բուհերի դահլիճներում ու բակերում։ Այդ ժամանակ էր, որ ընտրվեց փառատոնի անվանումը՝ Gaudeamus («Եկեք լինենք երջանիկ»)՝ կրկնելով ուսանողության համաշխարհային հիմներգի առաջին բառը։

Փառատոնը շուտով մեծ թափ հավաքեց, նույնիսկ միջազգային ճանաչում ստացավ ու հյուրընկալեց մոսկովյան Կրեմատորիյ խմբին (խմբի անփոփոխ առաջատարն Արմեն Գրիգորյանն է), ընդգրկեց բազմազան ինքնագբաղ ստեղծագործական խմբերի ու կատարողների, որոնց համար այն դարձավ իրենց ստեղծածը ներկայացնելու միակ ու եզակի հնարավորություն։ Հովհարային անջատումների պատճառով ռոք համերգներից մեկը Կոնսերվատորիայի դահլիճում անցավ մթության մեջ, իսկ գործիքները հնարավոր էր միացնել միայն բենզինային գեներատորի օգնությամբ։

Երկու տարի, չորս փառատոն. մեծ հաջողություն գրանցած Գաուդեամուսը հնարավոր եղավ իրականացնել 1994-1996 թվականներին, մինչ այն պահը, երբ Վահան Արծրունին արդեն զորակոչված էր, ու չէր կարող զբաղվել փառատոնի համակարգման աշխատանքներով։ Ինչպես բացատրում է երաժիշտը, իր զորացրվելուց հետո արդեն ամեն բան այլ էր, և փառատոնը վերականգնել չհաջողվեց։

Վահան Արծրունու արխիվից

evnmag.com
կարդայեք առցանց

The Main
Design Store

@TheMainDesignStore

/

Միեր Մկրտչյան 10
(Միրզոյան գրադարան,
առաջին հարկ)